

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ՈՐՈՇՄԱՍԲ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2008թ. ՄԱՐՏԻ 1-2-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ  
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ  
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ)

ԵՐԵՎԱՆ-2010

## ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2008 թվականի հունիսի 16-ի ԱԺՈՆ-086-4 որոշմամբ ստեղծվեց Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով (այսուհետ՝ ժամանակավոր հանձնաժողով), որի խնդիրն էր ուսումնասիրել 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձություններն ու դրանց պատճառները:

Ժամանակավոր հանձնաժողովը 2009 թվականի սեպտեմբերի 15-ին Ազգային ժողովին ներկայացրեց եզրակացություն իր գործունեության արդյունքների մասին, որտեղ մասնավորապես արձանագրեց, որ իր ներկայացրած առաջնահերթությունների իրացումը կարիք ունի մշտադիտարկման (մոնիթորինգի), իսկ դրանց իրականացման յուրաքանչյուր փուլի և ձեռքբերումների մասին հանրությունը կարիք ունի մշտական տեղեկատվության:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2009 թվականի դեկտեմբերի 12-ի ԱԺՈՆ-183 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) հանձնարարեց իրականացնել ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջարկությունների կատարման ընթացքի մշտադիտարկում (մոնիթորինգ) և արդյունքների մասին մինչև 4-րդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտը յուրաքանչյուր հերթական նստաշրջանում մեկ անգամ ներկայացնել եզրակացություն:

Ի կատարումն Ազգային ժողովի որոշման Հանձնաժողովը կազմակերպեց մոնիթորինգին նվիրված 12 քննարկում (նիստեր, աշխատանքային քննարկումներ, խորհրդակցություններ):

Հանձնաժողովը հստակեցրեց մոնիթորինգի նպատակը՝ ապահովել ժամանակավոր հանձնաժողովի ներկայացրած առաջնահերթությունների իրացման մշտադիտարկումը:

Հանձնաժողովն իր առջև խնդիր դրեց՝ ուսումնասիրել ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջնահերթությունների իրացման ընթացքը, վեր հանել այդ գործընթացին նպաստող (խոչընդոտող) գործոնները և

իրավասու մարմիններին (պաշտոնատար անձանց) ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

Հանձնաժողովը հաստատեց ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված այն առաջարկությունների ցանկը, որոնց առնչությամբ նախատեսվում է իրականացնել մոնիթորինգը և առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով հարցումներ (այսուհետ՝ Հարցում) ուղղեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը<sup>1</sup>(այսուհետ՝ Կառավարություն) և ՀՀ հատուկ քննչական ծառայությանը<sup>2</sup>, որոնց պատասխանները ստացվել են օրենքով սահմանված ժամկետներում<sup>3</sup>:

Կառավարության պատասխանը քննարկվեց Հանձնաժողովի երկու առանձին նիստերում, որոնցից մեկը՝ Ազգային ժողովի երեք մշտական հանձնաժողովի՝ Հանձնաժողովի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում: Քննարկումների արդյունքում ձևավորվեցին նոր առաջարկություններ, որոնք ուղղվեցին Կառավարությանը<sup>4</sup> և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը<sup>5</sup> (այսուհետ՝ Ոստիկանություն):

---

<sup>1</sup> Տես՝ Հավելված 1:

<sup>2</sup> Տես՝ Հավելված 2:

<sup>3</sup> Տես՝ Հավելված 3 և Հավելված 4:

<sup>4</sup> Տես՝ Հավելված 6:

<sup>5</sup> Տես՝ Հավելված 5:

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ մշակել և ընդունել հատուկ միջոցների կիրառման կարգ ու դրանց օգտագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ համապատասխան հրահանգ<sup>6</sup>:

1.1. Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը տեղեկացրեց**, որ Ոստիկանության պետը 2009 թվականի հոկտեմբերի 23-ին ստորագրել է «Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի զինժառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 5-Ն հրամանը, որտեղ ամրագրվել են՝

ա) ոստիկանության զորքերի զինժառայողների կողմից հատուկ միջոցները գործադրելու դեպքերը,

բ) հատուկ միջոցներ գործադրելիս ոստիկանության զորքերի զինժառայողների պարտականությունները,

գ) ակտիվ պաշտպանության և հատուկ միջոցառումների ապահովման միջոցների գործադրման արգելքները,

դ) ոստիկանության զորքերի հրամանատարի կողմից Ոստիկանության պետին և դատախազին հատուկ միջոցներ գործադրելու հետևանքով վիրավորվածների կամ մահվան դեպքերի մասին տեղեկացնելու ընթացակարգերը,

ե) ծառայության վերակարգին հատուկ միջոցներով զինելու թույլատվություն տալու լիազորված պաշտոնատար անձանց շրջանակը,

զ) հատուկ միջոցների օգտագործման նշանակությունը, մարտավարատեխնիկական բնութագրերը, անվտանգության պահանջները,

է) հատուկ միջոցները հատկացնելու և հաշվառելու կարգը:

Միաժամանակ, Կառավարությունը հայտնեց, որ Ոստիկանությունում մշակվել են «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և վերջինիս ընդունմամբ պայմանավորված «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2009

<sup>6</sup> Տե՛ս՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 117 կետ 1:

թվականի ապրիլի 29-ին: Օրենքների նպատակն է ոստիկանության զորքերում պարտադիր զինվորական ծառայությունից աստիճանաբար անցում կատարել պայմանագրային զինվորական ծառայության: Նշված օրենսդրական բարեփոխումների արդյունքում ոստիկանության զորքերի խնդիրների շարքում նախատեսվել է նաև ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը մասնակցելը: Հստակեցվել են ոստիկանության զորքերի գործունեության սկզբունքները՝ ելնելով մարդու սահմանադրական իրավունքների գերակայությունից, ինչպես նաև հատուկ միջոցներ օգտագործելու հրաման տվող պաշտոնատար անձանց շրջանակը և պատասխանատվությունը, զանգվածային հրապարակային միջոցառումների ժամանակ դրանց մասնակիցների կողմից օրինականության խախտումներ թույլ տալու դեպքերում հարկադրանքի միջոցներ կիրառելու իրավական հիմքերը:

**1.2.** Ուսումնասիրելով հատուկ միջոցների գործադրման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը՝ «Ոստիկանության մասին»<sup>7</sup> և «Ոստիկանության զորքերի մասին»<sup>8</sup> ՀՀ օրենքները և «Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի զինծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» Ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանը **Հանձնաժողովը պարզեց**, որ ըստ այդ ակտերի հատուկ միջոցներն են<sup>9</sup>՝

**1) ռետինե մահակները** (հատուկ ռետինե մահակ «ՊՌ-73»՝ նախատեսված է իրավախախտների հարձակումները հետ մղելու կամ նրանց անհնազանդությունը կանխելու համար, հատուկ մահակ «Արգունենտ-4», հատուկ մահակ «ՊՌ-Տոնֆա» ամրանավորված միջուկով)<sup>10</sup> .

**2) արցունքաբեր գազը** (օդակաթիլային փոշեցրիչ (սրվակ) «Ռեզեդա-10Ս»՝ նախատեսված է հասարակական կարգը խախտող խմբերի կամ անհատների նկատմամբ կանխարգելիչ և վնասազերծող գործողություններ իրականացնելու համար, բարձր հզորության և անբեկոր՝ զրգռիչ գործողության ձեռքի նռնակ ՌԳՌ «Ռուլետ ՎՎ»՝ նախատեսված է զրգռիչ նյութերի բաղադրությամբ գազածխային ծածկույթի հաշվին զանգվածային անկարգությունների կանխման և հատուկ միջոցառման անցկացման ժամանակ իրավախախտների հոգեկամային կայունության ճնշման համար,

<sup>7</sup> Տես՝ նշված օրենքի գլուխ 4:

<sup>8</sup> Տես՝ նույնը:

<sup>9</sup> Հատուկ միջոցների՝ ըստ կոնկրետ տեսակների պատկանելիության դասակարգումը պայմանական է, քանի որ օրենսդրությամբ այդպիսի դասակարգումը բացակայում է:

<sup>10</sup> Տես՝ ՀՀ ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանի 24-րդ մաս:

ակնթարթային ազդեցության ձեռքի ծխանոնակ «ՌԴԳ-Մ» (ԴԻՄ)՝ նախատեսված է հատուկ միջոցառումների ժամանակ զինծառայողների գործողությունները քողարկելու և նրանց վրա նշանառու կրակոցները բացառելու համար, ծխանոնակ «ԳԴՄ 40»՝ նախատեսված է հատուկ միջոցառումների ժամանակ զինծառայողների գործողությունները քողարկելու համար, 38 մմ փամփուշտ գազային նռնակով (Չինաստան)՝ նախատեսված է ակտիվ նյութերի (կծու պղպեղ) բաղադրությամբ գազածխային ծածկույթի ստեղծման համար, որը բացառում է իրավախախտների երկարատև գտնվելու հնարավորությունը ծածկույթի տարածքում, ակնթարթային ազդեցության արցունքաբեր օդակաթիլային փոշեցրման սարքավորում «Տյորեն-6» (նռնակ), Ձեռքի անբեկոր արցունքաբեր օդակաթիլային նռնակ «Դրեյֆ» նախատեսված է ակտիվ նյութերի բաղադրությամբ օդակաթիլային ծածկույթի ստեղծման համար, որը բացառում է իրավախախտների երկարատև գտնվելու հնարավորությունը ծածկույթի տարածքում, ձեռքի անբեկոր գրգռիչ օդակաթիլային նռնակ «Դրեյֆ-2»՝ նախատեսված է հատուկ միջոցառումների անցկացման և զանգվածային անկարգությունների կանխման նպատակով գրգռիչ տարրով ակնթարթային օդակաթիլային ծածկույթ ստեղծելու համար:)<sup>11</sup>.

**3) ձեռնաշղթաները** («ԲՌ» և «ԲՌ-Մ»՝ նախատեսված են իրավախախտների ֆիզիկական դիմադրությունը սահմանափակելու համար)<sup>12</sup>.

**4) ուշադրություն շեղող լուսածայնային միջոցները** (18,5x60 մմ լուսածայնային փամփուշտ, ձեռքի լուսածայնային նռնակ «Զարյա-2»՝ նախատեսված է իրավախախտների վրա հոգեֆիզիոլոգիական ազդեցության համար՝ հզոր լուսային և ձայնային ազդակների միջոցով, լուսածայնային նռնակ «Պլամյա»՝ նախատեսված է նույն նպատակի համար, ձեռքի լուսածայնային նռնակ «Ֆակել», ձեռքի լուսածայնային նռնակ «Ֆակել-Մ», լուսածայնային կրակոց «Սվիրել» ԱՍԶ-40, գրգռող լուսածայնային ազդեցության ձեռքի նռնակ «Դրոֆա»)<sup>13</sup>.

**5) արգելքները քանդելու միջոցները**<sup>14</sup>.

**6) տրանսպորտային միջոցների հարկադիր կանգնեցման միջոցները** («ՅՌԺ-Մ»՝ նախատեսված է փոքր և միջին բեռնատարողության բոլոր տեսակի ավտոտրանսպորտային միջոցների կանգնեցման համար, «Զագռադիտել»՝

<sup>11</sup> Տես՝ նույնը:

<sup>12</sup> Տես՝ նույնը:

<sup>13</sup> Տես՝ նույնը:

<sup>14</sup> ՀՀ ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված չեն:

նախատեսված է արգելափակիչների արագացված մեխանիկական բացազատման համար, ունի եռանիստ պրիզմայի տեսք՝ կազմված փշալարային պարույրներից)<sup>15</sup>.

**7) ջրանետեր, զրահամեքենաները** (ջրանետ մեքենա «Լավինա»՝ նախատեսված է հրդեհների մարման և զանգվածային անկարգությունների մասնակիցների առաջընթացը կասեցնելու համար, զրահափոխադրիչ ԲՏՌ-60-80ՊԲ՝ չորս առանցքանի (ութ անիվանի), բոլոր անիվները՝ քաշող, լողացող մեքենա է, որը նախատեսված է 10 հոգանոց հետևակի և գործարանային փաթեթավորմամբ հատուկ միջոցների տեղափոխման համար, մարտական հետախուզական դետրային մեքենա ԲՌԴՄ-2՝ անիվային, լողացող մեքենա է, որը նախատեսված է 6 հոգանոց հետևակի և գործարանային փաթեթավորմամբ հատուկ միջոցների տեղափոխման համար)<sup>16</sup>.

**8) էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ** («ԱԻՌ-107ՈՒ» էլեկտրահարող սարք՝ իրենից ներկայացնում է անմիջական և հեռահար ազդեցության սարք, որը կարող է օգտագործվել նաև որպես մահակ, «ԱԻՌ-107Ու-Ս» էլեկտրահարող սարք՝ անմիջական և հեռահար ազդեցության, փոքր չափեր ունեցող սարք է)<sup>17</sup>.

**9) հատուկ ներկող նյութերը**<sup>18</sup>.

**10) ծառայողական շները**<sup>19</sup>:

Հատուկ միջոցները կարող են գործադրվել օրենքով նախատեսված հետևյալ դեպքերում՝

1) քաղաքացիների, *զինծառայողների*<sup>20</sup> և ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը խափանելիս.

2) ոստիկանության ծառայողին կամ հասարակական կարգի պահպանության և հանցագործությունների դեմ տարվող պայքարին աջակցող, իրենց հասարակական կամ ծառայողական պարտականությունները կատարող անձանց նկատմամբ ցուցաբերվող անհնազանդությունը հաղթահարելիս կամ դիմադրությունը խափանելիս.

3) իրավախախտման պահին բռնված և փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս (*ձերբակալելիս*<sup>21</sup>).

<sup>15</sup> Տես՝ ՀՀ ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանի 24-րդ մաս:

<sup>16</sup> Տես՝ նույնը:

<sup>17</sup> Տես՝ նույնը:

<sup>18</sup> «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքում բացակայում է:

<sup>19</sup> ՀՀ ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված չեն:

<sup>20</sup> Ոստիկանության զորքերի դեպքում:

<sup>21</sup> Ոստիկանության զորքերի դեպքում:

4) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը կամ անձինք պատրաստվում են զինված դիմադրություն ցույց տալ.

5) իրավախախտում թույլ տալու համար բռնված կամ իր անձը ներկայացնելուց հրաժարվող կամ ակնհայտ կեղծ տվյալներ ներկայացնող անձանց ոստիկանություն կամ ծառայողական այլ շինություն բերման ենթարկելիս *(ձերբակալված անձանց Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմիններ բերման ենթարկելիս<sup>22</sup>), ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցելիս կամ նրանց պահպանելիս<sup>23</sup>*, երբ վերջիններիս վարքագիծը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք կարող են դիմել փախուստի, վնաս պատճառել իրենց կամ շրջապատին, անհնազանդություն ցուցաբերել կամ դիմադրություն ցույց տալ ոստիկանության ծառայողին *(երբ նրանք իրենց վարքագծով հիմք են տալիս ենթադրելու, որ կարող են դիմել փախուստի, վնաս հասցնել շրջապատին կամ իրենց կամ դիմադրություն ցույց տալ ոստիկանության գործերի զինծառայողներին<sup>24</sup>)*.

6) առևանգված, ապօրինաբար ազատությունից զրկված և բռնի կերպով պահվող անձանց ու զավթված բնակարանները, շինությունները, տարածքներն ու տրանսպորտային միջոցներն ազատելիս.

7) զինվորական բնակավայրերի, շարժակազմերի և շարասյունների, պահպանվող օբյեկտների, կառույցների և բեռների վրա կատարվող հարձակումները խափանելիս<sup>25</sup>.

8) տրանսպորտի, կապի և այլ կազմակերպությունների աշխատանքը կազմալուծող զանգվածային անկարգությունները և խմբակային գործողությունները խափանելիս *(տրանսպորտի, կապի հիմնարկների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատանքները խանգարող, ինչպես նաև զանգվածային անկարգությունները և խմբակային գործողությունները խափանելիս<sup>26</sup>)*:

9) ավտոտրանսպորտային միջոցը կանգնեցնելիս, երբ վարորդն ակնհայտորեն չի ենթարկվում ոստիկանության ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պահանջին<sup>27</sup>.

10) հանցագործություն կատարող կամ կատարած անձանց հայտնաբերելիս<sup>28</sup>:

---

<sup>22</sup> Ոստիկանության գործերի դեպքում:

<sup>23</sup> Ոստիկանության ծառայողի դեպքում:

<sup>24</sup> Ոստիկանության գործերի դեպքում:

<sup>25</sup> Ոստիկանության գործերի դեպքում:

<sup>26</sup> Ոստիկանության գործերի դեպքում:

<sup>27</sup> Ոստիկանության ծառայողի դեպքում:

<sup>28</sup> Ոստիկանության ծառայողի դեպքում:

Բացի այդ հետևյալ դեպքերում գործադրվում է նաև ոստիկանության զորքերի հաստիքային մարտական տեխնիկան (*մարտական տեխնիկայի կազմը օրենսդրությամբ սահմանված չէ*)

1) պատանդներին, ինչպես նաև զավթված պահպանվող օբյեկտները, կառույցները, բեռները, մարտական տեխնիկան ազատելիս.

2) զինված դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալելիս.

3) զինվորական բնակավայրերի, շարժակազմերի և շարասյուների, պահպանվող օբյեկտների, շինությունների և բեռների, քաղաքացիների բնակարանների, պետական մարմինների շենքերի, հիմնարկների և կազմակերպությունների վրա խմբակային, զինված կամ տրանսպորտային միջոցների օգտագործմամբ հարձակումները հետ մղելիս.

4) զինված խմբերի դիմադրությունը ճնշելիս, եթե նրանք հրաժարվում են կատարել հակաօրինական գործողությունները դադարեցնելու և իրենց մոտ եղած զենքն ու մարտական տեխնիկան հանձնելու մասին ոստիկանության զորքերի զինծառայողների օրինական պահանջները<sup>29</sup>:

1.3. Հաշվի առնելով վերոգրյալը **Հանձնաժողովն արձանագրեց**, որ՝

1) **հատուկ միջոցներին ներկայացվող հիմնական չափորոշիչներն օրենսդրությամբ սահմանված չեն.**

2) **օրենսդրությամբ սահմանված չեն «հատուկ ներկող նյութեր» հատուկ միջոցի տեսակները և դրանց ընտրելու չափորոշիչները**, մինչդեռ ժողովածուում նշված է, որ ներկայումս օպերատիվ հետախուզական միջոցառումների ժամանակ օգտագործվում են 3 տեսակի հատուկ քիմիական միջոցներ՝ ներկող, սառը լուսարձակման (լյումինեսցենցիոն), հոտավետ, որոնց շարքին են դասվում «Լյումինաֆոր», «Օրլյոն», «Իսկրա», «Ձեյրոնկա», «Ռոդամին» և այլ միջոցներ.

**Բացի այդ, «հատուկ ներկող նյութեր» հատուկ միջոցը «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, իսկ «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքով՝ ոչ.**

3) **ինչպես «Ոստիկանության մասին», այնպես էլ՝ «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում բացակայում է «փշալար» հատուկ միջոցը, մինչդեռ այն գործնականում կիրառվում է.**

4) **համաձայն «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքների էլեկտրահարող սարքերը համարվում են հատուկ միջոց, այնինչ**

<sup>29</sup> Տես՝ «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված:

Կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N 605-Ն որոշման հավելվածի 1-ին մասում էլեկտրահարող սարքերը և կայծային պարպիչները, ատրոզոլային փաթեթում ինքնապաշտպանական միջոցները և մեխանիկական փոշեցրիչներն ընդգրկված են քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների 9304 00 000 ծածկագրային խմբում: Ավելին, նույն որոշման հավելվածի 4-րդ մասում «էլեկտրահարող սարք»-ը սահմանված է որպես *զենքի տեսակ՝ «էլեկտրահարող սարք՝ քաղաքացիական զենք (պաշտպանական միջոց), որն օգտագործվում է որպես ինքնապաշտպանության ու անկանխատեսելի էլեկտրական հպումային միջոցների ներգործությունից պաշտպանման նպատակներով, և որի գործողությունը հիմնված է էլեկտրական իմպուլսների առաջացման վրա: Որպես էլեկտրահարող սարք կարող են կիրառվել համանման գործառույթներ ունեցող կայծային պարպիչները»*: Նշենք, որ էլեկտրահարող սարքը, կայծային պարպիչը որպես զենքի տեսակ սահմանելը համապատասխանում է «Ձենքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին<sup>30</sup>, ըստ որի **զենքը՝** իրենց կառուցվածքով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու կամ ազդանշան արձակելու համար նախատեսված սարքերը և առարկաներն են:

Վերոգրյալը վերաբերվում է նաև «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով հատուկ միջոցների շարքին դասված արցունքաբեր գազի՝ Ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանով նախատեսված որոշ տեսակներին, որոնք ըստ «Ձենքի մասին» ՀՀ օրենքի բնորոշման գազային զենք են՝ **«գազային զենք՝** օգտագործման համար թույլատրված *արցունքաբեր կամ գրգռիչ նյութերի* կիրառմամբ կենդանի նշանակետը ժամանակավորապես շարքից հանելու համար նախատեսված զենք»:

Համաձայն «Ձենքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի զենք են համարվում մասնավորապես՝ *հրազենը, սառը զենքը, նետողական զենքը, օդածնշիչ զենքը, գազային զենք և ազդանշանային զենքը*: Համաձայն Կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի «Ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի և ռազմամթերքի տեսակների ցանկը հաստատելու մասին» N 1238-Ն որոշման հավելվածի ոստիկանության սպառազինության մեջ են ընդգրկված հրազեն չհանդիսացող զենքի տեսակներ՝ *սառը շեղբավոր զենքը (ինքնաձիգի սվիններ և այլ դանակներ) և ազդանշանային զենքը*:

---

<sup>30</sup> Տես՝ «Ձենքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված:

*Փաստորեն ոստիկանության և ոստիկանության զորքերի սպառազինության մեջ փաստացի ընդգրկված զենքի տեսակներից միայն հրազենի, ինչպես նաև էլեկտրահարող սարքերի (կայծային պարպիչների) և արցունքաբեր գազի որոշ տեսակների՝ այն էլ որպես հատուկ միջոցներ, կիրառելու դեպքերը և կարգն են սահմանված օրենքով:*

*Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը հատկապես կարևորում է ոստիկանության և ոստիկանության զորքերի սպառազինության մեջ փաստացի ընդգրկված զենքի բոլոր տեսակները կիրառելու դեպքերը և կարգն օրենքով նախատեսելը:*

*Միաժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների որոշ տեսակների (օրինակ՝ էլեկտրահարող սարքերի), որոնք համաձայն «Ձենքի մասին» ՀՀ օրենքի համարվում են զենք, սահմանումները (բնորոշումները) հստակեցման կարիք ունեն, որպեսզի բացառվի իրավակիրառական պարակտիկայի շրջանակներում այդ միջոցների տարաբնույթ մեկնաբանությունները:*

**5) օրենսդրական կարգավորման կարիք ունի ռետինային, ինչպես նաև նաև հարվածային չներթափանցող ներգործության այլ փափուշտները կիրառելու կարգը:**

Թեև ռետինային և հարվածային չներթափանցող ներգործության մյուս փափուշտները օգտագործվում են հրազենի միջոցով, որը կիրառելու դեպքերը և կարգը օրենքով սահմանված է, սակայն Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի հրամանատարի կողմից հաստատված «ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի անձնակազմի ծառայողական և մարտական պատրաստականության պարապմունքների թեմաների ժողովածու»-ում (այսուհետ՝ ժողովածու) դրանք դասված են հարվածային չներթափանցող ներգործության միջոցների շարքին, որի մեջ են ընդգրկված նաև ռետինե մահակները: Ժողովածուում նաև նշված է, որ «մեր երկրի իրավապահ մարմինների ստորաբաժանումների սպառազինության մեջ են գտնվում գնդակի փոքր արագություն ունեցող հրաձգային զենքեր՝ հատուկ փամփուշտներով, այդ թվում՝ ոչ մետաղական (ռետինային) փամփուշտներով»: Դրանցից են «ԿՍ 23» հատուկ հրացանը՝ կարծ և երկար, որոնք նախատեսված են ինչպես հատուկ քիմիական միջոցներ, այնպես էլ՝ «Վոլնա-Ռ» տեսակի ռետինե փամփուշտներ դիպուկ կրակելու համար: Համաձայն ժողովածուի ներկայումս ոստիկանության սպառազինության մեջ են գտնվում նաև «ՊԲ-4ՍՊ» և «Կոռնետ» տիպի ատրճանակներ, որոնց փամփուշտները համեմատաբար փոքր տրամաչափի են:

**6) օրենսդրությամբ սահմանված չեն «արգելքները քանդելու միջոցներ» հատուկ միջոցի տեսակները և դրանց ընդելու չափորոշիչները**, մինչդեռ ժողովածուում որպես «ներկայումս ոստիկանության սպառազինության մեջ գտնվող» արգելանք քանդելու միջոցներ նշված են փոքրածավալ «Կլուչ» և «Իմպուլս» պայթուցիկ սարքավորումները.

**7) օրենսդրությամբ սահմանված չեն «ծառայողական շներ» հատուկ միջոցի տեսակները և դրանց ընդելու չափորոշիչները**, մինչդեռ ժողովածուում նշված են ծառայողական շների հետևյալ տեսակները՝ որոնողական, պարեկային, ուղեկցող և պահակային շներ.

**8) ժողովածուում, բացի վերը թվարկվածներից, նշված են նաև ոստիկանության սպառազինության մեջ գտնվող կամ ներկայումս օգտագործվող այլ հատուկ միջոցների տեսակներ, որոնք Ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանով նախատեսված չեն**, մասնավորապես՝ «Կասետա-ՍՊ»-նախատեսված է նյարդահոգեբանական ազդեցության նպատակով ՍՊ-81 (ՍՊՇ) ազդանշանային ատրճանակից կրակելու համար, «Սիրեն-6» ձեռքի գազային նռնակ (արդյունավետ է ազդում ալկոհոլի և թմրադեղերի ազդեցության տակ գտնվող անձանց վրա), «Սիրեն-7» նախատեսված է շինության ներսում գազային ամպ ստեղծելու նպատակով «ԿՍ-23» տիպի հատուկ կարաբինից կակելու համար, «Սիրեն-10»-ակտիվ նյութի տեսակը՝ CS, «Գվոզդ» (կիրառվում է բաց տարածություններում մասսայական անկարգությունների ժամանակ և զինված հանցագործների վնասազերծելիս, կրակվում է «ԱԿՄ», «ԱԿ-74» ավտոմատներին կցվող ինքնաձիգի նռնականետերից), Է-100,200,300 էլեկտրահարող սարքերը.

**9) Ըստ օրենքով նախատեսված խմբերի՝ հատուկ միջոցների տեսակների դասակարգումը օրենսդրությամբ կարգավորված չէ, մասնավորապես՝**

**ա) Ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված՝ ՌԳՌ «Ռուլետ ՎԿ»-ը բարձր հզորության և անբեկոր՝ գրգռիչ գործողության ձեռքի նռնակը, որը նախատեսված է գրգռիչ նյութերի բաղադրությամբ գազածխային ծածկույթի հաշվին զանգվածային անկարգությունների կանխման և հատուկ միջոցառման անցկացման ժամանակ իրավախախտների հոգեկամային կայունության ճնշման համար, միանգամայն պայմանականորեն կարելի է դասել օրենքով նախատեսված է «արցունքաբեր գազ» հատուկ միջոցների շարքին, քանի որ այն ունի հատկանիշներ՝ «իրավախախտների հոգեկամային կայունության ճնշում», որը օրենքով նախատեսված չէ.**

**բ)** Ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված «ՌԴԳ-Մ» (ՌԻՄ) ակնթարթային ազդեցության ձեռքի ծխանոցակը նախատեսված է հատուկ միջոցառումների ժամանակ զինծառայողների գործողությունները քողարկելու և նրանց վրա նշանառու կրակոցները բացառելու համար, իսկ «ԳՂՄ 40»-ը ծխանոցակը նախատեսված է հատուկ միջոցառումների ժամանակ *զինծառայողների գործողությունները քողարկելու համար, որոնք որպես **նոր տեսակի հատուկ միջոց, օրենքով անրագրելու անհրաժեշտություն կա.***

**10)** Ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանի 12-րդ կետով սահմանված է, որ ոստիկանության զորքերի սպառազինության մեջ ընդգրկված՝ իրավախախտների նկատմամբ օգտագործվող հատուկ միջոցները դասակարգվում են *ըստ ակտիվ պաշտպանության և հատուկ միջոցառումների ապահովման միջոցների, մինչդեռ այդպիսի դասակարգում օրենքով նախատեսված չէ.*

**11)** Հատուկ միջոցների ցանկը սահմանված է Ոստիկանության պետի հրամանով, *մինչդեռ նպատակահարմար է Ոստիկանության և ոստիկանության զորքերի հատուկ միջոցների ցանկերը սահմանել Կառավարության որոշմամբ, իսկ հատուկ միջոցների կիրառման կարգերը՝ Ոստիկանության պետի հրամանով, դրանով բացառելով ցանկում այնպիսի միջոցներ ընդգրկելը, որոնք նախատեսված չեն օրենքով:*

**1.4.** Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելով սույն եզրակացության **1-ին մասում** նշված առաջարկության կատարման ընթացքը, **Հանձնաժողովը ՀՀ ոստիկանությանն առաջարկեց՝**

**1)** մշակել 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում և Հանձնաժողովի նիստի արձանագրությունում ընդգրկված առաջարկություններից բխող՝ «Ոստիկանության մասին» և «Ոստիկանական զորքերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծեր.

**2)** համադրել Ոստիկանության պետի «Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի զինծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» 2009թ. հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանը «Ոստիկանության մասին» և «Ոստիկանական զորքերի մասին» ՀՀ օրենքների հետ, որպեսզի օրենքով կարգավորման ենթակա հարցերն անրագրվեն նշված օրենքներում.

3) համադրել «Ոստիկանության մասին» և «Ոստիկանական զորքերի մասին» ՀՀ օրենքներում սահմանված հատուկ միջոցների տեսակները, դրանց կիրառելու դեպքերը և ներկայացնել առաջարկություն համարժեք կիրառելիության չափանիշներ սահմանելու վերաբերյալ.

4) «փշալար» հատուկ միջոցն ավելացնել «Ոստիկանության մասին» և «Ոստիկանական զորքերի մասին» ՀՀ օրենքներով սահմանված հատուկ միջոցների տեսականիում.

5) հատուկ միջոցներին ներկայացվող հիմնական չափորոշիչները սահմանել օրենքով՝ դրանք նախապես ուղարկելով միջազգային փորձաքննության.

6) ներկայացնել տեղեկատվություն էլեկտրահարող սարքեր և կայծային պարպիչներ հատուկ միջոցների առանձնահատկությունների վերաբերյալ.

7) սույն մասի 1-ին կետով նախատեսված փոփոխություններն ընդունվելուց հետո՝ Ոստիկանության և ոստիկանության զորքերի հատուկ միջոցների ցանկերը սահմանել Կառավարության որոշմամբ, իսկ հատուկ միջոցների կիրառման կարգերը՝ Ոստիկանության պետի հրամանով<sup>31</sup>:

1.5. Ոստիկանությունը Հանձնաժողովի նիստի արձանագրությամբ նախատեսված ժամկետում արձագանքեց<sup>32</sup> Հանձնաժողովի ներկայացրած առաջարկություններին՝

1) սույն եզրակացության **1.4 մասի 1-ին կետով** նախատեսված առաջարկության կապակցությամբ Ոստիկանությունը տեղեկացրեց, որ դրան համապատասխան նախապատրաստվել են «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը.

2) սույն եզրակացության **1.4 մասի 2-րդ կետով** նախատեսված առաջարկությունների կապակցությամբ Ոստիկանությունը տեղեկացրեց, որ Ոստիկանության զորքերի զինծառայողների անհատական պաշտպանության միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցներ գործադրելու դեպքերի մասին վերադասության կարգով և դատախազին զեկուցելու /տեղեկացնելու/ հետ կապված հարաբերությունները կարգավորող դրույթներն ամրագրվել են «Ոստիկանության

<sup>31</sup> Տես՝ Հավելված 5:

<sup>32</sup> Տես՝ Հավելված 7:

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում՝ զեկուցումների /տեղեկացումների/ նույն ընթացակարգը նախատեսելով նաև ֆիզիկական ուժի, հրազենի, մարտական տեխնիկայի գործադրման դեպքերի համար:

Ոստիկանությունը միաժամանակ հայտնեց, որ օրենքով կարգավորման ենթակա այլ հարաբերություններ համադրման արդյունքում չեն պարզվել, թեև ***Հանձնաժողովի կարծիքով դրանք կան:***

***Ուստի Հանձնաժողովը գտնում է, որ Կառավարությունը մեկ անգամ ևս պետք է անդրադառնա սույն եզրակացության 1.3 մասում թվարկված հարցերին: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը նշված հարցերը կբարձրացնի համապատասխան օրենսդրական ակտերի նախագծերի քննարկման ժամանակ:***

**3)** սույն եզրակացության **1.4 մասի 3-րդ կետով** նախատեսված առաջարկության կապակցությամբ Ոստիկանությունը տեղեկացրեց, որ դրան համապատասխան համադրվել են «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով նախատեսված հատուկ միջոցների տեսակները, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հիմքերը, պայմանները և սահմանները, և «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով նախատեսվել են համարժեք կիրառելիություն ապահովող լրացումներ և փոփոխություններ.

**4)** սույն եզրակացության **1.4 մասի 4-րդ կետով** նախատեսված առաջարկության կապակցությամբ ՀՀ ոստիկանությունը տեղեկացրեց, որ դրա համաձայն «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով նախատեսված հատուկ միջոցների շարքը լրացվել է մարդկանց հարկադիր կանգնեցման (արգելափակման) միջոցներով, ինչն ընդգրկվել է «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում.

**5)** սույն եզրակացության **1.4 մասի 5-րդ կետով** նախատեսված առաջարկությունների կապակցությամբ Ոստիկանությունը տեղեկացրեց, որ

նպատակահարմար է գտնում, որպեսզի մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների՝ կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանվեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից, ինչպես դա իրականացվել է էլեկտրահարող սարքերի և կայծային պարպիչների դեպքում: Ոստիկանությունը միաժամանակ տեղեկացրեց, որ «Ձեռքի մասին» ՀՀ օրենքի համաձայն էլեկտրահարող սարքերի և կայծային պարպիչների ելակետային նորմերը հաստատում է ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման հանրապետական մարմինը, իսկ կիրառման համար թույլատրված չափանիշները սահմանում է առողջապահության հանրապետական մարմինը, իսկ մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների՝ կիրառման համար թույլատրելի չափանիշները ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանելու մասին դրույթը նախատեսվել է «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում:

6) սույն եզրակացության 1.4 մասի 6-րդ կետով նախատեսված առաջարկության կապակցությամբ Ոստիկանությունը ներկայացրեց էլեկտրահարող սարքեր և կայծային պարպիչներ հատուկ միջոցների առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկանքը:

7) սույն եզրակացության 1.4 մասի 7-րդ կետով նախատեսված առաջարկությունների կապակցությամբ Ոստիկանությունը տեղեկացրեց, որ դրանցից բխող իրավաստեղծ աշխատանքներն իրականացնելու նպատակով ստորագրվել է Ոստիկանության պետի «Իրավաստեղծ աշխատանքների հանձնաժողով ստեղծելու մասին» հրաման, որի համաձայն ստեղծվող հանձնաժողովը նախապատրաստելու է ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների ցանկը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու, հատուկ միջոցների պիտանելիության ժամկետները պարբերաբար ստուգելու կարգերը հաստատող Կառավարության որոշումների և «Հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» Ոստիկանության պետի հրամանի նախագծերը:

**1.6. Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը գտնում է, որ թեև սույն եզրակացության 1.5 մասում նշված հարցերի լուծման ընթացքն ունի դրական դինամիկա, սակայն դրանք լիովին լուծված չեն, իսկ ներկայացված նախագծերը լրացուցիչ քննարկումներ են պահանջում, ուստի Հանձնաժողովն առաջարկում է**

*շարունակել նշված մասում, ինչպես նաև սույն եզրակացության 1.3 մասում թվարկված հարցերի մոնիթորինգը և Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:*

2. ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝

1) կատարել Ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների տեխնիկական և որակական հատկանիշների ստուգում՝ որոշելու դրանց պիտանիությունը, և ոչնչացնել այդ չափանիշներին չհամապատասխանող բոլոր հատուկ միջոցները<sup>33</sup>.

2) ոչնչացնել ժամկետանց «Չերյոմուխա-7» տեսակի հատուկ միջոցները<sup>34</sup>:

2.1. Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը տեղեկացրեց**, որ իրականացվել է Ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների տեխնիկական և որակական հատկանիշների ստուգում, ինչի արդյունքում ժամկետանց և տեխնիկապես օգտագործման համար ոչ պիտանի հատուկ միջոցները սպառազինությունից դուրս են գրվել, իսկ հատուկ միջոցների որոշ տեսակներ (այդ թվում՝ «Չերյոմուխա-7» տեսակի), ընդհանրապես հանվել են ոստիկանության սպառազինության ցանկից:

2.2. Հանձնաժողովը պարզեց, որ թեև ներկայումս խնդիրը կարգավորվում է Ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանի 39-րդ և 40-րդ կետերով, ըստ որի՝ հատուկ միջոցները պահպանվում են մինչև դրանց գործարանային մարտավարատեխնիկական տվյալներով նախատեսված ժամկետների լրանալը և արգելվում է ժամկետանց հատուկ միջոցների օգտագործումը, **սակայն այդ ակտով ժամկետանց և տեխնիկապես օգտագործման համար ոչ պիտանի հատուկ միջոցների դուրս գրման գործընթացի պարբերական անցկացումն ապահովված չէ:**

2.3. Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելով սույն եզրակացության **2-րդ մասում** նշված առաջարկությունների կատարման ընթացքը, **Հանձնաժողովը Ոստիկանությանն առաջարկեց՝**

1) Ոստիկանության պետի հրամանով սահմանել հատուկ միջոցների պիտանելիության ժամկետները պարբերաբար ստուգելու կարգ.

2) ներկայացնել տեղեկանք ոստիկանության սպառազինությունից հանված հատուկ միջոցների ոչնչացման մասին<sup>35</sup>:

<sup>33</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 117 կետ 3:

<sup>34</sup> Տես՝ նույնի էջ 129 կետ 1:

<sup>35</sup> Տես՝ Հավելված 5:

**2.4. Ի պատասխան Չանձնաժողովի առաջարկությունների Ոստիկանությունը տեղեկացրեց**, որ դրանցից բխող աշխատանքներն իրականացնելու նպատակով ընդունվել է Ոստիկանության պետի «Իրավաստեղծ աշխատանքների հանձնաժողով ստեղծելու մասին» հրաման, ըստ որի՝ ստեղծվող հանձնաժողովը նախապատրաստելու է ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների ցանկը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու, հատուկ միջոցների պիտանելիության ժամկետները պարբերաբար ստուգելու կարգերը հաստատող Կառավարության որոշումների և «Հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» Ոստիկանության պետի հրամանի նախագծերը:

Ժամկետանց հատուկ միջոցների ոչնչացման կապակցությամբ Ոստիկանությունը տեղեկացրեց, որ իրականացվել է Ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների տեխնիկական և որակական հատկանիշների ստուգում, ինչի արդյունքում ժամկետանց և տեխնիկապես օգտագործման համար ոչ պիտանի հատուկ միջոցները սպառազինությունից դուրս են գրվել, իսկ հատուկ միջոցների որոշ տեսակներ (այդ թվում՝ «Չերյոմուխա-7» տեսակի), ընդհանրապես հանվել են ոստիկանության սպառազինության ցանկից: Ըստ Ոստիկանության ներկայացրած ակտի դրանք են՝

- 1) Չերյոմուխա - 1, 1984թ.- 211 հատ.
- 2) Չերյոմուխա - 4, 1983թ.- 422 հատ.
- 3) Չերյոմուխա - 5, 1988թ.- 85 հատ.
- 4) Չերյոմուխա - 7, 1987-1989թ.թ.- 296 հատ.
- 5) Չերյոմուխա - 10, 1986թ.-1988թ.թ. 351 հատ.
- 6) Սիրեն 6, 1994թ.-216 հատ.
- 7) Սիրեն-7, 1992-1994թ.թ.-17 հատ.
- 8) 23 մմ գազ.փամփուշտ (Չերյոմուխա - 7Մ), 1996թ.- 519 հատ:

Միաժամանակ Ոստիկանությունը հայտնեց, որ ներկայումս հնարավորություն չունի ոչնչացնել սպառազինությունից հանված հատուկ միջոցները, քանի որ գազային պարունակությամբ նռնակ-փամփուշտները ոչնչացվում են հատուկ սարքավորումներով հագեցված լաբորատորիաներում: Խնդրին լուծում տալու նպատակով Ոստիկանությունը ս.թ. ապրիլի 4-ին դիմել է ՀՀ ՊՆ Գլխավոր շտաբի պետին:

**2.5. Հաշվի առնելով առնելով վերոգրյալը Հանձնաժողովը գտնում է, որ՝**

1) ժամկետանց և տեխնիկապես օգտագործման համար ոչ պիտանի հատուկ միջոցները սպառազինությունից դուրս գրելու հարցում բավարար աշխատանք է կատարվել, սակայն միևնույն ժամանակ արձանագրում է, որ Ոստիկանության ներկայացրած ակտում սահմանված հատուկ միջոցները փաստացի ոչնչացված չեն: Ուստի, Հանձնաժողովն առաջարկում է այդ գործընթացի նկատմամբ մոնիթորինգը շարունակել և արդյունքների մասին Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:

2) անհրաժեշտ է շարունակել Ոստիկանությունում ստեղծված իրավաստեղծ աշխատանքների հանձնաժողովի աշխատանքների ընթացքի մոնիթորինգը և արդյունքների մասին Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:

3. ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝

1) ստեղծել հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման իրավական բազա, մասնավորապես՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման առումով<sup>36</sup>.

2) ապահովել Ոստիկանության անձնակազմի՝ հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության կանոնների վերաբերյալ հրահանգավորված լինելը<sup>37</sup>:

3.1. Ի պատասխան Հարցմանը Կառավարությունը հայտնեց է, որ՝

1) Ոստիկանությունում ներկայումս ստեղծված է հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման բավականաչափ արդիական իրավական բազա:

2) Ջանգվածային միջոցառումների ընթացքում հասարակական կարգի պահպանմանն ուղղված ռոտիկանության ծառայողների գործողությունների ներդաշնակեցման, հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության ապահովման կանոնների հստակ պահպանման առումով անհրաժեշտ ունակությունների ձևավորման, ինչպես նաև տակտիկական պատրաստականության բարձրացման նպատակով 2009թ. ընթացքում Ոստիկանության բոլոր տարածքային ստորաբաժանումներում Ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության, ոստիկանության զորքերի և

<sup>36</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 54 կետ 13:

<sup>37</sup> Տես՝ նույնի էջ 129 կետ 1:

Ակադեմիայի փորձառու հրահանգիչների մասնակցությամբ անց են կացվել ուսումնական վարժանքներ: Նշված խնդիրների տեսական ուսուցառումը ապահովվում է նաև շաբաթը մեկ անգամ տեղերում անցկացվող ծառայողական պարապմունքների շրջանակներում:

**3)** ԱՍՆ դեսպանատան, Դեմսուս կազմակերպության և ոստիկանության կողմից կազմակերպվել և 2010թ. հունվարի 18-ից մինչև փետրվարի 1-ը ոստիկանության միջին և ավագ կազմի 24 ծառայողների համար անցկացվել է դասընթաց՝ «Ձանգվածային միջոցառումների և ամբոխի կառավարման հրահանգիչների ուսուցում» թեմայով, նպատակ ունենալով զինել վերապատրաստվող հրահանգիչներին գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են զանգվածային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանման հարցերի շուրջ (այդ թվում՝ հատուկ միջոցների կիրառման առումով անհրաժեշտ ունակությունների ձևավորման) իրենց ստորաբաժանումներում ուսուցում կազմակերպելու համար:

**3.2. Կառավարությունը նաև տեղեկացրեց,** որ հաստատման փուլում գտնվող ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով (*ժրագիրը ներկայունս հաստատված է<sup>38</sup>*) նախատեսված է՝

**1)** հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների (այդ թվում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման առումով) իրականացման իրավական բազայի կատարելագործման բնագավառում իրականացնել միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում՝ 2010թ. 2-րդ կիսամյակ:

**2)** «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակում՝ 2010թ. 2-րդ կիսամյակ:

**3)** զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցների մշակում ու ներդրում՝ 2011թ. 2-րդ կիսամյակ:

**4)** իրականացնել հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, նրանց կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ ֆիզիկական ուժի և հատուկ մի-

---

<sup>38</sup> Տես՝ ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի հայեցակարգին հավանություն տալու մասին» N 354-Ն որոշում:

ջոցների գործադրման, ինչպես նաև ՋԼՄ-ների հետ շփվող ծառայողների համար պարտադիր դասընթացների կազմակերպում՝ 2011թ. 2-րդ կիսամյակ:

**3.3. Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելով սույն եզրակացության 3-րդ մասում նշված առաջարկությունների կատարման ընթացքը, Հանձնաժողովը Ոստիկանությանն առաջարկեց՝**

**1) սույն եզրակացության 3.2 մասի 3 և 4-րդ կետերում** նշված միջոցառումների իրականացման ժամկետ սահմանել 2011թ. 1-ին կիսամյակը.

**2) ներկայացնել** տեղեկատվություն Ոստիկանության անձնակազմի՝ հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության կանոնների վերաբերյալ ուսումնական վարժանքների թեմաների, գրաֆիկի, ինչպես նաև այդ վարժանքներին պետական-իրավական հանձնաժողովի ներկայացուցիչների ներկայության հնարավորության մասին.

**3) Ոստիկանության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառել** հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության կանոնների և դրանց ուղեցույցների վերաբերյալ ուսումնական թեմաներ և համապատասխան ժամաքանակներ<sup>39</sup>:

**3.4.** Նոր ժամկետներ սահմանելու վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկություններն ընդունվեցին Ոստիկանության ներկայացուցիչների կողմից և հետագայում՝ ամրագրվեցին Կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի հայեցակարգին հավանություն տալու մասին» N 354-Ն որոշմամբ:

**Միաժամանակ Ոստիկանությունը՝**

**1) տեղեկացրեց,** որ Ոստիկանության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառվել են հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության կանոնների և դրանց ուղեցույցների վերաբերյալ ուսումնական թեմաներ և համապատասխան ժամաքանակներ.

**2) ներկայացրեց** Ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի ծառայողական պատրաստականության

<sup>39</sup> Տես՝ Հավելված 5:

պարապմունքների ուսումնական պլանները, ինչպես նաև դրանց ընթացքում ուսումնասիրվող թեմաների ժողովածուն՝ հայտնելով, որ հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների և դրա հետ կապված մի շարք դրույթներ ներկայացված պլաններում կներառվեն նորմատիվ-իրավական բազայի ներկայումս իրականացվող կատարելագործումից հետո, իսկ Ոստիկանության նշված ստորաբաժանումում ուսումնական վարժանքները անցկացվում են յուրաքանչյուր երեքշաբթի օր, որոնց կարող են մասնակցել Հանձնաժողովի ներկայացուցիչները:

**3.5. Հաշվի առնելով վերագրյալը, Հանձնաժողովն առաջարկում է՝ շարունակել սույն եզրակացության 3.2 մասում նշված միջոցառումների կատարման ընթացքի մոնիթորինգը և սահմանված ժամկետներում Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հետագա եզրակացությունների քննարկման ժամանակ:**

**4. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ ժամանակավոր հանձնաժողովի տրամադրության տակ եղած տեսանյութերում առկա կադրերում ոստիկանության առանձին աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ ոչ իրավաչափ ուժի կիրառման բոլոր դեպքերը դարձնել պատշաճ քննության առարկա<sup>40</sup>:**

**4.1.** Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը տեղեկացրեց**, որ ժամանակավոր հանձնաժողովի տրամադրության տակ եղած և շրջանառության մեջ գտնվող տեսանյութերում առկա կադրերում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն գործադրելու փաստերով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված քրեական գործերի շրջանակներում ի հայտ են բերվել և դատապարտվել Ոստիկանության 4 ծառայողներ:

**4.2.** Հաշվի առնելով, որ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն գործադրելու փաստերը կարող էին ի հայտ գալ նաև դատական քննության ընթացքում կատարված հայտարարություններով՝ Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելով սույն եզրակացության **4-րդ մասում** նշված առաջարկության կատարման ընթացքը, **Հանձնաժողովը Ոստիկանությանն առաջարկեց՝**

**1)** սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչել ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ ներքին գործերի նախարարի 1999թ. սեպտեմբերի 1-ի «Հանցագործությունների դեպքերի գրանցման և հաշվառման մասին» 12/354 համատեղ հրամանը՝

<sup>40</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 52 կետ 2:

հանցագործությունների դեպքերի գրանցման և հաշվառման կարգը սահմանելով Կառավարության որոշմամբ.

2) ներկայացնել տեղեկատվություն մարտի 1-2-ի իրադարձությունների ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն գործադրելու վերաբերյալ դատական քննության ընթացքում կատարված հայտարարությունների վերաբերյալ Ոստիկանություն ուղարկված հաղորդումների թվաքանակի և Ոստիկանությունում դրանց հիման վրա կատարված ծառայողական քննության ընթացքի վերաբերյալ<sup>41</sup>:

**4.3. Ի պատասխան Հանձնաժողովի առաջարկությունների Ոստիկանությունը տեղեկացրեց**, որ ներկայումս նախապատրաստվում է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումները ընդունելու, գրանցելու և հաշվառելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ, որը կներկայացվի արձանագրությամբ նախատեսված ժամկետում *(մինչև՝ 25.06.2010 թվական)*:

Ոստիկանությունը նաև հայտնեց, որ 2008թ. մարտի 1-2-ի իրադարձությունների ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն գործադրելու վերաբերյալ հաղորդումներ Ոստիկանությունում չեն ստացվել:

**4.4. Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովն առաջարկում է՝ շարունակել «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումները ընդունելու, գրանցելու և հաշվառելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացման ընթացքի մոնիթորինգը՝ սահմանված ժամկետներում զեկուցելով Ազգային ժողովին Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

5. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝

1) անցկացնել ոստիկանության աշխատակիցների համապատասխան դասընթացներ լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման առումով, այն հաշվով, որպեսզի ոչ միայն չսահմանափակեն, այլև՝ ապահովեն և ցուցաբերեն անհրաժեշտ

---

<sup>41</sup> Տես՝ Հավելված 5

օժանդակություն լրագրողների կողմից իրենց մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու առումով<sup>42</sup>.

2) ապահովել, որպեսզի ոստիկանության բոլոր այն ստորաբաժանումները, որոնք ներգրավված են հասարակական կարգի պաշտպանության գործընթացում, հատկապես զանգվածային միջոցառումներին, իրենց կազմում ունենան այնպիսի ծառայողներ, որոնք անցել են հատուկ դասընթացներ՝ զանգվածային միջոցառման մասնակիցների հետ համագործակցության և երկխոսության եզրեր հաստատելու ուղղությամբ<sup>43</sup>:

**5.1. Ի պատասխան Հարցմանը Կառավարությունը տեղեկացրեց,** որ Ոստիկանության կողմից քայլեր են ձեռնարկվել լրատվամիջոցների և ոստիկանության փոխհարաբերությունները (հատուկ ընդգծելով՝ ցույցերի ժամանակ լրագրողների հետ հարաբերությունների հիմնական ուղեցուցիչները) կառուցողական հիմքի վրա դնելու ուղղությամբ: Այդ նպատակով 2009թ. մայիսի 8-ից 9-ը Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության և Հայաստանի Հելսինկյան կոմիտեի նախաձեռնությամբ Ծաղկաձորում անցկացվել է «Լրատվամիջոցների և ոստիկանության փոխհարաբերությունները» թեմայով սեմինար, որին մասնակցել են Ոստիկանության 16 ստորաբաժանումների ղեկավարներ: ԱՄՆ դեսպանատան, Դենսուս կազմակերպության և Ոստիկանության կողմից 2010թ. փետրվարի 1-ից մինչև փետրվարի 5-ը կազմակերպվել և ոստիկանության հրամանատարական կազմի 24 ծառայողների համար անցկացվել է դասընթաց՝ «Զանգվածային միջոցառումների և անբոխի կառավարման հրամանատարական անձնակազմի ուսուցում» թեմայով, նպատակ ունենալով համապատասխան գիտելիքներով զինել Ոստիկանության ղեկավար կազմի այն ներկայացուցիչներին, որոնք հասարակական կարգի պահպանման և զանգվածային միջոցառումների հետ կապված մարտավարություն ու ռազմավարություն են ձևավորում, ինչպես նաև այդ ուղղությամբ ընդունում համապատասխան որոշումներ և հրահանգներ:

Կառավարությունը տեղեկացրեց նաև, որ հաստատման փուլում գնտվող (*ծրագիրը ներկայունս հաստատված է*<sup>44</sup>) ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

<sup>42</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 36 կետ 11:

<sup>43</sup> Տես՝ նույնի էջ 34 կետ 6:

<sup>44</sup> Տես՝ ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի հայեցակարգին հավանություն տալու մասին» N 354-Ն որոշում:

1) Ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում՝ ուղղված զանգվածային լրատվության միջոցների հետ ոստիկանության արդյունավետ, օպերատիվ և արհեստավարժ շփումների ապահովմանը՝ ժամկետ 2010թ.

2) ոստիկանության ծառայողների համար զանգվածային լրատվության միջոցների հետ շփվելու ուղեցույցի մշակում՝ ժամկետ 2010թ. 1-ին կիսամյակ.

3) զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցություններ վարող ծառայողների համար ուղեցույցների մշակում ու ներդրում՝ ժամկետ 2011թ. 2-րդ կիսամյակ:

4) ՋԼՄ-ների հետ շփվող ծառայողների համար պարտադիր դասընթացների կազմակերպում:

**5.2. Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելով սույն եզրակացության 5-րդ մասում նշված առաջարկությունների կատարման ընթացքը, **Չանձնաժողովը Ոստիկանությանն առաջարկեց՝****

1) Ոստիկանության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառել մասնավորապես՝ զանգվածային անկարգությունների ժամանակ լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման և դրանց ուղեցույցների վերաբերյալ ուսումնական թեմաներ և համապատասխան ժամաքանակներ.

2) ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման ուղղությամբ ոստիկանության ծառայողների ձեռք բերած փորձի գործնական կիրառման վերաբերյալ.

3) քննարկել ԵԱՀԿ «ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց ձեռնարկում» ուժի և հատուկ միջոցների գործադրման սահմանափակումներին, ինչպես նաև մինչև ուժի գործադրումը բանակցություններ վարելուն վերաբերող դրույթները օրենսդրությամբ սահմանելու հարցի նպատակահարմարությունը և ներկայացնել առաջարկություն<sup>45</sup>.

4) զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցություններ վարող ծառայողների համար ուղեցույցների մշակման ու ներդրման համար սահմանել նոր ժամկետ.

5) Ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն զանգվածային միջոցառման կազմակերպիչների ու ոստիկանության միջև բանակցային և երկխոսության եզրեր հաստատող, ինչպես նաև լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման

---

<sup>45</sup> Սույն կետում ներկայացված առաջարկությունը վերաբերվում է մասնավորապես՝ նաև սույն եզրակացության 8-րդ մասում ներկայացված առաջարկության կատարման ընթացքին:

ուղղությամբ ոստիկանության ծառայողների ձեռք բերած փորձի գործնական կիրառման վերաբերյալ.

**6)** Ոստիկանության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառել զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցությունների և լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման և դրանց ուղեցույցների վերաբերյալ ուսումնական թեմաներ և համապատասխան ժամաքանակներ<sup>46</sup>:

**5.3. Ի պատասխան Հանձնաժողովի առաջարկությունների Ոստիկանությունը հայտնեց, որ՝**

**1)** սույն եզրակացության **5.2 մասի 1-ին կետում** նշված առաջարկության կապակցությամբ Ոստիկանության պետը տվել է «ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում լրացուցիչ թեմաներ ներառելու մասին» ցուցում.

**2)** սույն եզրակացության **5.2 մասի 3-րդ կետում** նշված առաջարկության կապակցությամբ ուսումնասիրվել է ԵԱՀԿ «Ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց-ձեռնարկը», և «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով նախատեսված ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հիմքերը, պայմանները և սահմանները նախատեսող դրույթները համապատասխանեցվել են ուղեցույց-ձեռնարկով նախատեսված ուժի և հատուկ միջոցների գործադրման սահմանափակումներին: Ձեռնարկի 68-րդ<sup>47</sup> 69-րդ<sup>48</sup> 71-րդ<sup>49</sup>, 73-րդ<sup>50</sup>, 89-րդ<sup>51</sup> և 145-րդ<sup>52</sup> կետերին համապատասխանող դրույթներ նախատեսվել են

<sup>46</sup> Տես՝ Հավելված 5:

<sup>47</sup> Ձեռնարկի 68-րդ կետի համաձայն՝ չնայած ուժի գործադրումը հաճախ պարտադիր է որոշակի ծառայությունների՝ հանցագործությունների կանխման կամ օրինախախտների կամ կասկածյալների օրինական ձերբակալման աջակցության ժամանակ, այդուհանդերձ ոստիկանության ծառայողները պետք է առաջնորդվեն այն սկզբունքով, որ ուժի գործադրումը պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց, որը չպետք է կիրառվի կամայականորեն, այլ պետք է համապատասխանի սպառնացող վտանգին՝ նվազեցնելով վնասն ու վնասվածքները, և կիրառվի միայն օրինական նպատակին հասնելու պահանջվող չափով:

<sup>48</sup> Ձեռնարկի 69-րդ կետի համաձայն՝ իրավապահ մարմինները չպետք է մարդկանց դեմ գործադրեն հրազեն կամ մահացու ուժ, բացառությամբ հետևյալ դեպքերի. օրինական կերպով «մահվան սպառնացող վտանգից կամ լուրջ վնասվածքից ինքնապաշտպանվելու կամ մյուսներին պաշտպանելու, կյանքի համար լուրջ սպառնալիք հանդիսացող որոշակի հանցագործությունների կանխման գործողությունների, այսպիսի վտանգ ներկայացնող և ոստիկաններին դիմադրող անձի ձերբակալման կամ նրանց փախուստի կանխման և նաև այն ժամանակ, երբ պակաս ծայրահեղ միջոցները բավարար չեն վերոնշյալ նպատակներին հասնելու համար:

<sup>49</sup> Ձեռնարկի 71-րդ կետի համաձայն՝ իրավապահ մարմինները պետք է ապահովեն, որ հնարավորինս շուտ աջակցություն և բուժօգնություն տրամադրվեն վիրավոր կամ վնասվածքներ ստացած անձանց և որպեսզի նրանց ազգականներն ու մտերիները հնարավորինս շուտ տեղեկացվեն դեպքի մասին:

<sup>50</sup> Ձեռնարկի 73-րդ կետի համաձայն՝ հրազենի կիրառման յուրաքանչյուր դեպքի համար պետք է անհապաղ կազմվի պրծանագրություն և ներկայացվի համապատասխան օղակներին

<sup>51</sup> Ձեռնարկի 89-րդ կետի համաձայն՝ կառավարություններն ու իրավապահ մարմինները պետք է մշակեն հաշվետվությունների և ուսումնասիրության արդյունավետ ընթացակարգեր, այնպես, որ ամեն անգամ դրանք ակամայից գործի դրվեն, երբ ուժի գործադրման արդյունքում վնասվածք կամ մահացու դեպք է տեղի ունենում, կամ, երբ իրավապահ մարմինների կողմից հրազեն է կիրառվում:

«Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում.

**3) սույն եզրակացության 5.2 մասի 4-րդ կետում** նշված առաջարկության կապակցությամբ Ոստիկանությունը նշում է, որ նախատեսված առաջարկությունն ընդունվել է: Կառավարության 01.04.2010թ. նիստի որոշմամբ հավանության արժանացած ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի միջոցառումների 30.4 կետի (Ձանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցություններ վարող ծառայողների համար ուղեցույցերի մշակում և ներդրում) համար նոր ժամկետ է սահմանվել 2011թ. 1-ին կիսամյակը.

**4) սույն եզրակացության 5.2 մասի 5-րդ կետում** նշված առաջարկության կապակցությամբ Ոստիկանությունը նշում է, որ լրագրողների հետ շփվելու ուղղությամբ վերջին ժամանակահատվածում իրականացված աշխատանքները տվել են դրական արդյունք: Չի արձանագրվել ոստիկանության ծառայողների կողմից լրագրողական գործունեությանը խոչընդոտելու ոչ մի դեպք, ինչ վերաբերում է զանգվածային միջոցառումների ընթացքում բանակցային և երկխոսության եզրեր հաստատող ծառայողների կողմից ձեռք բերված փորձի կիրառմանը, ապա չնայած նրան, որ գրեթե յուրաքանչյուր զանգվածային միջոցառման, և հատկապես երթի ընթացքում առաջացող խնդիրների շուրջ երկխոսության եզրեր են հաստատվում ոստիկանության համապատասխան ծառայողների և միջոցառման կազմակերպիչների միջև, երկխոսության փորձի արդյունքները դեռևս բավարար չեն և կատարելագործման կարիք ունեն.

**5) սույն եզրակացության 5.2 մասի 6-րդ կետում** նշված առաջարկության կապակցությամբ Ոստիկանությունը նշում է, որ Ոստիկանության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառվել են զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցությունների և լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման և դրանց ուղեցույցների վերաբերյալ ուսումնական թեմաներ և համապատասխան ժամաքանակներ:

---

<sup>52</sup> Չեռնարկի 145-րդ կետի համաձայն՝ ոստիկանության բաժիններին պետք է տրամադրվեն հրազենի ոչ մահացու և պաշտպանական այլընտրանքային տարբերակներ, ինչպիսիք են ոչ մահացու, վնասազերծող զենքերը և պասիվ պաշտպանական սարքերը, այդ թվում վահաններ, սաղավարտներ, փամփշտակայուն բաճկոններ և գրահապատ փոխադրամիջոցներ:

**5.4. Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովն առաջարկում է՝ սույն եզրակացության 5.1 մասում նշված միջոցառումների կատարման ընթացքի, ինչպես նաև «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության գործերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցով մոնիթորինգը շարունակել սույն եզրակացությունում նշված մյուս առաջարկությունների մոնիթորինգի շրջանակներում և արդյունքերի մասին սահմանված ժամկետներում Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

**6. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ ապահովել, որպեսզի ոստիկանության ծառայողները զանգվածային միջոցառումների ընթացքում ծառայություն իրականացնելիս պարտադիր կերպով կրեն ոստիկանության ծառայողական համազգեստ՝ զանգվածային միջոցառման մասնակիցների կողմից որպես ոստիկան ճանաչվելու համար: Մշակել ոստիկանի համազգեստի և սպառազինության այնպիսի նույնականացման միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն անձին նույնականացնել ոստիկանին: Նման միջոցներից է, օրինակ, հեշտ հիշվող անհատականացման համարների առկայությունը ոստիկանի համազգեստի վրա<sup>53</sup>:**

**6.1. Ի պատասխան Հարցմանը Կառավարությունը տեղեկացրեց, որ՝ Կառավարության 11.01.2007թ. թիվ 151-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության» կանոնագրքի թիվ 22 կետի համաձայն՝ ոստիկանության ծառայողները ծառայությունը (այդ թվում՝ զանգվածային միջոցառումների ընթացքում) կատարում են սահմանված ձևի համազգեստով: Ոստիկանության ծառայողների համազգեստի նկարագիրը, համաձայն որի ոստիկանը կարող է ճանաչվել զանգվածային միջոցառման մասնակիցների կողմից, հստակեցված է Կառավարության 31.10.2002թ. թիվ 1753-Ն «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրը և այն կրելու ժամկետները սահմանելու մասին» որոշմամբ, ինչպես նաև Ոստիկանության պետի 15.04.2003թ. թիվ 5-Ն «Ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու, այն կրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» հրամանով:**

Կառավարությունը նաև հայտնեց, որ գործուն քայլեր են ձեռնարկվում զանգվածային միջոցառումների մասնակից ոստիկանության ծառայողների համազգեստի և անհատական պաշտպանության միջոցների վրա անհատականացման

<sup>53</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 37 կետ 15:

համարների տեղադրման ուղղությամբ: Մասնավորապես, քննարկման փուլում է գտնվում Ոստիկանության պետի հրամանի նախագիծը, որով կկարգավորվի զանգվածային միջոցառումների ընթացքում հասարակական կարգը պահպանող ոստիկանության ծառայողների համազգեստի և անհատական պաշտպանության միջոցների վրա նույնականացման անհատական համարների տեղադրումը:

**6.2. Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելով սույն եզրակացության 6-րդ մասում նշված առաջարկությունների կատարման ընթացքը, Հանձնաժողովը Ոստիկանությանն առաջարկեց՝** զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության ծառայողների համազգեստի և անհատական պաշտպանության միջոցների վրա անհատականացման համարների տեղադրման աշխատանքներն իրականացնելիս քննարկել թվերի հետ միաժամանակ տառերի գործադրման, ինչպես նաև հատկապես համազգեստի վրա հեշտ հիշվող համարանիշերի տեղադրման նպատակահարմարության հարցերը<sup>54</sup>:

**6.3. Ոստիկանությունը Հանձնաժողովի նիստի արձանագրությամբ նախատեսված ժամկետում արձագանքեց<sup>55</sup> Հանձնաժողովի ներկայացրած առաջարկություններին՝** հայտնելով, որ ստորագրման է ներկայացվել Ոստիկանության պետի «Զանգվածային միջոցառումների ընթացքում հասարակական կարգի պաշտպանության և հասարակական անվտանգության ապահովման խնդիրներ իրականացնող ոստիկանության ծառայողների և զինծառայողների անձի նույնականացումը կարգավորելու մասին» հրամանի նախագիծ:

**6.4. Հանձնաժողովը համարում է, որ սույն եզրակացության 6-րդ մասում նշված առաջարկության կատարման ընթացքը ամբողջովին չի բավարարում Հանձնաժողովի ներկայացրած պահանջներին (ոստիկանի համազգեստի և սպառազինության նույնականացման միջոցներում օգտագործվել են միայն թվեր) և առաջարկում է խնդրի վերջնական կարգավորման վերաբերյալ Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

**7. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ապահովելու նախապատրաստվող օպերատիվ-հետախուզական միջոցառման գաղտնիությունը<sup>56</sup>:**

**7.1. Ի պատասխան Հարցմանը Կառավարությունը տեղեկացրեց, որ՝**

<sup>54</sup> Տես՝ Հավելված 5:

<sup>55</sup> Տես՝ Հավելված 7:

<sup>56</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 35-36 կետ 8:

1) տեղեկատվության (այդ թվում՝ նախապատրաստվող օպերատիվ-հետախուզական միջոցառման վերաբերյալ) գաղտնապահության կանոնների խախտման համար նախատեսվող պատասխանատվությունը անհատականացված է, և համաձայն գործող կարգի, գաղտնի և հույժ գաղտնի տեղեկատվության հետ առնչվող ոստիկանության ծառայողները գրավոր պարտավորություն են ստանձնում դրանք չիրապարակելու և չտարածելու մասին:

2) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ձեռնարկվել են լրացուցիչ միջոցառումներ՝ նախապատրաստվող և իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիությունը ապահովելու և կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ:

7.2. Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելով սույն եզրակացության 7-րդ մասում նշված առաջարկության կատարման ընթացքը, **Հանձնաժողովը ՀՀ ոստիկանությանն առաջարկեց՝ նախապատրաստվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիությունն ապահովելու նապատակով իրականացնել լրացուցիչ հրահանգավորում և ուսուցում<sup>57</sup>:**

7.3. Ոստիկանությունը Հանձնաժողովի նիստի արձանագրությամբ նախատեսված ժամկետում արձագանքեց<sup>58</sup> Հանձնաժողովի ներկայացրած առաջարկություններին՝ տեղեկացնելով, որ ստորագրվել է Ոստիկանության պետի «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիության պահպանումն ամրապնդելու ուղղությամբ լրացուցիչ ուսուցում կազմակերպելու մասին» ցուցում:

7.4. **Հանձնաժողովն առաջարկում է՝ սույն եզրակացության 7-րդ մասում նշված առաջարկության կատարման ընթացքն համարել բավարար, իսկ այդ հարցով մոնիթորինգն՝ ավարտված:**

8. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ վերանայել ոստիկանության գործողությունների վերաբերյալ բոլոր այն իրավական ակտերը, որոնցով կերաշխավորվի, որ ուժի կիրառմանը վերաբերող օրենքներն ու իրավական ակտերը ամբողջովին համապատասխան կլինեն քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին, Մարդու իրավունքների եվրոպական

<sup>57</sup> Տես՝ Հավելված 5

<sup>58</sup> Տես՝ Հավելված 7:

**կոնվենցիային և ՄԱԿ-ի՝ իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ հիմնարար սկզբունքներին<sup>59</sup>:**

**8.1.** Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը տեղեկացրեց**, որ ուժի կիրառման տեսանկյունից ոստիկանության գործողությունները կանոնակարգող բոլոր իրավական ակտերը (ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման հիմքերը, պայմաններն ու սահմանները հստակեցված են «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով) համապատասխանեցված են քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և ՄԱԿ-ի իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ հիմնարար սկզբունքներին: Միաժամանակ, Կառավարությունը տեղեկացրեց, որ իրականացվելու է նաև Հարցմամբ նշված հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված ոստիկանության գործողությունների իրականացման իրավական բազայի կատարելագործումը:

**8.2. Հաշվի առնելով վերոգրյալը, հանձնաժողովն առաջարկում է՝ սույն եզրակացության 8-րդ մասում ներկայացված առաջարկության կատարման ընթացքի մոնիթորինգն իրականացնել սույն եզրակացության, մասնավորապես՝ 1-ին մասում նշված առաջարկության կատարմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների շրջանակում:**

**9. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ քննարկման առարկա դարձնել և սահմանել հստակ կանոններ՝ ոստիկանության ծառայողի անհատական անվտանգությունը ապահովելու տեսանկյունից<sup>60</sup>:**

**9.1.** Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը հայտնեց**, որ ոստիկանության ծառայողների անհատական պաշտպանության խնդիրը հստակեցված է Կառավարության 11.01.2007թ. թիվ 151-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության» կանոնագրքի 25, 41 և 60 կետերով, ինչպես նաև «ՀՀ ՆԳՆ համակարգի ստորաբաժանումների ուժերի և միջոցների օգտագործման կարգը զանգվածային անկարգությունները կանխելիս» ՀՀ ՆԳՆ 15.03.2002թ. թիվ 107 հրամանով, որտեղ սահմանվում է զանգվածային անկարգությունների դեպքերում հատուկ համահավաք ջոկատի կազմավորման կարգը՝ իր կազմում ընդգրկված ունենալով տարբեր գործառույթներ ունեցող և համապատասխան հանդերձավորված ու

<sup>59</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 129 կետ 2:

<sup>60</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 27:

սպառազինված ոստիկանության ծառայողների խմբեր: Միևնույն ժամանակ, Կառավարությունը տեղեկացրեց, որ զանգվածային միջոցառումների ընթացքում Ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումներն առավել արդյունավետ դարձնելու, գործադրման առումով առավել անվտանգ տեխնիկական և հատուկ միջոցներով ոստիկանությունը հագեցնելու, ինչպես նաև ոստիկանության ծառայողների անհատական անվտանգությունն ապահովելու նպատակով, 2008–2009թթ. ընթացքում կատարվել է ոստիկանության արտաքին ծառայությունների վերազինում՝ ձեռք են բերվել ինչպես անհատական պաշտպանության, այնպես էլ հատուկ միջոցներ:

**9.2.** Սույն եզրակացության **9-րդ մասում** նշված առաջարկության մոնիթորինգի շրջանակներում ***Չանձնաժողովը հատկապես կարևորում է Ոստիկանության աշխատակիցների անհատական պաշտպանության միջոցների օրենսդրորեն կարգավորման հարցը***, քանի որ այդ միջոցների արդյունավետությունը կարող է նվազեցնել որոշակի իրավիճակներում հատուկ միջոց կամ զենք կիրառելու անհարժեշտությունը:

Այդ կապակցությամբ Չանձնաժողովը նպատակահարմար է համարում ուղակիորեն մեջբերել «Խաղաղ հավաքների ազատության» ուղեցույցի<sup>61</sup> 141-րդ մասը, ըստ որի *«Իրավապահ մարմինների կողմից անհարկի, ոչ օրինական և չափազանց հզոր ուժի գործադրումը կարող է խախտել հիմնարար ազատությունները և պաշտպանված իրավունքները, խարխլել ոստիկանություն-հասարակություն հարաբերությունները և լայնածավալ լարվածության ու հուզումների պատճառ դառնալ: Չետևաբար, ուժի գործադրումը պետք է կանոնակարգված լինի ազգային օրենսդրությամբ<sup>62</sup>, որի դրույթները պետք է սահմանեն այն հանգամանքները, որոնց պարագայում ուժի կիրառումը (ներառյալ համարժեք և նախապես արված նախազգուշացումները) արդարացված է: Դրույթները պետք է նաև սահմանեն տարաբնույթ վտանգների դիմակայման համար գործադրվող ուժի մակարդակը: Կառավարությունները պետք է մշակեն արձագանքման մի շարք միջոցներ և զինեն իրավապահ մարմիններին տարբեր տեսակի զենք-զինամթերքով, ինչը նրանց թույլ կտա տարբերակված ձևով կիրառել*

<sup>61</sup> «Խաղաղ հավաքների ազատության» Ուղեցույց, ԵԱԴԿ Երևանյան գրասենյակ, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, ք. Երևան-2009թ.

<sup>62</sup> Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1979-ին ընդունած Ոստիկանության մասին հռչակագրի վերաբերյալ որոշման կետ 13-ում նշված է. «Ոստիկանության աշխատակիցները պետք է հստակ և ճշգրիտ ցուցումներ ստանան, թե ինչ ձևով և հանգամանքներում իրենք կարող են զենք օգտագործել»: Նմանապես ՄԱԿ-ի «Իրավապահ մարմինների ուժի և իրազեցի կիրառման հիմնական սկզբունքների» կետ 1-ում նշվում է, որ իշխանությունն երբ և իրավապահ մարմինները պետք է ընդունեն և կիրառեն կարգեր և նորմատիվ ային փաստաթղթեր՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից մարդկանց նկատմամբ ուժի ու իրազեցի օգտագործման վերաբերյալ:

ուժը: Դրանց թվում պետք է լինեն մահ առաջ չբերող, հատուկ միջոցներ՝ որոշ հանգամանքներում օգտագործելու համար: Ավելին՝ իրավապահ մարմինները պետք է ապահովված լինեն ինքնապաշտպանական միջոցներով, ինչպես, օրինակ՝ վահաններով, սաղավարտներով, զրահաբաճկոններով, հրակայուն հագուստով, ինչպես նաև զրահապատ տրանսպորտային միջոցով, որպեսզի նվազագույնի հասցվի ցանկացած տեսակի զենքի կիրառման անհրաժեշտությունը<sup>63</sup>: Սա ևս մեկ անգամ մատնանշում է պետության կողմից իրավապահ մարմիններին համապատասխան միջոցներ հատկացնելու պահանջը՝ խաղաղ հավաքների ազատությունը պաշտպանելու նրանց պարտականությունը դրականորեն կատարելու նպատակով:»:

**9.3. Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովն առաջարկում է՝ սույն եզրակացության 9-րդ մասում նշված առաջարկության կատարման ընթացքի մոնիթորինգն իրականացնել սույն եզրակացությամբ նախատեսված օրենսդրական բարեփոխումների և պետական բյուջեի նախագծի քննարկումների շրջանակում՝ արդյունքների մասին Ազգային ժողովին զեկուցելով Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

10. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ քննարկման առարկա դարձնել և մշակել միջոցառումներ, որոնք ուղղված են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի և միջազգային կառույցների զեկույցներում ներկայացված՝ հանրապետության ներքին կյանքում, ժողովրդավարական համակարգում տեղ գտած բացասական դրսևորումների վերացմանը<sup>64</sup>:

**10.1. Հաշվի առնելով, որ սույն եզրակացության 10-րդ մասում նշված առաջարկության վերաբերյալ պատասխանը դեռևս չի ստացվել, Հանձնաժողովն առաջարկում է՝ շարունակել այդ առաջարկության մոնիթորինգը և արդյունքների մասին Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացության քննարկման ժամանակ:**

11. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ ապահովել խոսքի ազատություն, պայմաններ ստեղծել էլեկտրոնային լրատվամիջոցներում բազմակարծության և անկողմնակալության ապահովման համար<sup>65</sup>:

11.1. Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը տեղեկացրեց**, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռար-

---

<sup>63</sup> Տես՝ Simsek-ն ընդդեմ Թուրքիայի (2005), կետ 91:  
<sup>64</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 131 կետ 1:  
<sup>65</sup> Տես՝ նույնի էջ 131 կետ 2:

ծակման թվային համակարգի ներդրման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ձևավորվել է տեխնիկական և իրավական հարցերի գծով երկու աշխատանքային խումբ:

Կառավարությունն նաև հայտնեց, որ իրավական հարցերի գծով աշխատանքային խմբի կողմից կիրականացվի օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և կնախաձեռնվեն համապատասխան իրավական փոփոխություններ, որոնց արդյունքում կապահովվի սահմանված ժամկետում (2010թ. հունիսի 20) հեռուստառադիոհաճախականության լիցենզավորման նոր մրցույթի հայտարարումը: ԵԱՅԿ-ն իր պատրաստակամությունն է հայտնել օժանդակելու ոլորտի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանող օրենսդրական դաշտի ձևավորմանը, իսկ իտալացի գործընկերները պատրաստակամություն են հայտնել պատրաստել Չայաստանի ռադիոյի և հեռուստատեսության թվայնացման վերաբերյալ բիզնես ծրագիր, որը կընդգրկի թվայնացման գործընթացի տեխնիկական և ֆինանսական կողմերը:

Ըստ Կառավարության, վերոնշյալ քայլերի իրականացման արդյունքում պայմաններ կստեղծվեն երկրում խոսքի ազատության, ինչպես նաև էլեկտրոնային լրատվամիջոցներում բազմակարծության և անկողմնակալության ապահովման համար:

**11.2. *Ելնելով վերոգրյալից Չանձնաժողովն առաջարկում է՝ շարունակել սույն եզրակացության 11-րդ մասում նշված առաջարկության մոնիթորինգը և արդյունքների մասին, այդ թվում՝ մինչև 2010 թվականի հունիսի 20-ը կատարվելիք օրենսդրական փոփոխությունների և հեռուստառադիոհաճախականության լիցենզավորման նոր մրցույթի հայտարարման ընթացքի վերաբերյալ Ազգային ժողովին զեկույցել Չանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:***

12. Ժամանակավոր հանձնաժողովն իր եզրակացությամբ առաջարկել է՝ իրականացնել ԵՍԽԿ 1532 (2007), 1609 (2008), 1620 (2008), 1643 (2009) և 1677 (2009) բանաձևերով Չայաստանի Չանրապետությանը ներկայացված առաջարկությունները<sup>66</sup>:

12.1. Ի պատասխան Չարցմանը Կառավարությունը տեղեկացրեց, որ Կառավարությունը 2010 թվականի հունվարի 29-ի նիստում հավանության է արժանացրել ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կատարման վերաբերյալ Չայաստանի Չանրապետության 2-րդ և 3-րդ համատեղ պարբերական ազգային զեկույցները, որոնք մանրամասն անդրադառնում են այս ոլորտում զարգացումներին և ներկայացնում է նաև տեղեկատվություն՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1609, 1620,

<sup>66</sup> Տես՝ նույնի էջ 131 կետ 3:

1643 և 1677 բանաձևերի կատարման վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան տեղեկանք:

**12.2. Ուսումնասիրելով ներկայացված տեղեկանքը և համապատասխան այլ նյութեր Հանձնաժողովը գտնում է, որ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1609, 1620, 1643 և 1677 բանաձևերով նախատեսված մի շարք դրույթներ գործնականում իրացվել են:**

*Այդուհանդերձ, Հանձնաժողովն առաջարկում է՝ համագործակցելով ԵՄԽՎ համապատասխան կառույցների հետ շարունակել սույն եզրակացության 12-րդ մասի կատարման ընթացքի մոնիթորինգը և արդյունքների մասին Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:*

**13. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելով՝ ստեղծել բողոքարկման և գանգատարկման այնպիսի համակարգ, որում ընտրական գործընթացի մասնակիցները կարողանան հնարավորինս լիարժեք իրավական պաշտպանություն ստանալ ենթադրյալ ընտրախախտումների դեպքում, ինչպես նաև գործնականում հավասար հնարավորություններ երաշխավորել քաղաքական բոլոր ուժերին թե՛ պաշտոնական քարոզարշավի ընթացքում, թե՛ դրան նախորդող ժամանակահատվածում<sup>67</sup>:**

**13.1. Ի պատասխանում Հարցմանը Կառավարությունը տեղեկացրեց, որ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելով՝ ստեղծել բողոքարկման և գանգատարկման այնպիսի համակարգ, որում ընտրական գործընթացի մասնակիցները կարողանան հնարավորինս լիարժեք իրավական պաշտպանություն ստանալ ենթադրյալ ընտրախախտումների դեպքում, ինչպես նաև գործնականում հավասար հնարավորություններ երաշխավորել քաղաքական բոլոր ուժերին թե՛ պաշտոնական քարոզարշավի ընթացքում, թե՛ դրան նախորդող ժամանակահատվածում:**

**13.2. Սույն եզրակացության 13-րդ մասում նշված առաջարկության առնչությամբ Հանձնաժողովը նպատակահարմար է համար նշել, որ 2008 թվականի Նախագահական ընտրություններից հետո Հանձնաժողովում ստեղծվեց ՀՀ ընտրական օրենսգրքի բարեփոխումների աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվեցին Ազգային ժողովի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի, կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների շուրջ 19 ներկայացուցիչ: Ներկայումս նշված աշխատանքային խմբի, միջազգային կառույցների առաջարկությունների, ինչպես նաև**

<sup>67</sup> Տես՝ նույնի էջ 131 կետ 4:

անցած ժամանակահատվածում Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված՝ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի հիման վրա մշակվում է «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը մինչև 2010 թվականի ավարտը կդրվի շրջանառության մեջ:

**Հանձնաժողովը կարևորում է նաև,** որ Կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի N 1272-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրով» նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

1) բացառել քաղաքական գործընթացներում ընտրական հանձնաժողովների անդամների ներգրավումը՝ 2010-2011թ.թ..

2) բարելավել ընտրական հանձնաժողովներին ուղղված դիմումների և բողոքների քննարկման գործընթացը՝ 2011 թ.

3) հստակ տարանջատել պաշտոնատար անձանց քաղաքական ընթացիկ գործունեությունը նախընտրական քարոզչությունից՝ 2011 թ.

4) խստացնել ընտրակաշառք երևույթի դեմ պայքարը՝ 2009- 2011 թ.թ.

5) բարձրացնել կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը և ֆինանսական գործունեության վերահսկողությունը՝ 2010 թ.:

**13.3. Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովն առաջարկում է՝ շարունակել սույն եզրակացության 13.2 մասում նշված աշխատանքների և միջոցառումների կատարման ընթացքի մոնիթորինգը և արդյունքների մասին սահմանված ժամկետներում Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

14. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝

1) «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելով՝ բացառել ժողովներ, հանրահավաքների, երթերի և ցույցերի իրազեկումները տեխնիկական հիմքերով մերժելը կամ այլ անհարկի սահմանափակումներ կիրառելը<sup>68</sup>:

2) «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով լուծել դատավարությունների ընթացքում դատարանների անմիջական մերձակայքում

<sup>68</sup> Տես՝ նույնի էջ 131-132 կետ 5:

**հավաքների անցկացման հարցը՝ բացառելով արդարադատության իրականացման վրա բացասական ազդեցության գործադրումը<sup>69</sup>:**

**14.1. Ի պատասխան Չարցմանը Կառավարությունը տեղեկացրեց**, որ «ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հստակ կարգավորված են ժողովների, հանրահավաքների, երթերի և ցույցերի իրազեկումների և զանգվածային հրապարակային միջոցառման արգելման հետ կապված հարաբերությունները, չկան անհարկի սահմանափակումներին վերաբերող դրույթներ և այդ առումով նշված օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը չկա: Միաժամանակ, Կառավարություն ընդունելի համարում Չարցման 19-րդ կետով նախատեսված առաջարկությունը, որի համաձայն հիշյալ օրենքում փոփոխություն կատարելու միջոցով պետք է լուծվի դատավարությունների ընթացքում դատարանների անմիջական մերձակայքում հավաքների անցկացման բացառման հարցը:

**14.2. Հանձնաժողովը նպատակահարմար է համարում նշել**, որ համաձայն «Խաղաղ հավաքների մոնիթորինգը Հայաստանում» Հայաստանի Հելսինկյան Կոմիտեի 2009 թվականի զեկույցի՝

*«Ըստ Երևանի քաղաքապետարանի տրամադրած տվյալների՝ 2007թ. ընթացքում Երևանի քաղաքապետարանն ստացել է 208 իրազեկում, որոնցից 200-ի վերաբերյալ ընդունվել են իրազեկումն ի գիտություն, իսկ 8-ի վերաբերյալ՝ արգելելու կամ այլ վայրում անցկացնելու մասին որոշումներ: 2008 թ. հունվարից մինչև հոկտեմբերի 2-ը Երևանի քաղաքապետարանն ստացել է 164 իրազեկում: 57 իրազեկման վերաբերյալ ընդունվել են իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշումներ, 49 իրազեկման վերաբերյալ գրություններով առաջարկվել է միջոցառումներն անցկացնել այլ վայրերում, 6 իրազեկում կազմակերպիչների խնդրանքով հանվել է քննարկումից, 52 իրազեկման վերաբերյալ ընդունվել են արգելման որոշումներ: 2008 թ. սեպտեմբերի 26-ից մինչև 2009 թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում (մոնիթորինգի իրականացման ժամանակահատվածը) Երևանի քաղաքապետարան ստացվել է 31 իրազեկում, որոնցից 18-ն ընդունվել է ի գիտություն, 12 իրազեկման վերաբերյալ ընդունվել են միջոցառման արգելման մասին որոշումներ, իսկ 1 իրազեկման դեպքում համաձայնություն է ձեռք բերվել միջոցառումն անցկացնել մեկ այլ վայրում:»<sup>70</sup>: Բացի*

<sup>69</sup> Տես՝ նույնի էջ 133 կետ 5:

<sup>70</sup> Տես՝ «Խաղաղ հավաքների մոնիթորինգը Հայաստանում» Հայաստանի Հելսինկյան Կոմիտեի 2009 թվականի զեկույցի, էջ 23

այդ, զեկույցում նշվում է, որ «2008 թ. սեպտեմբերի 26-ից մինչև 2009 թ. մարտի 31-ը իրականացված դիտարկումների արդյունքների համաձայն՝ հավաքների մոտ 60 %-ն անցել է առանց լուրջ խոչընդոտների, սակայն շատ դեպքերում սահմանափակվել է ընդդիմության և այլ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից հավաքների անցկացումը»<sup>71</sup>:

Ձեկույցում բերված են նաև կոնկրետ օրենսդրական փոփոխությունների առաջարկներ, որոնք ներկայումս ուսումնասիրվում են Հանձնաժողովի կողմից:

**14.3. Հանձնաժողովը կարևորում է** ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2010 թվականի «Հայաստանի Հանրապետությունում խաղաղ հավաքների իրավունքի մասին» արտահերթ զեկույցը, որտեղ ներկայացվել են խաղաղ հավաքների իրավունքի իրավական կարգավորումը և ձևավորված միջազգային չափորոշիչները, Հայաստանի Հանրապետությունում նշված բնագավառի օրենսդրության կիրառման ընթացքը, պրակտիկան և դատական պաշտպանության ընդհանուր պատկերը և արդյունավետությունը:

Ըստ զեկույցում ներկայացված եզրակացության՝

*«Հայաստանի Հանրապետությունում խաղաղ հավաքների իրավունքի առկա վիճակը մի շարք առումներով չի համապատասխանում այս ոլորտի միջազգային չափորոշիչներին:*

*Թեև հավաքների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը 2004 թվականից հետո ընդհանուր առմամբ համապատասխանեցվեց միջազգային չափորոշիչներին, սակայն դրանում տեղ գտած երբեմն ոչ հստակ ձևակերպումները, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող դրույթները պատճառ են դառնում հակասական իրավակիրառական պրակտիկայի:*

*Իրազեկումը քննարկող լիազոր մարմինների գործունեության մեջ առկա չէ միասնականությունը, ինչն իր հերթին շատ դեպքերում հանգեցնում է իրավական անորոշության և խնդիրներ է առաջացնում իրավակիրառ պրակտիկայում:*

*Արդյունավետ չեն կարող համարվել նաև այս իրավունքի դատական պաշտպանության մեխանիզմները:*

*Մասամբ կամ անբողջությամբ խախտված են հավաքների իրավունքի հետևյալ վեց ղեկավար սկզբունքները՝ հօգուտ հավաքների անցկացման կանխավարկածը, խաղաղ հավաքներ պաշտպանելու պետության պարտականությունը,*

---

<sup>71</sup> Տես՝ նույնի էջ 24

օրինականությունը, համաչափությունը, լավ վարչարարությունը, խտրականության բացառումը:

Հանրային իշխանությունների վարքագիծը շատ դեպքերում հիմք է տալիս պնդելու, որ վերջիններիս կողմից լիարժեք չի գնահատվում հավաքների ազատության կարևորությունը, մասնավորապես այն, որ հավաքների իրավունքը կարող է որպես միջոց ծառայել երկրում առկա մի շարք խնդիրների լուծման համար, որ այն միջոց է տեսակետներ արտահայտելու և ընդհանուր շահերի պաշտպանության համար:

Խաղաղ հավաքների իրավունքը ժողովրդավարական հասարակության մեջ մարդու և քաղաքացու կարևորագույն իրավունքներից մեկն է, և դրա պաշտպանությունը անհրաժեշտություն է հանդուրժող հասարակության ստեղծման համար, որտեղ տարբեր վարվելակերպ, սկզբունքներ, գաղափարներ, քաղաքական հայացքներ ունեցող մարդիկ ու խմբեր կարող են խաղաղ գոյակցել<sup>72</sup>»:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պատրաստվում է Կառավարություն ներկայացնել «ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ:

**14.4. Հաշվի առնելով վերոգրայլը, Հանձնաժողովն առաջարկում է՝ շարունակել սույն եզրակացության 14-րդ մասում նշված առաջարկությունների մոնիթորինգը, քննարկել ներկայացվելիք օրենսդրական ակտերի նախագծերը և արդյունքների մասին Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

**15. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝**

1) Կատարելագործել վկայի կողմից ցուցմունք տալու ինստիտուտը, այդ թվում՝ նպատակ ունենալով վերացնելու մինչդատական վարույթի ընթացքում տրված ցուցմունքներից հետագայում վկայի հրաժարվելուն նպաստող պատճառներն ու պայմանները<sup>73</sup>.

2) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ կալանքին վերաբերող դրույթները համապատասխանեցնել՝ Մարդու իրավունքների և հիմնարար

<sup>72</sup> Տես՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2010 թվականի «Հայաստանի Հանրապետությունում խաղաղ հավաքների իրավունքի մասին» արտահերթ զեկույց (<http://www.ombuds.am/main/am/10/31/>)

<sup>73</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 132-133 կետ 5:

**ազատությունների եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների<sup>74</sup>:**

**15.1.** Ի պատասխան **Չարցմանը Կառավարությունը տեղեկացրեց**, որ աշխատանքային խմբի կողմից մշակվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, որը սահմանված կարգով կներկայացվի Կառավարություն: Հիշյալ նախագծի դրույթները պետք է համապատասխանեն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի» և «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների պահանջներին»:

**15.2.** Սույն եզրակացության **15-րդ մասում** նշված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ **Հանձնաժողովը նպատակահարմար է համարում նշել** նաև, որ`

**1)** Հանձնաժողովում ներկայումս գործում է աշխատանքային խումբ, որը նպատակ ունենալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները համահունչ դարձնել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի, ինչպես նաև տվյալ հարցով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների պահանջներին, գրեթե ավարտին է հասցրել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով մասնավորապես նախատեսվում է`

**ա)** կալանավորում խափանման միջոցի կիրառումը սահմանափակելու նպատակով` ներդնել տնային կալանք խափանման միջոցը.

**բ)** հստակեցնել խափանման միջոցները կիրառելու հիմքերը` տարանջատելով անազատության մեջ պահելու և անազատության մեջ չպահելու հետ կապված խափանման միջոցները կիրառելու հիմքերը.

**գ)** հստակեցնել բոլոր խափանման միջոցների ապահովման պայմանները:

**2)** հրապարակվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի «Հայաստանում «Դատավարությունների դիտարկում» նախագծի 2010 թ. վերջնական զեկույցը, որը ներկայումս ուսումնասիրվում է Հանձնաժողովում` համապատասխան օրենքների նախագծերի մշակման ընթացքում կիրառելու նպատակով:

**15.3. Հանձնաժողովը հատկապես կարևորում է**, որ ՀՀ Նախագահի 2010 թվականի ապրիլի 26-ի ՆԿ-58-Ա կարգադրությամբ` ՀՀ քրեական դատավարության նոր

<sup>74</sup> Տես` նույնի էջ 134 կետ 5:

օրենսգրքի հայեցակարգ և նոր օրենսգրք մշակելու, անհրաժեշտ օրենսդրական փաթեթ նախապատրաստելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով, որին հանձնարարվել է մասնավորապես՝

1) ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի մասնակցությամբ և համաձայնությամբ քննարկել ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի զեկույցներում արտացոլված հարցադրումներն ու առաջարկությունները, ձևավորել միասնական դիրքորոշում և դրանք քննարկել ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի փորձագետների հետ.

2) եռամսյա ժամկետում մշակել և Հանրապետության Նախագահին ներկայացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության բարեփոխումների հայեցակարգ.

3) մինչև 2011 թվականի մարտի 1-ը մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը:

**15.4. Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովն առաջարկում է՝ շարունակել սույն եզրակացության 15-րդ մասում նշված առաջարկությունների կատարման ընթացքի մոնիթորինգը և արդյունքների մասին Ազգային ժողովին զեկույցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

**16. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ շուտափույթ ընդունել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, որը համահունչ պետք է լինի նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մոտեցումներին»<sup>75</sup>:**

**16.1. Ի պատասխան Հարցմանը Կառավարությունը տեղեկացրեց,** որ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել 2007 թվականի հուլիսի 31-ին: Այնուհետև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից լրամշակված և Հայաստանի Հանրապետության կառավարությունում հավանության արժանացած «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակը 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Նշված օրենքի

<sup>75</sup> Տես՝ նույնի էջ 134 կետ 6:

նախագիծն արդեն ընդգրկվել է Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի մեծ օրակարգում:

**16.2. Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովն առաջարկում է՝ շարունակել Կ-057 «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» (Հեղինակ՝ Կառավարություն) ՀՀ օրենքի նախագծի քննարկման ընթացքի մոնիթորինգը:**

17. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ հաստատել սոցիալական համերաշխություն և արդարություն, սահմանել կենսաապահովման նվազագույն զամբյուղ և բյուջե, և աղքատության շեմը համապատասխանեցնել դրան, ինչպես նաև դրա հաշվառմամբ հետևողական բարձրացնել աշխատավարձերը, կենսաթոշակները, նպաստները, ապահովել հասարակության համախմբումն ու ներքաղաքական կայունությունը<sup>76</sup>:

17.1. Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը ներկայացրեց** ՀՀ 2008-2010 թվականների պետական բյուջեներով նախատեսված հիմնական սոցիալական ցուցանիշների մասին տեղեկատվությունը (աղյուսակը)՝ հայտնելով, որ նշված ցուցանիշների միջնաժամկետ կանխատեսումները կքննարկվեն առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում:

Կառավարությունը նաև հայտնեց, որ նախատեսվում է հաստատել սոցիալական համերաշխություն և արդարություն, սահմանել կենսաապահովման նվազագույն զամբյուղ և բյուջե, և աղքատության շեմը համապատասխանեցնել դրան, ինչպես նաև դրա հաշվառմամբ հետևողական բարձրացնել աշխատավարձերը, կենսաթոշակները, նպաստները, ապահովել հասարակության համախմբումն ու ներքաղաքական կայունությունը<sup>77</sup>:

**17.2. Սույն եզրակացության 17-րդ մասում** նշված առաջարկությունների կատարման ընթացքը քննարկվեց Հանձնաժողովի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի, սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների՝ ֆինանսների, ինչպես նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած համատեղ նիստում, որի արդյունքում **Կառավարությանը ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները՝**

1) Սեղմ ժամկետներում ներկայացնել եզրակացություն Պ-113-04.09.2007 «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ

<sup>76</sup> Տես՝ նույնի էջ 136 կետ 11 «ա» ենթակետ:

<sup>77</sup> Սույն մասով ՀՀ կառավարության պատասխանների մանրամասները տես՝ Հավելված 3-ում:

կատարելու մասին» (Յեղիճակներ՝ Սամվել Նիկոյան, Կարեն Ավագյան) և Պ-114-05.09.2007 «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (Յեղիճակներ՝ Հրայր Կարապետյան, Արծվիկ Մինասյան, Ռուզաննա Առաքելյան, Արտյուշ Շահբազյան, Վահան Հովհաննեսյան, Արա Նռանյան, Արթուր Աղաբեկյան, Լիլիթ Գալստյան, Արմեն Ռուստամյան) ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ.

2) Ձևավորել Կառավարության մոտեցումը «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի փոփոխված տարբերակի վերաբերյալ<sup>78</sup>.

3) Ընդունել ի գիտություն, որ կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը սահմանելու հարցը նպատակահարմար է չփոխկապակցել պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ներկայացման հետ.

4) Ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն ընտանեկան նպաստի համակարգի բարեփոխման քաղաքականության ուղղությունների վերաբերյալ, մասնավորապես՝ անդրադարձ կատարելով նախորդ տարներին սոցիալական նպաստների համակարգի բարեփոխումների արդյունավետությանը և Յորքի համալսարանի հետազոտություններին.

5) Ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն ընտանեկան նպաստի ծրագրերի հասցեականության բարձրացման, վարչարարության բարելավման և բնակչության իրազեկման բարձրացման ուղղություններով ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ.

6) Ձևավորել Կառավարության մոտեցումը ընտանեկան նպաստի համակարգին զուգահեռ՝ աղքատ ընտանիքներին ինքնուրույնաբար աղքատության հաղթահարմանն ուղղված գործողությունները խթանելու ծրագրերի ստեղծման և իրականացման նպատակահարմարության վերաբերյալ.

7) Ներկայացնել տեղեկատվություն գյուղատնտեսության աջակցության ծրագրերի, դրանց ծավալների և արդյունքների վերաբերյալ (ըստ մարզերի)<sup>79</sup>:

**17.3. Հաշվի առնելով, որ սույն եզրակացության 17.2 մասում թվարկված առաջարկությունների կապակցությամբ Կառավարության պատասխանը դեռևս չի ստացվել, Հանձնաժողովն առաջարկում է՝ նշված առաջարկությունների կատարման**

<sup>78</sup> Մանրամասները տես՝ Հավելված 6-ում:

<sup>79</sup> Տես՝ Հավելված 6:

**ընթացքի մասին Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ընթացքում:**

**18. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ համակարգային, հետևողական ու արդյունավետ պայքար ծավալել կոռուպցիայի դեմ<sup>80</sup>:**

**18.1.** Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը տեղեկացրեց**, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ձեռնարկվել են լրացուցիչ միջոցառումներ նախապատրաստվող և իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիությունը ապահովելու և կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ: Ի կատարումն «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության 08.10.2009թ. թիվ 1272-Ն որոշման պահանջների Ոստիկանության պետի 22.12.2009թ. թիվ 3209-Ա հրամանով հաստատվել է «Հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թվականների ծրագրով նախատեսված և ՀՀ ոստիկանության իրավասությանը վերաբերող միջոցառումների ցանկը», որում ներառված միջոցառումներն իրականացվում են համաձայն ժամանակացույցի<sup>81</sup>:

**18.2.** Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելով սույն եզրակացության **18-րդ մասում** նշված առաջարկության կատարման ընթացքը, Հանձնաժողովը որոշեց **Ոստիկանությանն առաջարկել՝ քննարկել կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում կաշառքի սադրանքի որոշ տեսակների թույլատրման և օրենսդրական կարգավորման հարցը, ինչպես նաև կաշառքի առաջարկների մասին իրավապահ մարմիններին հայտնելու դեպքում հայտարարողի պատասխանատվությունը մեղմացնելու կամ պատասխանատվությունից ազատելու նպատակահարմարության հարցերը և ներկայացնել առաջարկություններ<sup>82</sup>:**

**18.3.** Ի պատասխան Հանձնաժողովի առաջարկության Ոստիկանությունը Հանձնաժողովի նիստի արձանագրությամբ նախատեսված ժամկետում արձանքեց<sup>83</sup> Հանձնաժողովի ներկայացրած առաջարկություններին՝ տեղեկացնելով, որ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում կաշառքի սադրանքի որոշ տեսակների թույլատրմանը և օրենսդրական կարգավորմանը վերաբերող առաջարկությունը

<sup>80</sup> Սույնի էջ 136 կետ 11 «բ» ենթակետ:

<sup>81</sup> Մանրամասները տես՝ Հավելված 6-ում:

<sup>82</sup> Տես՝ Հավելված 5:

<sup>83</sup> Տես՝ Հավելված 7:

քննարկման փուլում է և առաջարկություններ կներկայացվեն արձանագրությամբ նախատեսված ժամկետում:

**18.4. Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության 08.10.2009թ. թիվ 1272-Ն որոշմամբ սահմանված միջոցառումների իրականացումն ապահովվելու և սահմանված մոնիթորինգային ցացանիշներն արձանագրվելու դեպքում կարելի է համարել, որ պատշաճ քայլեր են կատարվել կոռուպցիայի դեմ պայքարում: Ուստի, Հանձնաժողովն առաջարկում է՝ նշված ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը Հանձնաժողովի կողմից իրականացվող մոնիթորինգի առարկա չդարձնել:**

**Բացի այդ, Հանձնաժողովը կարևորում է 2009 թվականի հոկտեմբերի 22-ին Կառավարության կողմից ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 1205-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից) կիրառումը օրենքների նախագծերի մշակման գործընթացում և այդ առումով՝ նաև Ազգային ժողովի մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարում:**

**19. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝**

1) էականորեն կրճատել ստվերային տնտեսությունը, ապահովել եվրոպական երկրների միջինացված ցուցանիշներին համադրելի հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցություն, ապահովել մրցակցային հավասար և արդարացի պայմաններ, բացառել արհեստական տնտեսական մենաշնորհները<sup>84</sup>.

2) կրճատել գործազրկության մակարդակը՝ պետության նախաձեռնության և/կամ մասնավորի խրախուսման հենքի վրա նոր աշխատատեղերի ստեղծմամբ և իրականացնել ժողովրդագրական ակտիվ քաղաքականություն<sup>85</sup>:

**19.1. Ի պատասխան Հարցմանը Կառավարությունը տեղեկացրեց, որ իր կողմից հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: ՀՀ աշխատանքային օրենսգրքում առա-**

<sup>84</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 136 կետ 11 «գ» ենթակետ:

<sup>85</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11 «ե» ենթակետ:

ջարկված փոփոխությունները նպատակ ունեն օրենսգրքի դրույթները համապատասխանեցնել միջազգային իրավունքի նորմերին, պայմաններ ստեղծել գործարար միջավայրի բարելավման համար: Գործատուների համար սահմանված որոշ կոշտ դրույթների փոփոխությունը կապահովի սովերային զբաղվածության կրճատումը, կբարձրանա աշխատանքի արտադրողականությունը:

**19.2.** Ինչ վերաբերվում է գործազրկության մակարդակի կրճատմանը, ապա **Կառավարությունը տեղեկացրեց**, որ համաձայն «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը յուրաքանչյուր տարի գործազրկության մակարդակի կրճատման ուղղությամբ հաստատման է ներկայացնում զբաղվածության ամենամյա պետական ծրագիրը, որում նշվում են բնակչության զբաղվածության պետական կարգավորման նպատակով հանրապետությունում իրականացվող զբաղվածության ամենամյա պետական ծրագրերը<sup>86</sup>:

**19.3.** Սույն եզրակացության **19-րդ մասում** նշված առաջարկությունների կատարման ընթացքը քննարկվեց Հանձնաժողովի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի, սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների՝ ֆինանսների, ինչպես նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած համատեղ նիստում, որի արդյունքում **հանձնաժողովները Կառավարությանն առաջարկեցին՝** հարցման 24-րդ և 26-րդ կետերում ընդգրկված առաջարկությունների վերաբերյալ ներկայացնել համարժեք պատասխան:

**Հաշվի առնելով, որ նշված պատասխանը նոր է ստացվել<sup>87</sup> և այն դեռևս քննարկվում է, Հանձնաժողովն առաջարկում է՝ շարունակել սույն եզրակացության 19-րդ մասում նշված առաջարկությունների մոնիթորինգը և արդյունքների մասին Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

**20.** Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է ձևավորել տնտեսության արդյունավետ ճյուղային կառուցվածք, իրագործել արտահանման կողմնորոշում

<sup>86</sup> Մանրամասները տես՝ Հավելված 6-ում:

<sup>87</sup> Մասնավորապես, տես՝ Հավելված 8:

**ունեցող արդյունաբերական քաղաքականություն, տարածքային համաչափ զարգացում<sup>88</sup>:**

**20.1.** Ի պատասխանում Հարցմանը **Կառավարությունը տեղեկացրեց**, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացմամբ Կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները, որի հիմքում դրված է արտահանման ուղղվածություն ունեցող զարգացած արդյունաբերական համակարգի ձևավորումը<sup>89</sup>:

**20.2. Քանի որ, սույն եզրակացության 20-րդ մասում նշված առաջարկության կատարման ընթացքը ընդգրկում է Կառավարության գործունեության զգալի հատվածը Հանձնաժողովն առաջարկում է՝ դրա հետագա վերահսկողությունն իրականացնել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով նախատեսված կարգով՝ համապատասխան օրենսդրական ակտերի նախագծերի, ինչպես նաև ծրագրերի, հաշվետվությունների և հաղորդումների քննարկման ընթացքում:**

**21. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ հետևողականորեն ներդնել սոցիալական գործընկերության և պետական, համայնքային ու միավորային կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ամբողջական համակարգ<sup>90</sup>:**

**21.1.** Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը տեղեկացրեց**, որ Կառավարությունը, Հայաստանի Արհմիությունների կոնֆեդերացիան և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի՝ 2009 թվականի ապրիլի 27-ին կնքել են հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը, որով սահմանվում են սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման լրացուցիչ երաշխիքներ և Կողմերի համատեղ գործողությունները դրանց իրականացման համար: Պայմանագրի 5-րդ բաժնին համապատասխան՝ հանրապետական մակարդակում կոլեկտիվ բանակցությունների վարման, պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման, պայմանագրի կիրարկումն ապահովելու նպատակով գործողությունների ծրագրի մշակման, պայմանագրի կատարման ընթացքում ծագած խնդիրների քննարկման, Կողմերին համապատասխան առաջարկների ներկայացման նպատակով Կողմերի

<sup>88</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 137 կետ 11 «դ» ենթակետ:

<sup>89</sup> Մանրամասները տես՝ Հավելված 6-ում:

<sup>90</sup> Տես՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 137 կետ 11 «զ» ենթակետ:

համաձայնագրով ձևավորվել և հաստատվել է հանրապետական եռակողմ հանձնաժողովի կազմը: Կողմերի ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբի կողմից մշակվել է Պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների եռամյա ծրագրի նախագիծը:

**21.2.** Սույն եզրակացության **21-րդ մասում** նշված առաջարկությունների կատարման ընթացքը քննարկվեց Հանձնաժողովի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի, սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների՝ ֆինանսների, ինչպես նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած համատեղ նիստում, որի արդյունքում ***հանձնաժողովները Կառավարությանն առաջարկեցին՝ ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն Հարցման 27-րդ կետում նշված սոցիալական պատասխանատվության կորպորատիվ համակարգի ներդրման վերաբերյալ***, որը նախատեսված ժամկետում ներկայացվեց:

***Հաշվի առնելով, որ սույն եզրակացության 21-րդ մասում նշված առաջարկություններին կատարման ընթացքը ընդգրկում է Կառավարության գործունեության զգալի հատվածը, Հանձնաժողովն առաջարկում է՝ դրա վերահսկողությունն իրականացնել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով նախատեսված կարգով՝ համապատասխան օրենսդրական ակտերի նախագծերի, ինչպես նաև ծրագրերի, հաշվետվությունների և հաղորդումների քննարկման ընթացքում:***

**22.** Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ կատարելագործել սեփականության իրավունքի պաշտպանության համակարգը և ապահովել ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, փոքր և միջին գործարարությանը աջակցությունը, ինչպես նաև միջին խավի ձևավորման հետևողական քաղաքականության իրագործումը<sup>91</sup>:

**22.1.** Սույն եզրակացության **22 մասում** նշված առաջարկությունների կատարման ընթացքը քննարկվեց Հանձնաժողովի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի, սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների՝ ֆինանսների, ինչպես նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած համատեղ նիստում, որի արդյունքում ***հանձնաժողովները Կառավարությանն առաջարկեցին՝ ներկայացնել տեղեկատվություն մասնավոր ներդրումների խրախուսման ծրագրերի առկայության և արդյունավետության, ինչպես***

<sup>91</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11 «է» ենթակետ:

նաև Հայաստանից դեպի այլ երկրներ կապիտալի տեղափոխման ծավալների և պատճառների առկա վերլուծությունների վերաբերյալ:

**22.2. Հաշվի առնելով, որ սույն եզրակացության 22.1 մասում նշված տեղեկատվությունը նոր է ստացվել<sup>92</sup> և այն դեռևս քննարկվում է, Հանձնաժողովն առաջարկում է՝ դրա վերաբերյալ Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

Ինչ վերաբերվում է սույն եզրակացության 22-րդ մասում նշված մյուս առաջարկություններին, ապա ապա հաշվի առնելով, որ դրանց կատարման ընթացքը ընդգրկում է Կառավարության գործունեության զգալի հատվածը, Հանձնաժողովն առաջարկում է՝ դրանք հանել Հանձնաժողովի մոնիթորինգի առարկաների ցանկից և դրանց հետագա կատարման ընթացքի վերահսկողությունն իրականացնել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով նախատեսված կարգով՝ առանձին օրենսդրական ակտերի նախագծերի և հաշվետվությունների քննարկման ընթացքում:

**23. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ դատաիրավական համակարգի գործունեությունը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին՝ ապահովելով համակարգի անաչառության և անկախության նկատմամբ հասարակության վստահության վերականգնումը<sup>93</sup>:**

**23.1.** Ի պատասխան Հարցմանը Կառավարությունը տեղեկացրեց, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միության գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 68-Ա կարգադրության համաձայն նախատեսվում է դատարաններում էլեկտրոնային տեղեկատվական տերմինալների ստեղծումը, որոնք հնարավորություն կտան էլեկտրոնային փոստով ուղարկել բողոքը: Աշխատանք է տարվում «Արդարադատության մատչելիություն» ծրագրի իրագործման ուղղությամբ: Մշակվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որի համաձայն նախատեսվում է ընդլայնել անվճար իրավաբանական օգնության շրջանակը:

**23.2.** Սույն եզրակացության 23-րդ մասում նշված առաջարկությունների կատարման ընթացքը քննարկվեց Հանձնաժողովի, ֆինանսավարկային և բյուջետային

<sup>92</sup> Մասնավորապես, տես՝ Հավելված 8:

<sup>93</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11 «ը» ենթակետ:

հարցերի, սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների՝ ֆինանսների, ինչպես նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած համատեղ նիստում, որի արդյունքում **հանձնաժողովները կառավարությանն առաջարկեցին՝ ներկայացնել տեղեկատվություն դատական համակարգի բարեփոխումների (այդ թվում՝ դատավորների աշխատավարձի բարձրացման) դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության վրա ազդեցության վերլուծությունների վերաբերյալ:**

**23.3. Հաշվի առնելով, որ սույն եզրակացության 23.2 մասում նշված տեղեկատվությունը դեռևս չի ստացվել, Հանձնաժողովն առաջարկում է՝ դրա վերաբերյալ Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:**

24. Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել է՝ ընդունել Համայնքային ոստիկանության մասին, Երաշխավորված իրավաբանական օգնության մասին, Ցուցմունք տալու պարտականությունից ազատելու մասին, Պատճառված վնասի հատուցման մասին, Մասնավոր խուզարկուի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ սոցիալական օրենսգիրք<sup>94</sup>:

24.1. Ի պատասխան Հարցմանը **Կառավարությունը տեղեկացրեց**, որ ներկայումս նպատակահարմար չէ «Համայնքային ոստիկանության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, քանի որ «ՀՀ ոստիկանության և ԵԱՀԿ երեվանյան գրասենյակի միջև համագործակցության մասին» Հուշագրի և «ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի և Արաբկիրի համայնքի ազգաբնակչության միջև գործընկերության հաստատում» ծրագրի իրականացման շրջանակներում իրականացված պիլոտային ծրագիրն ընդլայնելու նպատակով ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված է մինչև 2011թ. 2-րդ կիսամյակ Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների կառուցվածքում ստեղծել ոստիկանության հենակետեր:

Կառավարությունը միաժամանակ հայտնեց, որ ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել էր նաև, որ ապացուցողական անհրաժեշտ բազա ապահովելու տեսանկյունից, առավել նպատակահարմար է նկարահանել օպերատիվ միջոցառումների ամբողջական ընթացքը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է հասարակական հնչեղություն ենթադրող միջոցառմանը: Այդ նպատակով,

<sup>94</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11:

Ոստիկանությունը ձեռնամուխ լինելով օպերատիվ միջոցառումների ընթացքի տեսաձայնագրման գործընթացի հստակեցմանը, 2009թ. ընթացքում, մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել Ոստիկանության պետի հետևյալ հրամանների նախագծերը՝ «ՀՀ ոստիկանության մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում հատուկ տեխնիկական միջոցների օգտագործման կարգի մասին» և «ՀՀ ոստիկանության մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման և դրանց արդյունքների ամրագրման կարգի վերաբերյալ»:

Կառավարությունը գտնում է, որ «Երաշխավորված իրավաբանական օգնության մասին», «Ցուցմունք տալու պարտականությունից ազատելու մասին», «Պատճառված վնասի հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման անհրաժեշտությունը չկա, քանի որ անվճար իրավաբանական օգնության, ցուցմունք տալու պարտականության, վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով:

Ինչ վերաբերում է ՀՀ սոցիալական օրենսգիրքի մշակմանը, ապա ըստ Կառավարության պատասխանի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում դեռևս քննարկվում է այդ հարցը, աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը միավորել մեկ սոցիալական օրենսգրքում թե, ինչպես այսօր է, յուրաքանչյուր ենթաօլորտը կարգավորել իր համապատասխան օրենքներով:

**24.2.** Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելով **24-րդ մասում** նշված՝ ոստիկանության բնագավառի առաջարկությունների կատարման ընթացքը, ***Հանձնաժողովը ՀՀ ոստիկանությանն առաջարկեց՝ ներկայացնել մանրամասն տեղեկատվություն ոստիկանության համայնքային ծառայությունների բարեփոխման վերաբերյալ***<sup>95</sup>:

**24.3.** Ի պատասխան Հանձնաժողովի առաջարկության Ոստիկանությունը Հանձնաժողովի նիստի արձանագրությամբ նախատեսված ժամկետում արձանքեց<sup>96</sup> Հանձնաժողովի ներկայացրած առաջարկություններին՝ տեղեկացնելով որ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնում իրականացվել է

<sup>95</sup> Տես՝ Հավելված 5:

<sup>96</sup> Տես՝ Հավելված 7:

թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի փորձնական պիլոտային ծրագիրը, ինչի նպատակով բաժնի կառուցվածքում ստեղծվել է 2 հենակետ), իսկ Կառավարության 01.04.2010թ. նիստի որոշմամբ հավանության արժանացած ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի 5-րդ կետի (Թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրում) միջոցառումներով նախատեսվել է Երևան քաղաքի վարչության բոլոր տարածքային բաժինների կառուցվածքում ստեղծել ոստիկանության հենակետեր:

#### **24.4. Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովն առաջարկում է՝**

1) *շարունակել Երևան քաղաքի վարչության բոլոր տարածքային բաժինների կառուցվածքում ոստիկանության հենակետերի ստեղծման գործընթացի մոնիթորինգը և արդյունքների մասին Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ.*

2) *աննպատակահարմար համարել Համայնքային ոստիկանության մասին, Երաշխավորված իրավաբանական օգնության մասին, Ցուցմունք տալու պարտականությունից ազատելու մասին, Պատճառված վնասի հատուցման մասին օրենքների ընդունման հարցի հետագա մոնիթորինգը, քանի որ այդ խնդիրները կարգավորված են Հայաստանի Հանրապետության գործող օրենքներով, իսկ ժամանակավոր հանձնաժողովի կողմից բարձրացված հարցադրումները լուծել սույն եզրակացությամբ նախատեսված օրենսդրական բարեփոխումների շրջանակում.*

3) *նպատակահարմար համարել «Մասնավոր խուզարկուհի մասին» ՀՀ օրենքի մշակումը և ընդունումը, քանի որ մասնավոր խուզարկուհիների գործունեության օրենսդրական կարգավորումը կարող է մասնավորապես՝ նպաստել հանցագործությունների կանխարգելման և բացահայտմանն ուղղված մրցակցային միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև քրեական և քաղաքացիական գործերով տվյալների հավաքման, գործարար բանակցությունների համար տեղեկատվության հավաքման, տեղեկատվության վերլուծության, անվճարունակ կամ անվստահելի գործընկերների բացահայտման, ապրանքային նշանների և ֆիրմային անվանումների անօրինական օգտագործման դեմ պայքարի, հեղինակային իրավունքի պաշտպանության, հակամրցակցային գործունեության ապահովման նոր մեխանիզմների ներդրմանը.*

4) *ՀՀ սոցիալական օրենսգրքի ընդունման հարցով Ազգային ժողովին զեկուցել Հանձնաժողովի հաջորդ եզրակացությունների քննարկման ժամանակ:*

**25. ՀՀ հատուկ քննչական ծառայությանը ներկայացվեցին ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկվեց հետևյալ հարցադրումները՝**

1) Ամբողջությամբ չեն պարզվել 2008թ. մարտի 1-ին Ազատության հրապարակում և հարակից տարածքում հայտնաբերված զենքերի, զինամթերքի, մարմնական վնասվածքներ պատճառելու համար նախատեսված այլ իրերի պատկանելիությունը, դրանց՝ այդտեղ հայտնվելու հանգամանքները:

2) Չեն բացահայտվել զանգվածային անկարգությունների ընթացքում տասն անձի մահվան բոլոր հանգամանքները, դրանք կատարած անձինք, ինչպես նաև տարբեր անձանց մարմնական վնասվածքներ պատճառած անձինք:

3) Չեն հայտնաբերվել զանգվածային անկարգությունների ընթացքում պայթուցիկ նյութեր և դյուրավառ հեղուկներով լցված շշեր պատրաստած և օգտագործած բոլոր անձինք:

4) Չեն հայտնաբերվել զանգվածային անկարգությունների ընթացքում կիրառված բոլոր զենքերը և դրանք կիրառող անձինք՝ բացառությամբ Ֆելիքս Գևորգյանի դրվագի:

5) Չեն հայտնաբերվել զանգվածային անկարգություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերած այն անձինք, ովքեր հստակ պատկերված են շրջանառվող տեսանյութերում:

6) Չի պարզվել ոստիկանության զորքերի զինծառայող Տիգրան Աբգարյանի ուղղությամբ կրակոց արձակած և մյուս ծառայողների ուղղությամբ կրակելու փորձ կատարած անձի ինքնությունը, ընդ որում, վերջինիս նկատել և, վիրավորելով, վնասազերծել է ՈԶ-ի նշանառու-դիպուկահարը /դիպուկահարը հստակ նկարագրել է տվյալ անձին, նրա ստացած վնասվածքների կոնկրետ տեղակայումը/:

7) Շուրջ 1,5 տարվա ընթացքում չեն պարզվել հետախուզվող մեղադրյալների գտնվելու վայրերը:

8) Չբացահայտված են մնում այն 3 անձինք, որոնք Պարոնյան-Լեո փողոցների հատվածում երկու ավտոբուսով և մեկ բեռնատար մեքենայով փորձել են խոյահարել ոստիկանության զորքերի կազմած շարասյունը:

9) Չի բացահայտվել ոստիկանության փշալար փռող մեքենան զավթած և դրանով զանգվածային անկարգության մասնակցին վրաերթի ենթարկած անձը:

10) Չեն բացահայտվել ՀՀ ոստիկանությանը և քաղաքացիներին պատկանող մեքենաները ջարդուփշուր անող, դրանք հրկիզող և ոստիկանության ծառայողներին ծեծի ենթարկող բոլոր անձինք:

11) Չի բացահայտվել ԱԺ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանին դանակահարող անձը:

12) Չեն պարզվել բոլոր այն ոստիկանները, ովքեր իրադարձությունների ընթացքում ֆիզիկական ուժ և բռնություններ են գործադրել զանգվածային միջոցառման մասնակիցների նկատմամբ:

13) Քրեական գործ չի հարուցվել, ինչպես նաև չեն պարզվել այն քաղաքացիների ինքնությունը, որոնք Ազատության հրապարակում բռնություն են կիրառել իրենց ծառայողական պարտականությունները կատարող ազգային անվտանգության ծառայության երկու աշխատակցի նկատմամբ<sup>97</sup>:

25.1. Ի պատասխան Հարցմանը **ՀՀ հատուկ քննչական ծառայությունը տեղեկացրեց**<sup>98</sup>, որ 2008թ. մարտի 1-ին իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու, 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ կազմակերպելու ու դրանց մասնակիցների կողմից բռնություն գործադրելու, ջարդ և հրկիզում իրականացնելու, գույք ոչնչացնելու և վնասելու, հրազեն, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր գործադրելու և իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրելու, 10 անձանց մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունը նաև հայտնեց, որ սույն եզրակացության **25-րդ մասում** հիշատակված փաստերի բացահայտման ուղղությամբ ձեռնարկվում են ինչպես քննչական, այնպես էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնք դեռևս դրական արդյունք չեն տվել:

25.2. **Սույն եզրակացության 25-րդ մասում թվարկված հարցադրումների կապակցությամբ Հանձնաժողովը նպատակահարմար է համարում առաջարկել, որ դրանց ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքի մասին տեղեկատվությունը ներկայացվի ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից համապատասխանաբար՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ՀՀ գլխավոր դատախազի տարեկան հաղորդմամբ և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հատուկ քննչական ծառայության տարեկան գործունեության մասին տեղեկատվությամբ, իսկ մոնիթորինգն իրականացնել՝ այդ շրջանակներում:**

<sup>97</sup> Տես՝ Հավելված 2:  
<sup>98</sup> Տես՝ Հավելված 4:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**  
**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**  
**ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**  
**ՀԱՐՑՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ  
ՊԱՐՈՆ Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

**Մեծարգո պարոն Սարգսյան**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի դեկտեմբերի 10-ի ԱԺՈ-183-Ն որոշմամբ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին հանձնարարվել է իրականացնել 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության` Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջարկությունների կատարման ընթացքի մշտադիտարկում (մոնիտորինգ) և արդյունքների մասին մինչև 4-րդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտը յուրաքանչյուր հերթական նստաշրջանում մեկ անգամ ներկայացնել եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերոհիշյալ որոշման կատարումն ապահովելու նպատակով, խնդրում եմ համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի ներկայացնել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության կառավարության այն միջոցառումների մասին (միջոցառումը, կատարողը, ակնկալվող արդյունքը և կատարման ժամկետը), որոնք իրականացվել են կամ նախատեսվում են իրականացվել ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված հետևյալ առաջարկություններից յուրաքանչյուրի առնչությամբ`

1) Մշակել և ընդունել հատուկ միջոցների կիրառման կարգ ու դրանց օգտագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ համապատասխան հրահանգ<sup>99</sup>:

2) Կատարել ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների տեխնիկական և որակական հատկանիշների ստուգում` որոշելու դրանց պիտանիությունը, և ոչնչացնել այդ չափանիշներին չհամապատասխանող բոլոր հատուկ միջոցները<sup>100</sup>:

3) Ստեղծել հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման իրավական բազա, մասնավորապես` ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման առումով<sup>101</sup>:

4) Ժամանակավոր հանձնաժողովի տրամադրության տակ եղած տեսանյութերում առկա կադրերում ոստիկանության առանձին աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ ոչ իրավաչափ ուժի կիրառման բոլոր դեպքերը դարձնել պատշաճ քննության առարկա<sup>102</sup>:

---

<sup>99</sup> Տես` 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության էջ 117 կետ 1:

<sup>100</sup> Տես` նույնի էջ 117 կետ 3:

<sup>101</sup> Տես` նույնի էջ 54 կետ 13:

<sup>102</sup> Տես` նույնի էջ 52 կետ 2:

- 5) Ոչնչացնել ժամկետանց «Չերյոմուխա-7» տեսակի հատուկ միջոցները<sup>103</sup>:
- 6) Ապահովել ՀՀ ոստիկանության անձնակազմի՝ հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության կանոնների վերաբերյալ հրահանգավորված լինելը<sup>104</sup>:
- 7) Անցկացնել ոստիկանության աշխատակիցների համապատասխան դասընթացներ լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման առումով, այն հաշվով, որպեսզի ոչ միայն չսահմանափակեն, այլև՝ ապահովեն և ցուցաբերեն անհրաժեշտ օժանդակություն լրագրողների կողմից իրենց մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու առումով<sup>105</sup>:
- 8) Ապահովել, որպեսզի ոստիկանության բոլոր այն ստորաբաժանումները, որոնք ներգրավված են հասարակական կարգի պաշտպանության գործընթացում, հատկապես զանգվածային միջոցառումներին, իրենց կազմում ունենան այնպիսի ծառայողներ, որոնք անցել են հատուկ դասընթացներ՝ զանգվածային միջոցառման մասնակիցների հետ համագործակցության և երկխոսության եզրեր հաստատելու ուղղությամբ<sup>106</sup>:
- 9) Ապահովել, որպեսզի ոստիկանության ծառայողները զանգվածային միջոցառումների ընթացքում ծառայություն իրականացնելիս պարտադիր կերպով կրեն ոստիկանության ծառայողական համազգեստ՝ զանգվածային միջոցառման մասնակիցների կողմից որպես ոստիկան ճանաչվելու համար: Մշակել ոստիկանի համազգեստի և սպառազինության այնպիսի նույնականացման միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն անձին նույնականացնել ոստիկանին: Նման միջոցներից է, օրինակ, հեշտ հիշվող անհատականացման համարների առկայությունը ոստիկանի համազգեստի վրա<sup>107</sup>:
- 10) Ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ապահովելու նախապատրաստվող օպերատիվ-հետախուզական միջոցառման գաղտնիությունը<sup>108</sup>:
- 11) Վերանայել ոստիկանության գործողությունների վերաբերյալ բոլոր այն իրավական ակտերը, որոնցով կերաշխավորվի, որ ուժի կիրառմանը վերաբերող օրենքներն ու իրավական ակտերը ամբողջովին համապատասխան կլինեն քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և ՄԱԿ-ի՝ իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ հիմնարար սկզբունքներին<sup>109</sup>:
- 12) Քննարկման առարկա դարձնել և սահմանել հստակ կանոններ՝ ոստիկանության ծառայողի անհատական անվտանգությունը ապահովելու տեսանկյունից<sup>110</sup>:
- 13) Քննարկման առարկա դարձնել և մշակել միջոցառումներ, որոնք ուղղված են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի և միջազգային կառույցների զեկույցներում ներկայացված՝ հանրապետության ներքին կյանքում, ժողովրդավարական համակարգում տեղ գտած բացասական դրսևորումների վերացմանը<sup>111</sup>:

<sup>103</sup> Տես՝ նույնի էջ 129 կետ 1:

<sup>104</sup> Տես՝ նույնի էջ 129 կետ 1:

<sup>105</sup> Տես՝ նույնի էջ 36 կետ 11:

<sup>106</sup> Տես՝ նույնի էջ 34 կետ 6:

<sup>107</sup> Տես՝ նույնի էջ 37 կետ 15:

<sup>108</sup> Տես՝ նույնի էջ 35-36 կետ 8:

<sup>109</sup> Տես՝ նույնի էջ 129 կետ 2:

<sup>110</sup> Տես՝ նույնի էջ 27:

<sup>111</sup> Տես՝ նույնի էջ 131 կետ 1:

14) Ապահովել խոսքի ազատություն, պայմաններ ստեղծել էլեկտրոնային լրատվամիջոցներում բազմակարծության և անկողմնակալության ապահովման համար<sup>112</sup>:

15) Իրականացնել ԵԽԽՎ 1532 (2007), 1609 (2008), 1620 (2008), 1643 (2009) և 1677 (2009) բանաձևերով Հայաստանի Հանրապետությանը ներկայացված առաջարկությունները<sup>113</sup>:

16) ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելով՝ ստեղծել բողոքարկման և զանգատարկման այնպիսի համակարգ, որում ընտրական գործընթացի մասնակիցները կարողանան հնարավորինս լիարժեք իրավական պաշտպանություն ստանալ ենթադրյալ ընտրախախտումների դեպքում, ինչպես նաև գործնականում հավասար հնարավորություններ երաշխավորել քաղաքական բոլոր ուժերին թե՛ պաշտոնական քարոզարշավի ընթացքում, թե՛ դրան նախորդող ժամանակահատվածում<sup>114</sup>:

17) «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելով՝ բացառել ժողովներ, հանրահավաքների, երթերի և ցույցերի իրազեկումները տեխնիկական հիմքերով մերժելը կամ այլ անհարկի սահմանափակումներ կիրառելը<sup>115</sup>:

18) Կատարելագործել վկայի կողմից ցուցմունք տալու ինստիտուտը, այդ թվում՝ նպատակ ունենալով վերացնելու մինչդատական վարույթի ընթացքում տրված ցուցմունքներից հետագայում վկայի հրաժարվելուն նպաստող պատճառներն ու պայմանները<sup>116</sup>:

19) «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով լուծել դատավարությունների ընթացքում դատարանների անմիջական մերձակայքում հավաքների անցկացման հարցը՝ բացառելով արդարադատության իրականացման վրա բացասական ազդեցության գործադրումը<sup>117</sup>:

20) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ կալանքին վերաբերող դրույթները համապատասխանեցնել՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներին<sup>118</sup>:

21) Շուտափույթ ընդունել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, որը համահունչ պետք է լինի նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մոտեցումներին<sup>119</sup>:

22) Հաստատել սոցիալական համերաշխություն և արդարություն, սահմանել կենսաապահովման նվազագույն զամբյուղ և բյուջե, և աղքատության շեմը համապատասխանեցնել դրան, ինչպես նաև դրա հաշվառմամբ հետևողական բարձրացնել աշխատավարձերը, կենսաթոշակները, նպաստները, ապահովել հասարակության համախմբումն ու ներքաղաքական կայունությունը<sup>120</sup>:

23) Համակարգային, հետևողական ու արդյունավետ պայքար ծավալել կոռուպցիայի դեմ<sup>121</sup>:

<sup>112</sup> Տես՝ նույնի էջ 131 կետ 2:

<sup>113</sup> Տես՝ նույնի էջ 131 կետ 3:

<sup>114</sup> Տես՝ նույնի էջ 131 կետ 4:

<sup>115</sup> Տես՝ նույնի էջ 131-132 կետ 5:

<sup>116</sup> Տես՝ նույնի էջ 132-133 կետ 5:

<sup>117</sup> Տես՝ նույնի էջ 133 կետ 5:

<sup>118</sup> Տես՝ նույնի էջ 134 կետ 5:

<sup>119</sup> Տես՝ նույնի էջ 134 կետ 6:

<sup>120</sup> Տես՝ նույնի էջ 136 կետ 11 «ա» ենթակետ:

<sup>121</sup> Տես՝ նույնի էջ 136 կետ 11 «բ» ենթակետ:

24) Էականորեն կրճատել ստվերային տնտեսությունը, ապահովել եվրոպական երկրների միջինացված ցուցանիշներին համադրելի հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցություն, ապահովել մրցակցային հավասար և արդարացի պայմաններ, բացառել արհեստական տնտեսական մենաշնորհները<sup>122</sup>:

25) Ձևավորել տնտեսության արդյունավետ ճյուղային կառուցվածք, իրագործել արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական քաղաքականություն, տարածքային համաչափ զարգացում<sup>123</sup>:

26) Կրճատել գործազրկության մակարդակը՝ պետության նախաձեռնության և/կամ մասնավորի խրախուսման հենքի վրա նոր աշխատատեղերի ստեղծմամբ և իրականացնել ժողովրդագրական ակտիվ քաղաքականություն<sup>124</sup>:

27) Հետևողականորեն ներդնել սոցիալական գործընկերության և պետական, համայնքային ու միավորային կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ամբողջական համակարգ<sup>125</sup>:

28) Կատարելագործել սեփականության իրավունքի պաշտպանության համակարգը և ապահովել ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, փոքր և միջին գործարարությանը աջակցությունը, ինչպես նաև միջին խավի ձևավորման հետևողական քաղաքականության իրագործումը<sup>126</sup>:

29) Դատաիրավական համակարգի գործունեությունը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին՝ ապահովելով համակարգի անաչառության և անկախության նկատմամբ հասարակության վստահության վերականգնումը<sup>127</sup>:

30) Ընդունել Համայնքային ոստիկանության մասին, Երաշխավորված իրավաբանական օգնության մասին, Ցուցմունք տալու պարտականությունից ազատելու մասին, Պատճառված վնասի հատուցման մասին, Մասնավոր խուզարկուի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ սոցիալական օրենսգիրք<sup>128</sup>:

Խնդրում են նաև տրամադրել տեղեկություն ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության ոգուց բխող այն միջոցառումների վերաբերյալ, որոնք չեն ներկայացվել վերոգրյալ ցանկում, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համարվում են անհրաժեշտ՝ բացառելու 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների կրկնությունը:

Միևնույն ժամանակ հայտնում են հանձնաժողովի պատրաստականությունը պետական կառավարման մարմինների հետ համատեղ քննարկելու իրականացվելիք միջոցառումների ցանկը և մոնիտորինգային ցուցիչները:

## ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

<sup>122</sup> Տես՝ նույնի էջ 136 կետ 11 «գ» ենթակետ:

<sup>123</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11 «դ» ենթակետ:

<sup>124</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11 «ե» ենթակետ:

<sup>125</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11 «զ» ենթակետ:

<sup>126</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11 «է» ենթակետ:

<sup>127</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11 «ը» ենթակետ:

<sup>128</sup> Տես՝ նույնի էջ 137 կետ 11:

**ՀԱՎԵԼՎԱԾ 2**  
**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**  
**ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**  
**ՀԱՐՑՈՒՄԸ ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ**  
**ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ա. ՄԻՐՉՈՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Միրզոյան**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի դեկտեմբերի 10-ի ԱԺՈ-183-Ն որոշմամբ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին հանձնարարվել է իրականացնել 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության` Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջարկությունների կատարման ընթացքի մշտադիտարկում (մոնիտորինգ) և արդյունքների մասին մինչև 4-րդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտը յուրաքանչյուր հերթական նստաշրջանում մեկ անգամ ներկայացնել եզրակացություն:

Ըստ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության`

1. Ամբողջությամբ չեն պարզվել 2008թ. մարտի 1-ին Ազատության հրապարակում և հարակից տարածքում հայտնաբերված զենքերի, զինամթերքի, մարմնական վնասվածքներ պատճառելու համար նախատեսված այլ իրերի պատկանելիությունը, դրանց` այդտեղ հայտնվելու հանգամանքները:
2. Չեն բացահայտվել զանգվածային անկարգությունների ընթացքում տասն անձի մահվան բոլոր հանգամանքները, դրանք կատարած անձինք, ինչպես նաև տարբեր անձանց մարմնական վնասվածքներ պատճառած անձինք:
3. Չեն հայտնաբերվել զանգվածային անկարգությունների ընթացքում պայթուցիկ նյութեր և դյուրավառ հեղուկներով լցված շշեր պատրաստած և օգտագործած բոլոր անձինք:
4. Չեն հայտնաբերվել զանգվածային անկարգությունների ընթացքում կիրառված բոլոր զենքերը և դրանք կիրառող անձինք` բացառությամբ Ֆելիքս Գևորգյանի դրվագի:
5. Չեն հայտնաբերվել զանգվածային անկարգություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերած այն անձինք, ովքեր հստակ պատկերված են շրջանառվող տեսանյութերում:
6. Չի պարզվել ոստիկանության զորքերի զինծառայող Տիգրան Աբգարյանի ուղղությամբ կրակոց արձակած և մյուս ծառայողների ուղղությամբ կրակելու փորձ կատարած անձի ինքնությունը, ընդ որում, վերջինիս նկատել և, վիրավորելով, վնասազերծել է ՈՁ-ի նշանառու-դիպուկահարը /դիպուկահարը հստակ նկարագրել է տվյալ անձին, նրա ստացած վնասվածքների կոնկրետ տեղակայումը/:
7. Շուրջ 1,5 տարվա ընթացքում չեն պարզվել հետախուզվող մեղադրյալների գտնվելու վայրերը:

8. Չբացահայտված են մնում այն 3 անձինք, որոնք Պարոնյան-Լեո փողոցների հատվածում երկու ավտոբուսով և մեկ բեռնատար մեքենայով փորձել են խոյահարել ոստիկանության գործերի կազմած շարասյունը:
  9. Չի բացահայտվել ոստիկանության փշալար փռող մեքենան զավթած և դրանով զանգվածային անկարգության մասնակցին վրաերթի ենթարկած անձը:
  10. Չեն բացահայտվել ՀՀ ոստիկանությանը և քաղաքացիներին պատկանող մեքենաները ջարդուփշուր անող, դրանք հրկիզող և ոստիկանության ծառայողներին ծեծի ենթարկող բոլոր անձինք:
  11. Չի բացահայտվել ԱԺ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանին դանակահարող անձը:
  12. Չեն պարզվել բոլոր այն ոստիկանները, ովքեր իրադարձությունների ընթացքում ֆիզիկական ուժ և բռնություններ են գործադրել զանգվածային միջոցառման մասնակիցների նկատմամբ:
  13. Քրեական գործ չի հարուցվել, ինչպես նաև չեն պարզվել այն քաղաքացիների ինքնությունը, որոնք Ազատության հրապարակում բռնություն են կիրառել իրենց ծառայողական պարտականությունները կատարող ազգային անվտանգության ծառայության երկու աշխատակցի նկատմամբ<sup>129</sup>:
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերոհիշյալ որոշման կատարումն ապահովելու նպատակով, խնդրում են համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի ներկայացնել տեղեկատվություն առ այն, թե ի՞նչ առաջընթաց է գրանցվել անցած ժամանակաշրջանում այդ հարցերից յուրաքանչյուրի առումով, ինչպես նաև նշել, արդյո՞ք շարունակվում են աշխատանքները:

## **ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

### **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՐ Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

<sup>129</sup> Տես՝ նույնիշ 118-119:

### ՀԱՎԵԼՎԱԾ 3

## **ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՐՑՄԱՆԸ**

Հայաստանի Հանրապետության  
Ազգային ժողովի  
պետական-իրավական հարցերի  
մշտական հանձնաժողովի  
նախագահ  
պարոն Դավիթ Հարությունյանին

### Հարգելի պարոն Հարությունյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված Ձեր 2010 թվականի փետրվարի 2-ի Պետի 188 գրության, ըստ ներկայացված հարցերի հայտնում եմք.

*1. Մշակել և ընդունել հատուկ միջոցների կիրառման կարգ ու դրանց օգտագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ համապատասխան հրահանգ:*

ՀՀ ոստիկանության պետը 2009 թվականի հոկտեմբերի 23-ին ստորագրել է «Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի զինծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» հրամանը (թիվ 5-Ն հրաման), որը սահմանված կարգով պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության նախարարությունում: Հրամանում, մասնավորապես, ամրագրվել են`

ա) ոստիկանության զորքերի զինծառայողների կողմից հատուկ միջոցները գործադրելու դեպքերը,

բ) հատուկ միջոցներ գործադրելիս ոստիկանության զորքերի զինծառայողների պարտականությունները,

գ) ակտիվ պաշտպանության և հատուկ միջոցառումների ապահովման միջոցների գործադրման արգելքները,

դ) ոստիկանության զորքերի հրամանատարի կողմից Հանրապետության ոստիկանության պետին և դատախազին հատուկ միջոցներ գործադրելու հետևանքով վիրավորվածների կամ մահվան դեպքերի մասին տեղեկացնելու ընթացակարգերը,

ե) ծառայության վերակարգին հատուկ միջոցներով զինելու թույլատվություն տալու լիազորված պաշտոնատար անձանց շրջանակը,

զ) հատուկ միջոցների օգտագործման նշանակությունը, մարտավարատեխնիկական բնութագրերը, անվտանգության պահանջները,

է) հատուկ միջոցները հատկացնելու և հաշվառելու կարգը:

Միևնույն ժամանակ, ՀՀ ոստիկանությունում մշակվել են «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և վերջինիս ընդունմամբ պայմանավորված «Ոստիկանության

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2009 թվականի ապրիլի 29-ին: Օրենքների նպատակն է ոստիկանության զորքերում պարտադիր զինվորական ծառայությունից աստիճանաբար անցում կատարել պայմանագրային զինվորական ծառայության: Նշված օրենսդրական բարեփոխումների արդյունքում Ոստիկանության զորքերի խնդիրների շարքում նախատեսվել է նաև ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը մասնակցելը: Հստակեցվել են ոստիկանության զորքերի գործունեության սկզբունքները՝ ելնելով մարդու սահմանադրական իրավունքների գերակայությունից: Օրենքով հստակեցվել են հատուկ միջոցներ օգտագործելու հրաման տվող պաշտոնատար անձանց շրջանակը և պատասխանատվությունը, ինչպես նաև զանգվածային հրապարակային միջոցառումների ժամանակ դրանց մասնակիցների կողմից օրինականության խախտումներ թույլ տալու դեպքերում հարկադրանքի միջոցներ կիրառելու իրավական հիմքերը:

*2. Կատարել ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների տեխնիկական և որակական հատկանիշների ստուգում՝ որոշելու դրանց պիտանիությունը, և ոչնչացնել այդ չափանիշներին չհամապատասխանող բոլոր հատուկ միջոցները:*

Իրականացվել է ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների տեխնիկական և որակական հատկանիշների ստուգում, ինչի արդյունքում ժամկետանց և տեխնիկապես օգտագործման համար ոչ պիտանի հատուկ միջոցները սպառազինությունից դուրս են գրվել, իսկ հատուկ միջոցների որոշ տեսակներ (այդ թվում՝ «Չերյոմուխա-7» տեսակի), ընդհանրապես հանվել են ոստիկանության սպառազինության ցանկից:

*3. Ստեղծել հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման իրավական բազա, մասնավորապես՝ ֆիզիկական ուժի, հատակ միջոցների և զենքի գործադրման առումով:*

ՀՀ ոստիկանությունում ներկայումս ստեղծված է հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման բավականաչափ արդիական իրավական բազա:

Միևնույն ժամանակ, հաստատման փուլում գտնվող ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված է իրականացնել.

Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Միջոցառման անվանումը	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարողները
Հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների (այդ թվում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի	1. Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
	2.«Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրա-	2010թ. 2-րդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն

գործադրման առումով) իրականացման իրավական բազայի կատարելագործում	ցունների կատարելում սահին ՀՀ օրենքների նախագծերի մշակում			
	3. Ձանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցների մշակում ու ներդրում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն

4. *Ժամանակավոր հանձնաժողովի տրամադրության տակ եղած տեսանյութերում առկա կադրերում ոստիկանության առանձին աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ ոչ իրավաչափ ուժի կիրառման բորլոր դեպքերը դարձնել պատշաճ քննության առարկա:*

Ժամանակավոր հանձնաժողովի տրամադրության տակ եղած և շրջանառության մեջ գտնվող տեսանյութերում առկա կադրերում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն գործադրելու փաստերով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված քրեական գործերի շրջանակներում ի հայտ են բերվել և դատապարտվել ՀՀ ոստիկանության 4 ծառայողներ:

5. *Ոչնչացնել ժամկետանց «Չերյոմուխա-7» տեսակի հատուկ միջոցները:*

Իրականացվել է ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների տեխնիկական և որակական հատկանիշների ստուգում, ինչի արդյունքում հատուկ միջոցների որոշ տեսակներ (այդ թվում՝ «Չերյոմուխա-7» տեսակի), ընդհանրապես հանվել են ոստիկանության սպառազինության ցանկից:

6. *Ապահովել ՀՀ ոստիկանության անձնակազմի՝ հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության կանոնների վերաբերյալ հրահանգավորված լինելը:*

Այս ուղղությամբ ՀՀ ոստիկանությունում ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.

- Ձանգվածային միջոցառումների ընթացքում հասարակական կարգի պահպանման ուղղությամբ ոստիկանության ծառայողների գործողությունների ներդաշնակեցման, հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների,

պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության ապահովման կանոնների հստակ պահպանման առումով անհրաժեշտ ունակությունների ձևավորման, ինչպես նաև տակտիկական պատրաստականության բարձրացման նպատակով 2009թ. ընթացքում ՀՀ ոստիկանության բոլոր տարածքային ստորաբաժանումներում ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության, ոստիկանության զորքերի և Ակադեմիայի փորձառու հրահանգիչների մասնակցությամբ անց են կացվել ուսումնական վարժանքներ: Վերը նշված խնդիրների տեսական ուսուցառումը ապահովվում է նաև շաբաթը մեկ անգամ տեղերում անցկացվող ծառայողական պարապմունքների շրջանակներում,

- ԱՍՆ դեսպանատան, Դենսուս կազմակերպության և ոստիկանության կողմից կազմակերպվել և 2010թ. հունվարի 18-ից մինչև փետրվարի 1-ը ոստիկանության միջին և ավագ կազմի 24 ծառայողների համար անցկացվել է դասընթաց՝ «Ձանգվածային միջոցառումների և ամբոխի կառավարման հրահանգիչների ուսուցում» թեմայով, նպատակ ունենալով զինել վերապատրաստվող հրահանգիչներին գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են զանգվածային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանման հարցերի շուրջ (այդ թվում՝ հատուկ միջոցների կիրառման առումով անհրաժեշտ ունակությունների ձևավորման) իրենց ստորաբաժանումներում ուսուցում կազմակերպելու համար:

Միևնույն ժամանակ, հաստատման փուլում գտնվող ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված է իրականացնել.

Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Միջոցառման անվանումը	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարողները
Մարդու և քաղաքացու խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի լրացուցիչ երաշխիքների ամրագրում	Հասարակական կարգի պահպանմանը ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, նրանց կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների գործադրման, ինչպես նաև ՁԼՄ-ների հետ շփվող ծառայողների համար պարտադիր դասընթացների կազմակերպում:	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն

7. Անցկացնել ոստիկանության աշխատակիցների համապատասխան դասընթացներ լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման առումով, այն հաշվով, որպեսզի ոչ միայն չսահմանափակեն, այլև՝ ապահովեն և ցուցաբերեն անհրաժեշտ օժանդակություն լրագրողների կողմից իրենց մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու առումով:

ՀՀ ոստիկանության կողմից քայլեր են ձեռնարկվել լրատվամիջոցների և ոստիկանության փոխհարաբերությունները (հատուկ ընդգծելով՝ ցույցերի ժամանակ լրագրողների հետ հարաբերությունների հիմնական ուղեցույցները) կառուցողական հիմքի վրա դնելու ուղղությամբ: Այդ նպատակով 2009թ. մայիսի 8-ից 9-ը Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության կոմիտեի նախաձեռնությամբ Ծաղկաձորում անցկացվել է «Լրատվամիջոցների և ոստիկանության փոխհարաբերությունները» թեմայով սեմինար, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության 16 ստորաբաժանումների ղեկավարներ:

Միևնույն ժամանակ, հաստատման փուլում գնտվող ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված է իրականացնել.

Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Միջոցառման անվանումը	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարողները
ՀՀ ոստիկանության գործունեության յուրաքանչյուր ոլորտի համար հասարակայնության և զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության բարելավում	1. ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի մշակում՝ ողջված զանգվածային լրատվության միջոցների հետ ոստիկանության արդյունավետ, օպերատիվ և արհեստավարժ շփումների ապահովմանը	2010թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն
	2. Ոստիկանության ծառայողների համար զանգվածային լրատվության միջոցների հետ շփվելու ուղեցույցի մշակում	2010թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջում	Ոստիկանություն

Բացի այդ, 6-րդ կետում ներկայացված ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված է իրականացնել ՋԼՍ-ների հետ շփվող ծառայողների համար պարտադիր դասընթացների կազմակերպում:

*8. Ապահովել, որպեսզի ոստիկանության բոլոր այն ստորաբաժանումները, որոնք ներգրավված են հասարակական կարգի պաշտպանության գործընթացում, հատկապես զանգվածային միջոցառումներին, իրենց կազմում ունենան այնպիսի ծառայողներ,*

որոնք անցել են հատուկ դասընթացներ՝ զանգվածային միջոցառման մասնակիցների հետ համագործակցության և երկխոսության եզրեր հաստատելու ուղղությամբ:

Նշված խնդիրը հստակեցնելու նպատակով, ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված է իրականացնել.

Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Միջոցառման անվանումը	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը	Կատա - րողնե րը
Հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների (այդ թվում՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման առումով) իրականացման իրավական բազայի կատարելագործում	Ձանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցություններ վարող ծառայողների համար ուղեցույցների մշակում ու ներդրում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն

Բացի այդ, 6-րդ կետում ներկայացված ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված է իրականացնել ՁԼՄ-ների հետ շփվող ծառայողների համար պարտադիր դասընթացների կազմակերպում:

Միևնույն ժամանակ, ԱՄՆ դեսպանատան, Դենսուս կազմակերպության և ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել և 2010թ. փետրվարի 1-ից մինչև փետրվարի 5-ը ոստիկանության հրամանատարական կազմի 24 ծառայողների համար անցկացվել է դասընթաց՝ «Ձանգվածային միջոցառումների և ամբոխի կառավարման հրամանատարական անձնակազմի ուսուցում» թեմայով, նպատակ ունենալով համապատասխան գիտելիքներով զինել ՀՀ ոստիկանության ղեկավար կազմի այն ներկայացուցիչներին, որոնք հասարակական կարգի պահպանման և զանգվածային միջոցառումների հետ կապված մարտավարություն ու ռազմավարություն են ձևավորում, ինչպես նաև այդ ուղղությամբ ընդունում համապատասխան որոշումներ և հրահանգներ: Դասընթացների շրջանակներում իրականացվել է նաև զանգվածային միջոցառման կազմակերպիչների ու ոստիկանության միջև բանակցային և երկխոսության եզրեր հաստատող ոստիկանության ծառայողների համար հատուկ հմտությունների ուսուցում:

*9. Ապահովել, որպեսզի ոստիկանության ծառայողները զանգվածային միջոցառումների ընթացքում ծառայություն իրականացնելիս պարտադիր կերպով կրեն ոստիկանության ծառայողական համազգեստ՝ զանգվածային միջոցառման*

*մասնակիցների կողմից որպես ոստիկան ճանաչվելու համար* □ *Մշակել ոստիկանի համազգեստի և սպառազինության այնպիսի նույնականացման միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն անձին նույնականացնել ոստիկանին: Նման միջոցներից է, օրինակ, հեշտ հիշվող անհատականացման համարների առկայությունը ոստիկանի համազգեստի վրա:*

ՀՀ կառավարության 11.01.2007թ. թիվ 151-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության» կանոնագրքի թիվ 22 կետի համաձայն՝ ոստիկանության ծառայողները ծառայությունը (այդ թվում՝ զանգվածային միջոցառումների ընթացքում) կատարում են սահմանված ձևի համազգեստով: Ոստիկանության ծառայողների համազգեստի նկարագիրը, համաձայն որի ոստիկանը կարող է ճանաչվել զանգվածային միջոցառման մասնակիցների կողմից, հստակեցված է ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1753-Ն «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրը և այն կրելու ժամկետները սահմանելու մասին» որոշմամբ, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի 15.04.2003թ. թիվ 5-Ն «Ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու, այն կրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» հրամանով:

Միևնույն ժամանակ, գործուն քայլեր են ձեռնարկվում զանգվածային միջոցառումների մասնակից ոստիկանության ծառայողների համազգեստի և անհատական պաշտպանության միջոցների վրա անհատականացման համարների տեղադրման ուղղությամբ: Մասնավորապես, քննարկման փուլում է գտնվում ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագիծը, որով կկարգավորվի զանգվածային միջոցառումների ընթացքում հասարակական կարգը պահպանող ոստիկանության ծառայողների համազգեստի և անհատական պաշտպանության միջոցների վրա նույնականացման անհատական համարների տեղադրումը:

*10. Ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ապահովելու նախապատրաստվող օպերատիվ-հետախուզական միջոցառման գաղտնիությունը:*

Տեղեկատվության (այդ թվում՝ նախապատրաստվող օպերատիվ-հետախուզական միջոցառման վերաբերյալ) գաղտնապահության կանոնների խախտման համար նախատեսվող պատասխանատվությունը անհատականացված է, և համաձայն գործող կարգի, գաղտնի և հույժ գաղտնի տեղեկատվության հետ առնչվող ոստիկանության ծառայողները գրավոր պարտավորություն են ստանձնում դրանք չհրապարակելու և չտարածելու մասին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ձեռնարկվել են լրացուցիչ միջոցառումներ՝ նախապատրաստվող և իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիությունը ապահովելու և կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ:

*11. Վերանայել ոստիկանության գործողությունների վերաբերյալ բոլոր այն իրավական ակտերը, որոնցով կերաշխավորվի, որ ուժի կիրառմանը վերաբերող օրենքներն ու իրավական ակտերը ամբողջովին համապատասխան կլինեն քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և ՄԱԿ-ի՝ իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ հիմնարար սկզբունքներին:*

Ուժի կիրառման տեսանկյունից ոստիկանության գործողությունները կանոնակարգող բոլոր իրավական ակտերը (ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման հիմքերը, պայմաններն ու սահմանները հստակեցված են «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով)

համապատասխանեցված են քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և ՄԱԿ-ի իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ հիմնարար սկզբունքներին:

Միևնույն ժամանակ, իրականացվելու է նաև սույն տեղեկությունների թիվ 3 կետում նախատեսված հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված ոստիկանության գործողությունների իրականացման իրավական բազայի կատարելագործումը:

*12. Քննարկման առարկա դարձնել և սահմանել հստակ կանոններ՝ ոստիկանության ծառայողի անհատական անվտանգությունը ապահովելու տեսանկյունից:*

Ոստիկանության ծառայողների անհատական պաշտպանության խնդիրը հստակեցված է ՀՀ կառավարության 11.01.2007թ. թիվ 151-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության» կանոնագրքի 25, 41 և 60 կետերով, ինչպես նաև «ՀՀ ՆԳՆ համակարգի ստորաբաժանումների ուժերի և միջոցների օգտագործման կարգը զանգվածային անկարգությունները կանխելիս» ՀՀ ՆԳՆ 15.03.2002թ. թիվ 107 հրամանով, որտեղ սահմանվում է զանգվածային անկարգությունների դեպքերում հատուկ համահավաք ջոկատի կազմավորման կարգը՝ իր կազմում ընդգրկված ունենալով տարբեր գործառույթներ ունեցող և համապատասխան հանդերձավորված ու սպառնազինված ոստիկանության ծառայողների խմբեր:

Միևնույն ժամանակ, զանգվածային միջոցառումների ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումներն առավել արդյունավետ դարձնելու, գործադրման առումով առավել անվտանգ տեխնիկական և հատուկ միջոցներով ոստիկանությունը հագեցնելու, ինչպես նաև ոստիկանության ծառայողների անհատական անվտանգությունն ապահովելու նպատակով, 2008–2009թթ. ընթացքում կատարվել է ոստիկանության արտաքին ծառայությունների վերազինում՝ ձեռք են բերվել ինչպես անհատական պաշտպանության, այնպես էլ հատուկ միջոցներ:

*14. Ապահովել խոսքի ազատություն, պայմաններ ստեղծել էլեկտրոնային լրատվամիջոցներում բազմակարծության և անկողմնակալության ապահովման համար:*

Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ձևավորվել է տեխնիկական և իրավական հարցերի գծով երկու աշխատանքային խումբ:

Իրավական հարցերի գծով աշխատանքային խմբի կողմից կիրականացվի օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և կնախաձեռնվեն համապատասխան իրավական փոփոխություններ, որոնց արդյունքում կապահովվի սահմանված ժամկետում (2010թ. հունիսի 20) հեռուստառադիոհաճախականության լիցենզավորման նոր մրցույթի հայտարարումը: ԵԱՀԿ-ն իր պատրաստականությունն է հայտնել օժանդակելու ոլորտի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանող օրենսդրական դաշտի ձևավորմանը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում թվային ռադիոհեռուստատեսության հեռարձակման վերաբերյալ ԵԱՀԿ անկախ փորձագետ, պրոֆեսոր Քեթրին Նայման-Մեթքալֆի 2009 թվականի հոկտեմբերի 5-ի զեկույցում նշվում է, որ հեռուստառադիոհեռարձակման թվայնացման ծրագրի իրականացման սկզբնական փուլում անալոգային հեռարձակման լիցենզիաների տրամադրման մորատորիումի որոշակի ժամանակահատված սահմանելը լիովին համապատասխանում է

միջազգային նորմերին և փորձին, սակայն մորատորիումը չպետք է օգտագործվի բազմակարծությունը նվազեցնելու նպատակով: Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգից բխող հանրային քննարկումների կազմակերպման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը համագործակցում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Եվրոպայի Խորհրդի հետ:

Հարկ է նշել նաև, որ թվային հեռուստառադիոհեռարձակման ոլորտի իտալական փորձի փոխանակման և հնարավոր փոխհամագործակցության ուղիների քննարկման նպատակով 2010թ. հունվարի 26-27-ը տեղի է ունեցել Իտալիայի տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Պաոլո Ռոմանիի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան: Այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հեռահաղորդակցության ոլորտում համագործակցելու ուղղությամբ: Մասնավորապես, մեկ ամսով Հայաստանից աշխատանքային խումբ կուղարկվի Իտալիա, որը տեղում կծանոթանա հեռուստառադիո-հեռարձակման թվայնացման գործում Իտալիայի փորձին: Իտալացի գործընկերները պատրաստակամություն են հայտնել պատրաստել Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության թվայնացման վերաբերյալ բիզնես ծրագիր, որը կընդգրկի թվայնացման գործընթացի տեխնիկական և ֆինանսական կողմերը:

Վերոնշյալ քայլերի իրականացման արդյունքում պայմաններ կստեղծվեն երկրում խոսքի ազատության, ինչպես նաև էլեկտրոնային լրատվամիջոցներում բազմակարծության և անկողմնակալության ապահովման համար:

*15. Իրականացնել ԵՄԽԿ 1532 (2007), 1609 (2008), 1620 (2008), 1643 (2009) և 1677 (2009) բանաձևերով Հայաստանի Հանրապետությանը ներկայացված առաջարկությունները:*

ՀՀ կառավարությունը 2010 թվականի հունվարի 29-ի նիստում հավանության է արժանացրել ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 2-րդ և 3-րդ համատեղ պարբերական ազգային զեկույցները, որոնք մանրամասն անդրադառնում են այս ոլորտում զարգացումներին:

Կից ներկայացնում ենք նաև տեղեկատվություն՝ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1609, 1620, 1643 և 1677 բանաձևերի կատարման վերաբերյալ:

*16. ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելով՝ ստեղծել բողոքարկման և զանգատարկման այնպիսի համակարգ, որում ընտրական գործընթացի մասնակիցները կարողանան հնարավորինս լիարժեք իրավական պաշտպանություն ստանալ ենթադրյալ ընտրախախտումների դեպքում, ինչպես նաև գործնականում հավասար հնարավորություններ երաշխավորել քաղաքական բոլոր ուժերին թե՛ պաշտոնական քարոզարշավի ընթացքում, թե՛ դրան նախորդող ժամանակահատվածում:*

*17. «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելով՝ բացառել ժողովների, հանրահավաքների, երթերի և ցույցերի իրազեկումները տեխնիկական հիմքերով մերժելը կամ այլ անհարկի սահմանափակումներ կիրառելը:*

17-րդ և 19-րդ կետերի վերաբերյալ հայտնում ենք, որ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հստակ կարգավորված են ժողովների, հանրահավաքների,

երթերի և ցույցերի իրազեկումների և զանգվածային հրապարակային միջոցառման արգելման հետ կապված հարաբերությունները, չկան անհարկի սահմանափակումներին վերաբերող դրույթներ և այդ առումով նշված օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը չկա:

Միաժամանակ ընդունելի ենք համարում 19-րդ կետով նախատեսված առաջարկությունը, որի համաձայն հիշյալ օրենքում փոփոխություն կատարելու միջոցով պետք է լուծվի դատավարությունների ընթացքում դատարանների անմիջական մերձակայքում հավաքների անցկացման բացառման հարցը:

*18. Կատարելագործել վկայի կողմից ցուցմունք տալու ինստիտուտը, այդ թվում՝ նպատակ ունենալով վերացնելու մինչդատական վարույթի ընթացքում տրված ցուցմունքներից հետագայում վկայի հրաժարվելուն նպաստող պատճառներն ու պայմանները:*

18-րդ և 20-րդ կետերի վերաբերյալ հայտնում ենք, որ աշխատանքային խմբի կողմից նշակվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, որը սահմանված կարգով կներկայացվի կառավարություն:

Հիշյալ նախագծի դրույթները պետք է համապատասխանեն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի» և «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների պահանջներին»:

*19. «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխության կատարելու միջոցով լուծել դատավարությունների ընթացքում դատարանների անմիջական մերձակայքում հավաքների անցկացման հարցը՝ բացառելով արդարադատության իրականացման վրա բացասական ազդեցության գործադրումը:*

*20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ կալանքին վերաբերող դրույթները համապատասխանեցնել՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներին:*

*21. Շուտափույթ ընդունել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը համահունչ պետք է լինի նաև ՀՀ Սահմանադրությանը ամրագրված մոտեցումներին:*

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել 2007 թվականի հուլիսի 31-ին: Այնուհետև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից լրամշակված և Հայաստանի Հանրապետության կառավարությունում հավանության արժանացած «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակը 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Նշված օրենքի նախագիծն արդեն ընդգրկվել է Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի մեծ օրակարգում □

*22. Հաստատել սոցիալական համերաշխություն և արդարություն, սահմանել կենսաապահովման նվազագույն զամբյուղ և բյուջե, և աղքատության շեմը համապատասխանեցնել դրան, ինչպես նաև դրա հաշվառմամբ հետևողական*

*բարձրացնել աշխատավարձերը, կենսաթոշակները, նպաստները, ապահովել հասարակության համախմբումն ու ներքաղաքական կայունությունը:*

ՀՀ 2008-2010 թվականների պետական բյուջեներով նախատեսված հիմնական սոցիալական ցուցանիշների մասին տեղեկատվությունը (աղյուսակը) կցվում է:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերը նշված ցուցանիշների միջնաժամկետ կանխատեսումները կքննարկվեն առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում:

Նախատեսվում է հաստատել սոցիալական համերաշխություն և արդարություն, սահմանել կենսապահովման նվազագույն զամբյուղ և բյուջե, և աղքատության շեմը համապատասխանեցնել դրան, ինչպես նաև դրա հաշվառմամբ հետևողական բարձրացնել աշխատավարձերը, կենսաթոշակները, նպաստները, ապահովել հասարակության համախմբումն ու ներքաղաքական կայունությունը:

Համաձայն ՀՀ Կառավարության 2008–2012թթ. ծրագրի և ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 870-Ն որոշման N 1 հավելվածի 64-րդ կետի՝ 2008թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ Կառավարություն է ներկայացվել «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծում առաջարկված փոփոխությունները նպատակ ունեն սահմանել կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը, ինչպես նաև կենսապահովման նվազագույն բյուջեի հաշվարկման մեթոդաբանությունը: Այն քննարկվել է մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2009 թվականի հունվարի 29-ի նիստում և վերադարձվել է՝ հետագայում քննարկելու նպատակով: 2009 թվականի դեկտեմբերի 3-ի նախարարական կոմիտեի նիստում որոշվել է կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի վերաբերյալ իրավական ակտի մշակմանն ու ՀՀ Կառավարություն ներկայացմանն անդրադառնալ ՄԺԾԾ-ի մակրոցուցանիշների առաջիկա երեք տարվա կանխատեսումների մշակման գործընթացի ժամանակ:

2009թ. հունվարի 1-ից բարձրացվեցին պետական նպաստների և կենսաթոշակների չափերը: Մասնավորապես.

- ընտանեկան նպաստի միջին չափը 2008 թվականի համեմատ աճել է շուրջ 12 %, կազմելով՝ 23560 դրամ,
- ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ընտանիքում ծնված առաջին և երկրորդ երեխաների համար 35000 դրամից բարձրացվեց 50000 դրամ, իսկ երրորդ և դրանից հետո ծնված երեխաների համար՝ 300.000 դրամից բարձրացվեց 430.000 դրամ,
- մինչև 2 տարեկան երեխայի խնամքի համար տրվող նպաստի չափը 3000 դրամից բարձրացվեց 6 անգամ՝ կազմելով 18.000 դրամ:

Ընդ որում, սոցիալական աջակցության ամենամեծ ծրագրի՝ ընտանեկան նպաստ համակարգով բյուջեով նախատեսվել էր ընդգրկել 114.000 ընտանիք, սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ծրագրի հասցեականության բարձրացմանն ուղղված հետևողական քայլերի արդյունքում ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների միջին թիվը տարվա կտրվածքով կազմեց 107.500՝ խնայելով շուրջ 3.1 մլրդ դրամ: Նշված խնայողություններն ուղղվեցին սոցիալական պաշտպանության ոլորտի այլ ծրագրերի լրացուցիչ ֆինանսավորմանը, որի պահանջարկն առաջացավ տարվա ընթացքում՝ կապված ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ:

2010 թվականի պետական նպաստների չափերի պահպանումը նույն մակարդակով պայմանավորված է ֆինանսական և տնտեսական համաշխարհային ճգնաժամով:

Ձուգահեռաբար շարունակվում են ընտանեկան նպաստի ծրագրի հասցեակա-նության մեծացմանն ուղղված միջոցառումների իրականացումը (ծրագրում հնարավորինս կրճատվում են նպաստառության ոչ ենթակա ընտանիքների թիվը՝ փոխարենը ծրագրում ընդգրկելով դրա կարիքն իսկապես ունեցող ընտանիքներին), որը հնարավորության կտա նույն ֆինանսական միջոցներով աջակցել ավելի մեծ թվով աղքատ ընտանիքների: Նշված միջոցառումներն իրականացվում են հիմնականում 4 ուղղություներով՝

- ընտանիքների անապահովության գնահատման կարգի բարեփոխումներ,
- վարչարարության բարելավում՝ տեղեկատվության ստացման այլընտրանքային մեխանիզմների (կենտրոնացված ձևով, քաղաքացուց անկախ) մշակում,
- բնակչության իրազեկման բարձրացում՝ իր իրավունքների, դրանց իրացման, ինչպես նաև գործող իրավական ակտերի մասին,
- ընտանեկան նպաստի մշանակման և վճարման գործընթացում ներգրավված մասնագետների վերապատրաստում:

ՀՀ կառավարությունը 2009 թվականի հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը սահմանել է 8000 դրամ, իսկ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 450 դրամ: Արդյունքում, 2009 թվականի հունվարի 1-ից ապահովագրական կենսաթոշակի միջին չափը աճել է շուրջ 17.6%-ով՝ կազմելով 25686 դրամ, իսկ սոցիալական կենսաթոշակի միջին չափը՝ շուրջ 16.0 %-ով՝ կազմելով 10173 դրամ: Ըստ այդմ, 2009 թվականին միջին ապահովագրական կենսաթոշակի չափը կազմել է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի (ըստ Կայուն զարգացման ծրագրի՝ 38,499 դրամ) շուրջ 68 տոկոսը:

Հաշվի առնելով ֆինանսատնտեսական ճգնաժամը՝ 2010 թվականին կենսաթոշակների չափերի բարձրացում չի նախատեսվել:

Միաժամանակ, մեծածավալ աշխատանքներ են տարվել նաև կենսաթոշակային բարեփոխումների ուղղությամբ, որի շրջանակներում նախատեսվում է կենսաթոշակային համակարգում պարտադիր կուտակային բաղադրիչի ներդրմամբ կապ ամրագրել անձի աշխատանքային եկամուտների և ապագա կենսաթոշակների չափի միջև: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթը, որում ներառված են ավելի քան 50 օրինագծեր: Այդ նախագծերից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման և կիրառման դեպքում կապահովվեն ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագրով և Կայուն զարգացման ծրագրով նախատեսված՝ կենսաթոշակային համակարգի բաշխողական բաղադրիչի պարամետրիկ բարեփոխումները:

Մասնավորապես, նախագծի ընդունմամբ.

- Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կառուցվածքն ու բաղադրիչները կհամապատասխանեցվեն կենսաթոշակային բարեփոխումների տրամաբանությանը.
- աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի իրավունք տվող նվազագույն ստաժը գործող օրենքով սահմանված՝ 5 տարվա փոխարեն կսահմանվի 10 տարի.
- անցում կկատարվի կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգին.

- ծերության սոցիալական կենսաթոշակի իրավունքը կսահմանվի Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունենալու (բնակվելու) ժամանակահատվածի համար.

- կսահմանվի, որ անձը աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակ ստանալու իրավունքը պահպանում է անկախ բնակության վայրից (ՀՀ-ում բնակվելու հանգամանքից).

- կսահմանվի, որ չստացված կենսաթոշակի գումարները վճարվում են ամբողջ ժամանակահատվածի համար (ներկայումս այն վճարվում է առավելագույնը 3 տարվա համար).

- **կլոդիֆիկացվի պետական բյուջեից վճարվող կենսաթոշակների նշանակումը և վճարումը կանոնակարգող օրենսդրությունը՝ «Ջինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի՝ կենսաթոշակներին վերաբերող դրույթները արտացոլելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում:**

Փաթեթում ներառված «Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման և կիրառման դեպքում մասնավորապես.

- կկատարելագործվի անձի կենսաթոշակային իրավունքների հաշվառման գործընթացը.

- կապահովվի սոցիալական պաշտպանության ծրագրերի հասցեականությունը.

- կապահովվի կենսաթոշակային քաղաքականության և իրականացվող ծրագրերի իրատեսականությունը) և այլն:

Փաթեթում ներառված մեկ այլ, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման և կիրառման կապակցությամբ.

ՀՀ-ում ներկայումս գործում է բաշխողական կենսաթոշակային համակարգ, որը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից: Միաժամանակ անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար բարձրացնել կենսաթոշակները՝ նպատակ ունենալով դրանք հասցնել արժանավայել մակարդակի:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագծով ներդրվող համակարգը միջազգային պրակտիկայում կիրառվող լավագույն փորձի օրինակ է, որի կիրառմամբ անմիջական կապ է ստեղծվում մարդու եկամուտների և կենսաթոշակի միջև: Միևնույն ժամանակ կուտակային կենսաթոշակային համակարգը ապահովում է մարդու աշխատունակ տարիքում եկամտի և կենսաթոշակային տարիքում կենսաթոշակի միջև էական տարբերության բացառումը:

Մյուս կողմից պետությունը կատարում է Սահմանադրությամբ ամրագրված քաղաքացիների հանդեպ իր սոցիալական պարտավորությունները ինչպես «Պետական կենսաթոշակների մասին» և սոցիալական բնագավառի այլ օրենքներով սահմանված կարգով, այնպես էլ օրինագծով նախատեսվող կուտակային համակարգին անցած անձանց՝ իրենց վճարումների չափով պետական լրացուցիչ աջակցության միջոցով:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ժողովրդագրական անբարենպաստ միտումներով՝ ծնելիության կրճատմամբ, 90-ական թվականներին աշխատունակ տարիքի բնակչության ակտիվ արտահոսքով, ինչպես նաև այն փաստով, որ «Ծնելիության Բումի» սերունդն առաջիկա տարիների ընթացքում համալրելու է կենսաթոշակառուների բանակը: Հարկ է նշել նաև, որ կյանքի սպասվող միջին տևողությունը ավելանալու միտում ունի:

Այսպիսով Նախագծի ընդունումը հնարավորություն կտա Հայաստանում ստեղծել մի համակարգ, որը միջին և երկար ժամկետում կապահովի կայուն և ինքնաֆինանսավորվող կենսաթոշակային համակարգ՝ ապահովելով աշխատողների և

կենսաթոշակառուների կյանքի որակի ճեղքվածքի նվազումը, ինչպես նաև տնտեսությունում կատեղծի հիմք՝ երկարաժամկետ ներդրումների համար:

Իսկ փաթեթում ներառված «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ կբարելավվի կենսաթոշակային ապահովության համակարգի ֆինանսական կայունության աստիճանը:

*23. Համակարգային, հետևողական ու արդյունավետ պայքար ծավալել կոռուպցիայի դեմ:*

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ձեռնարկվել են լրացուցիչ միջոցառումներ նախապատրաստվող և իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիությունը ապահովելու և կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ:

Ի կատարումն «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.10.2009թ. թիվ 1272-Ն որոշման պահանջների ՀՀ ոստիկանության պետի 22.12.2009թ. թիվ 3209-Ա հրամանով հաստատվել է «Հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012 թվականների ծրագրով նախատեսված և ՀՀ ոստիկանության իրավասությանը վերաբերող միջոցառումների ցանկը», որում ներառված միջոցառումներն իրականացվում են համաձայն ժամանակացույցի:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ևս մասնակցել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքներին: Նախարարությունը՝ իր մասով, հետևողականորեն իրականացրել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրով 2009 թվականի համար նախատեսված բոլոր միջոցառումները, մասնավորապես՝ նախարարության կողմից մշակվել և ՀՀ բոլոր համայնքներին է տրամադրվել ավագանու գործունեության կանոնակարգը, որով նկարագրվում են ավագանու նիստերին բնակչության մասնակցության ընթացակարգը, ՀՀ մարզպետների մոտ քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման միասնականացված կարգերը, որպես մեթոդական ուղեցույց տրամադրվել են ՀՀ բոլոր համայնքների ղեկավարներին, համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթների անցկացման կարգով նախատեսվել են մրցույթների հրապարակայնությունն ապահովող պարտադիր ընթացակարգեր և այլն:

Ձեռնարկվում են միջոցներ վերը նշված ծրագրով 2010 թվականին նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետներում իրականացնելու ուղղությամբ:

Համայնքային ծառայողների պարտադիր վերապատրաստման ծրագրով կնախատեսվի «Հակակոռուպցիոն հմտությունները տեղական ինքնակառավարման համակարգում» թեման:

Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատմանը վերաբերող դրույթներն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2008 թվականի դեկտեմբերի 2-ին: Ի կատարումն հիշյալ օրենքի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2009 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1205-Ն որոշմամբ ընդունվել է «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը»:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2011 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1272-Ն որոշմամբ հաստատվել է համապատասխան միջոցառումների ցանկը:

*24. Էականորեն կրճատել ստվերային տնտեսությունը, ապահովել եվրոպական երկրների միջինացված ցացանիշներին համադրելի հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցություն, ապահովել մրցակցային հավասար և արդարացի պայմաններ, բացառել արհեստական տնտեսական մենաշնորհները:*

ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: ՀՀ աշխատանքային օրենսգրքում առաջարկված փոփոխությունները նպատակ ունեն օրենսգրքի դրույթները համապատասխանեցնել միջազգային իրավունքի նորմերին, պայմաններ ստեղծել գործարար միջավայրի բարելավման համար: Գործատուների համար սահմանված որոշ կոշտ դրույթների փոփոխությունը կապահովի ստվերային զբաղվածության կրճատումը, կբարձրանա աշխատանքի արտադրողականությունը:

*25. Ձևավորել տնտեսության արդյունավետ ծյուղային կառուցվածք, իրագործել արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական քաղաքականություն, տարածքային համաչափ զարգացում:*

ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացմամբ ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները, որի հիմքում դրված է արտահանման ուղղվածություն ունեցող զարգացած արդյունաբերական համակարգի ձևավորումը: Նշվածը խթան կհանդիսանա միջազգային ստանդարտներին համապատասխանող ապրանքների թողարկման, նոր արտաքին շուկաների ընդլայնման և նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Հաշվի առնելով, որ միջազգային ասպարեզում Հայաստանի մրցունակությունը մեծապես կախված է կազմակերպությունների նորարարական ապրանքներ ստեղծելու և օտարերկրյա շուկաներ հանելու կարողությունից, կարևորվում է նորարարական տնտեսության ձևավորման անհրաժեշտությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրա համար Հայաստանն ունի բավարար գիտական ներուժ: Կարևորվում է նաև արդիականացումը ինովացիոն հիմքի վրա և բարձր արտադրողականությամբ արտադրությունների ստեղծումը՝ խրախուսելով տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներդրումը, այդ թվում՝ օտար կապիտալի մասնակցությամբ: Միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված քայլերից է կլաստերային զարգացմանն ուղղված միջոցառումները: Նախատեսվում է, ուսումնասիրելով կլաստերային զարգացման համաշխարհային փորձը, ուղենշել հանրապետության կլաստերաստեղծ ոլորտները և նպատակաուղղված կլաստերային քաղաքականության միջոցով իրականացնել հանրապետությունում գիտաարտադրական և սպասարկող կլաստերների ստեղծման նախաձեռնումն ու համակարգումը: Վերոհիշյալ հայեցակարգի դրույթներին համապատասխան 2010 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից կմշակվի և ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի համապատասխան գործողությունների ծրագիր:

ՀՀ կառավարության կողմից 2008-2009թթ. հայտարարվել է «Ջերմուկ», «Տաթև» և «Հյուսիսային դարպաս» զբոսաշրջային կենտրոնները: Ներկայումս ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012 թթ.

ռազմավարությունը», իսկ մյուս երկու զբոսաշրջային կենտրոնների համար մշակման փուլում են գտնվում զարգացման ծրագրերը: ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Ձվարթնոց օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու մասին» և «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու» հայեցակարգերը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է «Հողի առանց վարի մշակության տեխնոլոգիայի ներդրման 2010-2014թթ. պետական աջակցության» ծրագրի նախագիծը, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Նշված միջոցառումների իրականացումը լուրջ խթան կարող է հանդիսանալ տարածքային համաչափ զարգացման համար:

ՀՀ կառավարության 24.12.2009 թվականի «ՀՀ կառավարության 2010 թվականի գործունեության ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N1523-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 66-րդ կետով ամրագրված է «Տնտեսության դիվերսիֆիկացման և արտահանման ներուժի բացահայտման ռազմավարության ներդրում» գերակա խնդիրը, որը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պետք է լուծի արդյունաբերական քաղաքականության իրականացման, գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքների ձևավորման և զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացման միջոցով:

Այսպիսով, վերոնշյալ միջոցառումների իրականացումը կնպաստի ձևավորել տնտեսության արդյունավետ ճյուղային կառուցվածք, իրագործել արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական քաղաքականություն և տարածքային համաչափ զարգացում:

Տարածքային համաչափ զարգացման վերաբերյալ՝ կառավարության կողմից հաստատված Կայուն զարգացման ծրագրի տարածքային զարգացման սցենարը նախատեսում է նպատակային տարածքային քաղաքականության իրականացում, որն ուղղված է լինելու Երևանից դուրս տնտեսական աճի խրախուսմանը:

Այդ արդյունքին հասնելու նպատակով անհրաժեշտ կլինի էականորեն վերաբաշխել ներդրումների ծավալները Երևանի, այլ քաղաքների և գյուղական վայրերի միջև: Խոսքը գնում է ոչ միայն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող կապիտալ ներդրումների, այլ մնացած մյուս աղբյուրների հաշվին իրականացվող ներդրումների մասին ևս:

Այս նպատակների իրականացման համատեքստում կարևոր նշանակություն են ստանում տարածքային զարգացման ծրագրերի մշակումն ու իրականացումը: Մարզերի համաչափ զարգացման նպատակով 2009 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը համապատասխան մարզպետարանների հետ համատեղ մշակել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Տավուշի, ՀՀ Սյունիքի, ՀՀ Լոռու և ՀՀ Շիրակի մարզերի զարգացման ծրագրերը: Այս համատեքստում ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել նաև քաղաքների առաջանցիկ զարգացման նպատակային ծրագրերի կազմման և իրականացման հայեցակարգը:

Տարածքային համաչափ զարգացման համատեքստում նախարարությունը վերլուծել է 2009 թվականին պետական բյուջեի նախագիծը տարածքային կտրվածքով՝ ըստ ոլորտների նախատեսված ներդրումները համեմատելով տվյալ ոլորտին բնորոշ ցուցանիշների և տվյալ տարածքի բնակչության թվաքանակի հետ: Նմանատիպ աշխատանք կատարվել է առաջին անգամ և արժանագրվել, որ դեռևս պետական ներդրումների բաշխումը ըստ մարզերի չունի որևէ համամասնություն: Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել համապատասխան ցուցանիշներ, որոնց կիրառման դեպքում ՀՀ պետական բյուջեի կազմման գործընթացում կներդրվի տարածքային համաչափ զարգացման տրամաբանությունը:

Եվրոպական կառույցների հետ ՀՀ համագործակցությունը համակարգելու նպատակով ՀՀ Նախագահի 08.09.2008թ. թիվ 149-Ա կարգադրությամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, իսկ ՀՀ Նախագահի 06.05.2009թ. ՆԿ 68-Ա կարգադրությամբ հաստատվել է Եվրոպական հարևանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ցանկը, որտեղ որպես միջոցառում նշված է նաև տարածքային զարգացման հայեցակարգի մշակումը: Այս կապակցությամբ ՀՀ ազգային անվտանգության քարտուղարի (միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ) մոտ 26.09.2009թ. կայացած խորհրդակցության թիվ 5 արձանագրության 6-րդ կետի համաձայն ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի համակարգող է նշանակվել ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը: Արդեն տեղի է ունեցել աշխատանքային խմբի 3 նիստ, և ՀՀ ազգային անվտանգության խորհուրդ է ներկայացվել ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգի բովանդակությունը:

«Տարածքային համաչափ զարգացման» հայեցակարգի մշակման աշխատանքներն իրականացնելիս ԵՄ անդամ երկրների փորձը ուսումնասիրելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը 2009 թվականին հայտ էր ներկայացրել ԵՀԳԳ ներքո իրականացվող «Տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման գործիք» (TAIEX) ծրագրի գրասենյակ, այդ ծրագրի շրջանակներում ԵՄ կողմից աջակցություն ստանալու համար: Հայտը քննարկվել և հաստատվել է ԵՀ կողմից, ինչպես նաև նշանակվել է փորձագետ:

Տարածքային համաչափ զարգացումը ենթադրում է ոչ միայն պետական բյուջեի միջոցներով, այլ նաև համայնքների սեփական եկամուտների հաշվին համապատասխան ծրագրերի իրականացում և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատշաճ որակի ծառայությունների մատուցում:

Ֆինանսական համահարթեցման մասին ՀՀ նոր օրենքի նախագծով նախատեսվում է դոտացիաները տրամադրելիս հաշվի առնել համայնքների առանձնահատկությունները բնութագրող մի շարք նոր գործոններ, որոնք այժմ չեն կիրառվում: Մասնավորապես՝ նրանց աշխարհագրական դիրքը, բարձրադիրությունը, հեռավորությունը ճանապարհից և տնտեսական կենտրոններից, մասշտաբը և այլն: Արդյունքում՝ համահարթեցման դոտացիաները կբաշխվեն ավելի հասցեական, մասնավորապես՝ տեղի կունենա վերաբաշխում բյուջետային առավել մեծ հնարավորություն ունեցող համայնքներից դեպի թույլ համայնքներ:

Վերը նշված օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ:

*26. Կրճատել գործազրկության մակարդակը՝ պետության նախաձեռնության և/կամ մասնավորի խրախուսման հենքի վրա նոր աշխատատեղերի ստեղծմամբ և իրականացնել ժողովրդագրական ակտիվ քաղաքականություն:*

Համաձայն «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը յուրաքանչյուր տարի գործազրկության մակարդակի կրճատման ուղղությամբ հաստատման է ներկայացնում զբաղվածության ամենամյա պետական ծրագիրը, որում նշվում են բնակչության զբաղվածության պետական կարգավորման նպատակով հանրապետությունում իրականացվող զբաղվածության ամենամյա պետական ծրագրերը: 2010 թվականի ամենամյա պետական ծրագրի միջոցառումների աղյուսակը կցվում է:

ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի թիվ 27 արձանագրային որոշման 3-րդ կետով ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա

իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը, որոնցով սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական պետական քաղաքականության հիմնական ուղղությունները (2009–2035թթ):

ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 53 արձանագրության 7-րդ կետով ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել նաև Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2010 թվականի պետական ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը, որի հիմնական նպատակն է ժողովրդագրական բացասական միտումների կանխմանն ու իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Կարևորվում է ժողովրդագրական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության ստացման և ժողովրդագրական զարգացման մոնիտորինգի համակարգի մշակումն ու ներդրումը, որն ընդգրկված է ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1523-Ա որոշման 2-րդ հավելվածով սահմանված գերակա խնդիրների շարքում: Ներկայումս մշակվում է ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա պետական ծրագրի մոնիտորինգի իրականացման կարգը:

*27. Հետևողականորեն ներդնել սոցիալական գործընկերության և պետական, համայնքային ու միավորային կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ամբողջական համակարգ:*

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի Արհմիությունների կոնֆեդերացիան և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի՝ 2009 թվականի ապրիլի 27-ին կնքել են հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը, որով սահմանվում են սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման լրացուցիչ երաշխիքներ և Կողմերի համատեղ գործողությունները դրանց իրականացման համար:

Պայմանագրի 5-րդ բաժնին համապատասխան՝ հանրապետական մակարդակում կոլեկտիվ բանակցությունների վարման, պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման, պայմանագրի կիրարկումն ապահովելու նպատակով գործողությունների ծրագրի մշակման, պայմանագրի կատարման ընթացքում ծագած խնդիրների քննարկման, Կողմերին համապատասխան առաջարկների ներկայացման նպատակով Կողմերի համաձայնագրով ձևավորվել և հաստատվել է հանրապետական եռակողմ հանձնաժողովի կազմը:

Կողմերի ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբի կողմից մշակվել է Պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների եռամյա ծրագրի նախագիծը:

*28. Կատարելագործել սեփականության իրավունքի պաշտպանության համակարգը և ապահովել ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, փոքր և միջին գործարարությանը աջակցությունը, ինչպես նաև միջին խավի ձևավորման հետևողական քաղաքականության իրագործումը :*

*29. Դատաիրավական համակարգի գործունեությունը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին՝ ապահովելով համակարգի անաչառության և անկախության նկատմամբ հասարակության վստահության վերականգնումը:*

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միության գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 68-Ա կարգադրության

համաձայն նախատեսվում է դատարաններում էլեկտրոնային տեղեկատվական տերմինալների ստեղծումը, որոնք հնարավորություն կտան էլեկտրոնային փոստով ուղարկել բողոքը: Աշխատանք է տարվում «Արդարադատության մատչելիություն» ծրագրի իրագործման ուղղությամբ:

Մշակվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որի համաձայն նախատեսվում է ընդլայնել անվճար իրավաբանական օգնության շրջանակը:

*30. Ընդունել Համայնքային ոստիկանության մասին, Երաշխավորված իրավաբանական օգնության մասին, Ցուցմունք տալու պարտականությունից ազատելու մասին, Պատճառված վնասի հատուցման մասին, Մասնավոր խուզարկուհի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ սոցիալական օրենսգիրք:*

Ներկայումս նպատակահարմար չէ «Համայնքային ոստիկանության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, քանի որ «ՀՀ ոստիկանության և ԵԱՀԿ երեվանյան գրասենյակի միջև համագործակցության մասին» Հուլիսի և «ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի և Արաբկիրի համայնքի ազգաբնակչության միջև գործընկերության հաստատում» ծրագրի իրականացման շրջանակներում իրականացված պիլոտային ծրագիրն ընդլայնելու նպատակով ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրով նախատեսված է իրականացնել:

Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Միջոցառման անվանումը	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարողները
Թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրում	Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների կառուցվածքում ոստիկանության հենակետերի ստեղծում	2011թ. 2-րդ կիսամյակ	Պետական բյուջե	Ոստիկանություն, Երևանի քաղաքապետարան

Ժամանակավոր հանձնաժողովն առաջարկել էր նաև, որ ապացուցողական անհրաժեշտ բազա ապահովվելու տեսանկյունից, առավել նպատակահարմար է նկարահանել օպերատիվ միջոցառումների ամբողջական ընթացքը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է հասարակական հնչեղություն ենթադրող միջոցառմանը:

Այդ նպատակով, ձեռնամուխ լինելով օպերատիվ միջոցառումների ընթացքի տեսաձայնագրման գործընթացի հստակեցմանը, 2009թ. ընթացքում, ՀՀ ոստիկանությունում մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ են դրվել ՀՀ ոստիկանության պետի հետևյալ հրամանների նախագծերը՝ «ՀՀ ոստիկանության մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում հատուկ տեխնիկական միջոցների օգտագործման կարգի մասին» և «ՀՀ ոստիկանության մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման և դրանց արդյունքների ամրագրման կարգի վերաբերյալ»:

Գտնում ենք նաև, որ «Երաշխավորված իրավաբանական օգնության մասին», «Ցուցմունք տալու պարտականությունից ազատելու մասին», «Պատճառված վնասի հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման անհրաժեշտությունը չկա, քանի որ անվճար իրավաբանական օգնության, ցուցմունք տալու պարտականության, վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի

Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով:

Ինչ վերաբերում է ՀՀ սոցիալական օրենսգրքի մշակմանը, ապա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում դեռևս քննարկվում է այդ հարցը, աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը միավորել մեկ սոցիալական օրենսգրքում թե, ինչպես այսօր է, յուրաքանչյուր ենթաօլորտը կարգավորել իր համապատասխան օրենքներով:

Միաժամանակ հայտնում ենք, որ հարցադրումների 13-րդ կետի վերաբերյալ պատասխանը կներկայացվի լրացուցիչ գրությամբ:

Հարգանքով՝

Դավիթ

Սարգսյան

**ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱ ԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

h/h	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Ակնկալվող արդյունքները	կատարված և Ժամկետ
1.	Աշխատանք փնտրող անձանց խորհրդատվության տրամադրում և հաշվառում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Իրականացնել շուրջ 120000 աշխատանք փնտրող անձ խորհրդատվություն և հաշվառում (2008թ-ին՝ 115 000)	տարվա ընթացք
2.	Աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման աջակցություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Իրականացնել շուրջ 8800 աշխատանք փնտրող չգբաղված անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն	տարվա ընթացք
3.	Աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Իրականացնել շուրջ 25000 աշխատանք փնտրող անձանց խորհրդատվություն	տարվա ընթացք
4.	Աշխատուժի առաջարկի և պահանջարկի գնահատման նպատակով աշխատաշուկայի վերաբերյալ տվյալների հավաքագրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Գործատուների հետ համագործակցության արդյունքում յուրաքանչյուր ամիս ստանալ 1100-1200 թափուր աշխատատեղի հայտ	տարվա ընթացք
5.	Ծրագրերի արդյունավետության մոնիտորինգ և գնահատում, տեղե-	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կատարել համակարգում իրականացվող զբաղվածության ծրագրի մոնիտորինգ	տարվա ընթացք

	կատվական բազաների տվյալների համադրում			
6.	Գործատուների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման ձևերի և մեթոդների կատարելագործում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կատարել ուսումնասիրություն տարեկան 2 անգամ ընտրանքով ձևավոր 6000 գործատուի մոտ	տարվա ընթացք
7.	Համակարգի տեղեկատվական բազաների շարունակական կատարելագործում, շահագործում, տեղեկատվական հոսքերի փոխանակման ապահովում ("Գործ" ծրագիր)	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կատարել համակարգում հաշվառված շուրջ 8500 գործազուրկների և զբաղվածների տվյալների բազայի համադրում	տարվա ընթացք
8.	Սոցիալական գործընկերության ամրապնդում և զարգացում, զբաղվածության պետական ծրագրերի մշակմանը և իրականացմանը սոցիալական գործընկեր կողմերի մասնակցության ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հրավիրել հանրապետական տարածքային համաձայնեցման կոմիտեների նիստ եռամսյակը մեկ անգամ և անհրաժեշտությունից ելնելով	տարվա ընթացք
9.	Ջբաղվածության բնագավառը կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Օրենսդրության կատարելագործում	տարվա ընթացք
10.	Ջբաղվածության պետական ծրագրերի հանրային իրազեկում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Յուրաքանչյուր ամիս և անհրաժեշտությունից ելնելով տեղեկատվություն տալ համակարգում իրականացվող ծրագրերի վերաբերյալ	տարվա ընթացք
11.	Գործազրկության նպաստի վճարում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ամսական միջին թվով 21000 գործազուրկի նշանակել և վճարել գործազրկության նպաստ	տարվա ընթացք
12.	Գործազուրկների մասնագիտական ուսուցման կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կազմակերպել գործազուրկի մասնագիտական ուսուցում	տարվա ընթացք
13.	Հաշմանդամների աշ-	ՀՀ աշխատանքի և	Կազմակերպել 77	տարվա

	խատանքային ունակությունների վերականգնում և մասնագիտական ուսուցման կազմակերպում	սոցիալական հարցերի նախարարություն	հաշմանդամի աշխատային ունակությունների վերականգնում և մասնագիտական ուսուցում	ընթացք
14.	Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրադված անձանց վերամասնագիտացման կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կազմակերպել 20 երկարամյա ծառայության արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրադված անձանց վերամասնագիտացում	տարվա ընթացք
15.	Այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկների նյութական ծախսերի հատուցում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կազմակերպել այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ 30 գործազուրկի նյութական ծախսերի հատուցում	տարվա ընթացք
16.	Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կազմակերպել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար 100 գործազուրկի և հաշմանդամի ֆինանսական աջակցության տրամադրում	տարվա ընթացք
17.	Աշխատաշուկայում աննրցունակ անձանց աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կազմակերպել աշխատաշուկայում աննրցունակ 180 անձանց աշխատանքի ընդունելու դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում	տարվա ընթացք
18.	Թաղման նպաստի վճարում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Վերջին 3 տարվա վերլուծության արդյունքներով՝ կանխատեսվում է 120 գործազուրկի մահվան դեպքում թաղման նպաստի վճարում	տարվա ընթացք
19.	Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազ-	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Իրականացնել մեկ հետազոտություն աշխատաշուկայի կանխատեսման նպատակով	տարվա ընթացք

	մակերպում			
20.	վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	4959 աշխատանք փնտրող անձանց ժամանակավոր աշխատանքով ապահովում	տարվա ընթացք
21.	Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպում, արդյունքների գնահատում և կատարելագործում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կազմակերպել 6 աշխատանքի տոնավաճառ շուրջ 200 գործատուի մասնակցությամբ, որի արդյունքում կհամալրվի թափուր աշխատատեղերի 30%-ը	տարվա ընթացք
22.	Աշխատանքի ակունքների աշխատանքների կազմակերպում և համակարգում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Զբաղվածության կենտրոններում ստեղծված 11 աշխատանքային ակունքներից յուրաքանչյուրում տարվա ընթացքում խմբային աշխատանքներում կընդգրկվի 60 աշխատանք փնտրող չզբաղված անձ	տարվա ընթացք
23.	"Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն" ՊՈԱԿ-ի արդյունավետ գործունեության կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	1500 դեռահասներին երիտասարդներին աշխատանքի ընտրության և մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության տրամադրում	տարվա ընթացք
24.	հաշմանդամներին ուսուցողական, խորհրդատվական և աշխատանքի վերականգնման ծառայությունների տրամադրման նպատակով "հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն" ՊՈԱԿ-ի արդյունավետ գործունեության կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կազմակերպել 720 հաշմանդամի ուսուցողական, խորհրդատվական և աշխատանքի վերականգնման ծառայությունների տրամադրում	տարվա ընթացք
25.	Մասնագիտական ուսուցման կազմակերպում այլ կազմակերպությունների	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Կազմակերպել 150 աշխատանք փնտրող չզբաղված անձի մասնագիտական ուսուցում	տարվա ընթացք

	<p>հետ համագործակցության արդյունքում (միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ, ուսումնական կենտրոններ, գործատուներ)</p>			
--	--	--	--	--

**ՏԵՂԵԿԱԼՔ**

**Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1609, 1620, 1643 և 1677 բանաձևերի կատարման մասին**

**2008թ. փետրվարի 19-ի ՀՀ նախագահական ընտրություններին հաջորդած մարտիմեկյան իրադարձություններից հետո, 2008թ. ապրիլի 17-ին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունեց /ԵԽԽՎ/ «Ժողովրդավարական հաստատությունների գործունեությունը Հայաստանում» 1609 բանաձևը:**

Վերոնշյալ բանաձևով Վեհաժողովը ներկայացրել էր **4 հիմնական պահանջ՝**

1. փոփոխել «ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքում 2008թ. մարտի 17-ին կատարված փոփոխությունները,

**Կատարված քայլեր**

2008թ. հունիսի 11-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

2. ձեռնարկել 2008թ. մարտի 1-ի իրադարձությունների թափանցիկ և վստահելի հետաքննություն,

**Կատարված քայլեր**

2008թ. հունիսի 16-ին ստեղծվեց 2008 թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց դրդապատճառների ուսումնասիրության ԱԺ ժամանակավոր հանձնաժողով:

3. ազատ արձակել բոլոր այն անձանց, ովքեր կալանավորվել են ամերևույթ արհեստական և քաղաքական շարժառիթներ ունեցող մեղադրանքներով և անձնապես չեն կատարել որևէ բռնի գործողություն կամ ծանր հանցանք,

4. գործող բոլոր քաղաքական ուժերի միջև նախաձեռնել բաց և լուրջ երկխոսություն,

**Կատարված քայլեր**

ՀՀ նախագահի կոչն ընդիմությանը ծավալել կառուցողական երկխոսություն մնաց անպատասխան

**2008թ. հունիսի 25-ին ԵՒՏՎ նստաշրջանի ընթացքում ընդունվեց «Ժողովրդավարական հաստատությունների գործունեությունը Հայաստանում» 1609 բանաձևի կատարման մասին ԵՒՏՎ 1620 (2008) բանաձևը:**

1620 բանաձևում ամրագրված պահանջները.

**1. «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենք**

գործնականում երաշխավորել հավաքների ազատությունը. անհարկի սահմանափակումներ չկիրառել ընդհանուր կողմից կազմակերպվող հանրահավաքներին՝ հատկապես հանրահավաքների անցկացման վայրերի առումով:

**Կատարված քայլեր**

Օրենքի կիրառումը գործնականում ապահովելու նպատակով մեկնարկվեց Վենետիկի հանձնաժողովի հետ համագործակցությունը՝ միտված իրավապահ մարմինների, տեղական կառավարման, գործադիր իշխանության և դատական համակարգի ներկայացուցիչների վերապատրաստմանը:

Համաձայն Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկատվության, 2009թ. հունվարից մինչև սեպտեմբեր ամիսը Քաղաքապետարանը ստացել է ցույցեր անցկացնելու 146 իրազեկում, որից 95-ը ընդունվել է ի գիտություն (թույլատրվել է), 24-ի վերաբերյալ առաջարկվել է այլ վայր, 2 իրազեկում մերժվել է, 2 միջոցառմաների վերաբերյալ կազմակերպիչները իրենց ներկայացրած իրազեկումը հետ են վերցրել, 23 այլ միջոցառումների վերաբերյալ կայացվել է դրական որոշում:

**2. Աժ ժամանակվոր հանձնաժողով**

Մարտիմեկյան իրադարձությունները հետաքննող հանձնաժողովի ձևաչափն ու կազմը չի երաշխավորում հանձնաժողովի անկախությունը և անկողմնակալությունը: Հանձնաժողովը պետք է ձգտի աշխատել կոնսենսուսի սկզբունքով, մարդու իրավունքների պաշտպանը պետք է ի պաշտոնե իրավիրվի մասնակցելու հանձնաժողովի աշխատանքին, և քաղաքական բոլոր ուժերը պետք է կառուցողաբար մասնակցեն հետաքննող հանձնաժողովի աշխատանքին:

**Կատարված քայլեր**

Մարդու իրավունքների հարցերով ԵՒ հանձնակատարը, հիմնվելով ԵՒՏՎ բանաձևի վերոնշյալ պահանջին, առաջարկել էր ՀՀ իշխանություններին ստեղծել փաստահավաք խումբ՝ քաղաքական բոլոր ուժերի մասնակցությամբ: Դրա հիմնական խնդիրն էր լինելու շարադրել մարտիմեկյան իրադարձությունների փաստերը և դեպքերի ճշգրիտ նկարագրությունը՝ զերծ մնալով քաղաքական գնահատականներից: Բացի այդ, փաստահավաք խումբը չէր ենթարկվելու Աժ ժամանակավոր հանձնաժողովին, այլ օժանդակելու էր հանձնաժողովի աշխատանքներին:

Հոկտեմբերի 23-ին ՀՀ նախագահը ստորագրեց **Փորձագետների փաստահավաք խմբի ստեղծման և նրա գործունեության կազմակերպման կարգը: Խմբի մանդատը մշակվել է մարդու իրավունքների հարցերով ԵՒ հանձնակատարի հետ քննարկումների արդյունքում**, հաշվի առնելով հանձնակատարի կողմից բարձրացված հարցերը:

Խմբում ընդգրկված էին իշխանական կոալիցիայի, խորհրդարանական ընդդիմության, արտախորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը, որն էլ ընտրվեց խմբի ղեկավար:

Եվրոպայի խորհուրդը խմբին տրված իրավասությունների շրջանակը և ձևաչափը համարել է բավարար արդյունավետ աշխատանքի համար:

### **3. Ա1+**

«Վեհաժողովն անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի “Ա1+” հեռուստաընկերության հեռարձակման արտոնագիր չտրամադրելու վերաբերյալ դատավճռին կոչ է անում արտոնագիր շնորհող մարմնին ապահովել արտոնագրման բաց, արդար և թափանցիկ ընթացակարգ»:

#### **Կատարված քայլեր**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի “Ա1+” հեռուստաընկերության հեռարձակման արտոնագիր չտրամադրելու վերաբերյալ դատավճռի առնչությամբ ՀՀ կառավարությունն արդարադատության նախարարության միջոցով վճարել է 30.000 եվրո նախատեսված տուգանքը:

2008 թ. հոկտեմբերին Հեռուստատեսության և Ռադիոյի մասին օրենքը լրացվել է հետևյալ պարբերությամբ.

*«Մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթներ չեն հայտարարվում: Այն հեռուստաընկերությունները, որոնց լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև 2011 թվականի հունվարի 21-ը, կարող են լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ ներկայացնել Ազգային հանձնաժողով: Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է հայցվող ժամկետով, բայց ոչ ավելի, քան մինչև 2011 թվականի հունվարի 21-ը»:*

ՀՀ պատրաստվում է թվային ռադիոհեռարձակման համակարգ ներդնել Հայաստանի տարածքում: Դա պայմանավորված է նրանով, որ թվային և անալոգային համակարգերում նույն հաճախականություններն են օգտագործվում: Զուգահեռաբար երկու համակարգեր պահպանելը շատ թանկ է:

### **4. Կալանավորված անձիք**

Վեհաժողովը ողջունում է այն անձանց ազատ արձակումը, ովքեր կալանավորվել էին առերևույթ արհեստական և քաղաքական շարժառիթներ ունեցող մեղադրանքներով: Այնուհանդերձ համարում է, որ այս խնդրի կապակցությամբ ձեռք բերված առաջընթացը բավարար չէ:

#### **Կատարված քայլեր**

Կալանքի տակ գտնվող մեղադրյալների գործերի նախաքննությունն ավարտվեց և քրեական գործի նյութերը տրամադրվեցին ծանոթացման պաշտպանական կողմին:

### **5. Քրեական օրենսգրքի 225 և 300 հոդվածներ**

Ազգային ժողովը պետք է ի գիտություն ընդունի Վենետիկի հանձնաժողովի բացասական կարծիքը Քրեական օրենսգրքի 225 և 300 հոդվածներում առաջարկված փոփոխությունների վերաբերյալ:

### **Կատարված քայլեր**

Աժ նախագահի 2009թ. հունվարի 23-ի որոշմամբ ստեղծվեց Ազգային ժողովում աշխատանքային խումբ, որը պետք է ես համապատասխան մարմինների հետ համագործակցությամբ մեկամսյա ժամկետում մշակեր ՀՀ քրեական օրենսգրքի 225 և 300 հոդվածների փոփոխությունները՝ դրանք համապատասխանեցնելով ես չափանիշներին:

**2009թ. հունվարի 27-ին եսխՎ նստաշրջանի ընթացքում ընդունվեց «Ժողովրդավարական հաստատությունների գործունեությունը Հայաստանում» 1609(2008) և 1620(2008)բանաձևերի կատարման մասին եսխՎ 1643 (2009) բանաձևը:**

### **Վեհաժողովի պահանջ.**

Ողջունում է ՀՀ նախագահի շնորհած ներումների աճող թիվը, սակայն, ափսոսանքով նշում է, որ իշխանությունները դեռևս չեն օգտագործել իրենց հասանելի իրավական մյուս բոլոր միջոցները, ինչպիսիք են համաներումը, ներումները կամ մեղադրանքից հրաժարվելը, որպեսզի ազատ արձակեն այն անձանց, ովքեր ազատագրվել են մարտիմեկյան իրադարձություններից հետո: Վեհաժողովը կոչ է անում իշխանություններին այս առնչությամբ դիտարկել առկա բոլոր տարբերակները:

### **Կատարված քայլեր**

2009թ. հունիսի 16-ին ՀՀ նախագահը համաներման առաջարկ էր ներկայացրել Ազգային ժողով, որն էլ 2009թ. հունիսի 19-ին ընդունվել էր վերջինիս կողմից: 2009թ. սեպտեմբերի 24-ի դրությամբ մարտիմեկյան դեպքերի հետևանքով ազատագրված անձանցից 28-ին ՀՀ նախագահի հրամանագրով շնորհվել է ներում, համաներում հայտատարելու մասին Աժ որոշման ընդունման պահին ազատագրված վայրերում պատիժ կրող 28 դատապարսյալներից 19-ը՝ համաներում հայտարարելու մասին որոշմամբ ազատվել են պատժից:

### **Կատարված քայլերի առնչությամբ Վեհաժողովի գնահատականը**

Վեհաժողովը գոհունակություն է հայտնել մի շարք ոլորտներում, մասնավորապես՝ լրատվամիջոցների, ընտրական օրենսդրության և դատաիրավական ոլորտներում վեհաժողովի պահանջներին համահունչ բարեփոխումներ նախաձեռնելու ուղղությամբ ՀՀ իշխանությունների գործադրած ջանքերի առնչությամբ:

Ողջունել է ՀՀ նախագահի շնորհած ներումների աճող թիվը:

Ողջունել է Փաստահավք խմբի ստեղծումը և գոհունակություն է արտահայտել նշված խմբի աշխատանքներին լիարժեք մասնակցություն բերելու ընդդիմության որոշման կապակցությամբ:

Ողջունել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի 2009թ. հունվարի 22-ի որոշումը՝ Աժ աշխատանքային խումբ ստեղծելու մասին, որը պետք է քրեական օրենսգրքի 225 և 300 հոդվածների իրավական թերությունները համապատասխանեցներ ես չափանիշներին:

**2009թ. հունիսի 24-ին եսխՎ նստաշրջանի ընթացքում ընդունվեց «Ժողովրդավարական հաստատությունների գործունեությունը Հայաստանում» եսխՎ 1677 (2009) բանաձևը:**

### **Կատարված քայլերի առնչությամբ Վեհաժողովի գնահատականը**

- Վեհաժողովը ողջունել է ՀՀ քրեական օրենսգրքի 225 (զանգվածային անկարգություններ) և 300 (իշխանության բռնազավթում) հոդվածներում կատարված փոփոխությունները, որոնք «**Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի**» (Վենետիկի հանձնաժողով) կարծիքով ընդհանուր առմամբ նախորդ դրույթներից առավել դրական են, քանի որ դրանցով նվազեցվում է չափազանց լայն մեկնաբանությունների հնարավորությունը:
- Ողջունել է ՀՀ նախագահի ընդհանուր համաներման առաջարկը ԱԺ-ին և վերջինիս կողմից դրա ընդունումը: Սակայն մտահոգություն է հայտնել անազատության մեջ գտնվող այն անձանց վերաբերյալ, որոնք դատապարտվել են թերի հետաքննության հիման վրա: Այնուամենայնիվ, իշխանությունների կողմից իրականացված համաներումը և ամբողջական ու անկողմանակալ հետաքննություն անցկացնելու վերաբերյալ տրված հավաստիացումը, հստակորեն ուրվագծում են ՀՀ իշխանությունների կողմից քաղաքական ճգնաժամի հաղթահարման կամքի դրսևորումը:
- Ողջունել է Հեռուստատեսության և Ռադիոյի մասին օրենքի լրացումները, միաժամանակ մտահոգություն հայտնելով որոշ բացթողումների վերաբերյալ, մասնավորապես, հեռուստատեսության և ռադիոյի կոմիտեի անդամների նշանակման ձևաչափի կապակցությամբ:

Վեհաժողովը իր 1677 բանաձևով որոշեց, որ «մնացյալ պահանջների կատարումը Հայաստանի կողմից պետք է գնահատել Հայաստանի նկատմամբ Վեհաժողովի սովորական ընթացիկ մոնիտորինգի շրջանակներում» (հատուկ մոնիտորինգի փոխարեն, որն իրականացվում էր վերջին նախագահական ընտրություններից ի վեր):

### **Մնացյալ պահանջներ**

1. Վեհաժողովը ափսոսանք էր հայտնել մարտիմեկյան իրադարձություններին առնչվող փաստերը պարզելու նպատակով ստեղծված փաստահավաք խմբի աշխատանքների դադարեցման առնչությամբ և կոչ էր արել փաստահավաք խմբի անդամներին իրենց բացահայտումներն անհատական զեկույցների տեսքով ներկայացնել հանձնաժողովին, ինչպես նաև հրապարակել այդ համադրյալ բացահայտումները և եզրակացությունները՝ այնպես, ինչպես նախատեսված էր փաստահավաք խումբը ստեղծելու մասին ՀՀ նախագահի կարգադրությամբ: Ինչ վերաբերում է ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքների արդյունքին, ապա Վեհաժողովը նպատակադրվում է վերադառնալ դրա քննարկմանը հանձնաժողովի եզրակացությունների հրապարակումից հետո:

### **Կատարված քայլեր**

Փաստահավաք խմբի աշխատանքների դադարեցումը պայմանավորված էր խմբի անդամների միջև անհաղթահարելի լարվածությամբ և խմբի ներկայացուցիչների կողմից խմբի աշխատանքների քաղաքադականացմամբ:

2009թ. սեպտեմբերի 16-ի ԱԺ նիստի ընթացքում ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Նիկոյանը ներկայացրեց 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունները: Ըստ Նիկոյանի, հանձնաժողովի վերջնական զեկույցում տեղ են գտել թե փաստահավաք խմբի եզրակացությունները (այդ թվում խմբի նախկին անդամների անհատական զեկույցները), թե նախաքննական մարմնի

մեկնաբանությունները, և թե ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի եզրահանգումները:

2. Վեհաժողովը մտազուրկուն էր արտահայտել 10 մահվան դեպքերի առնչությամբ առ այն, որ հետաքննությունը ՀՀ գլխավոր դատախազի կողմից որևէ կոնկրետ արդյունքեր չի տվել և ողջունել էր ՀՀ նախագահի որոշումը՝ պահանջել գլխավոր դատախազից, որպեսզի վերջինս ամբողջական տեղեկատվություն ներկայացնի ՀՀ Ազգային ժողովի խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովին:

**Կատարված քայլեր**

Մահվան տասը դեպքերի առնչությամբ նախաքննական մարմնի մեկնաբանությունները ներկայացվել են ինչպես ԱԺ ժամանակավոր հանձնաժողովին, այնպես էլ վերոնշյալ դեպքերի առնչությամբ կատարված քննության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած բոլոր նյութերը 2009թ. հունիսին ԱԳՆ հայտագրով փոխանցվել են ԵԽ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ս. Ջեհեին:

3. Վեհաժողովը վերահաստատեց իր մտահոգությունը Ա1+ հեռուստաընկերության վերաբերյալ՝ նշելով, որ հեռուստահաղորդակցության թվայնացումը չպետք է խոչընդոտ հանդիսանա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Ա1+ վերաբերյալ ընդունված որոշման կատարմանը:

Գնահատելով Հայաստանի կատարած ջանքերը, Վեհաժողովը իր 1677 բանաձևով որոշեց, որ 2008թ. նախագահական ընտրություններից ի վեր Հայաստանի նկատմամբ իրականացվող հատուկ ուժեղացված մոնիտորինգը կփոխարինվի սովորական ընթացիկ մոնիտորինգով: Այսպիսով ԵԽԽԿ-ն արձանագրեց 2009թ. ընթացքում ժողովրդավարության առումով հայկական կողմի գրանցած առաջընթացը:

**ՀՀ 2008-2010 թվականների պետական բյուջեներով նախատեսված հիմնական ցուցանիշների վերաբերյալ**

	ՀՀ 2008թ. պետական բյուջե	ՀՀ 2009թ. պետական բյուջե	2009թ. պետական բյուջեով նախատեսված ցուցանիշների աճը 2008թ. նկատմամբ (%)	ՀՀ 2010թ. պետական բյուջե	2010թ. պետական բյուջեով նախատեսված ցուցանիշների աճը 2009թ. նկատմամբ (%)
ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափը (դրամ)	25,000	30,000	20.0	30,000	-
Նվազագույն սպառողական զաբյուղ, ամսական, դրամ (ըստ Կայուն զարգացման ծրագրի)	36,316	38,499	6.0	39,977	3.8
Աղքատության շեմ, ամսական, դրամ (ըստ Կայուն	24,492	25,964	6.0	26,961	3.8

Ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգում տեղամասային թերապևտների (մանկաբույժների) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը /դրամ/	77,000	77,000	-	77,000	-
<b>Սոցիալական պաշտպանություն, այդ թվում</b>					
Ընտանեկան նպաստի միջին ամսական չափը /դրամ/	21,089	23,350	10.7	23,350	-
Նպաստառու ընտանիքների երեխայի ծննդյան հետ կապված տրվող լրացուցիչ նպաստի չափը /դրամ/	35,000	50,000	42.9	50,000	-
Մինչև երկու տարեկան երեխա խնամող անձանց տրվող միջին ամսական նպաստի չափը /դրամ/	3,000	18,000	500.0	18,000	-
Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը (1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում) /դրամ/	35,000	50,000	42.9	50,000	-
Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը (3-րդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում) /դրամ/	300,000.0	430,000		430,000	-
Հայաստանի զոհված ազգային հերոսի ընտանիքներին նպաստ (դրամ)	200,000	250,000	25.0	250,000	-
Առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին նպաստ (դրամ)		150,000		150,000	-
Երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին նպաստ (դրամ)		100,000		100,000	-
Գործազրկության ամսական նպաստի չափը (դրամ)	15,000.0	18,000.0	20.0	18,000	-
Աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը (առանց թաղման նպաստի) /դրամ/	21,842	25,534.2	16.9	25,738.4	0.8
Հիմնական կենսաթոշակի չափը (դրամ)	6,800	8,000	17.6	8,000	-
Ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը (դրամ)	395.0	450.0	13.9	450.0	-

<b>Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն, այդ թվում</b>					
Մշակույթի ոլորտի աշխատող- ների միջին ամսական հաշվար- կային աշխատավարձը /դրամ/ այդ թվում`					
- գրադարանների աշխատող- ների	41,076.0	54,087.0	31.7	54,087.0	-
- թանգարանների աշխատող- ների	42,317.0	50,683.0	19.8	50,683.0	-
- մշակույթի տների աշխատող- ների	41,052.0	49,585.0	20.8	49,585.0	-
- թատերահամերգային կազմակերպությունների աշխատողների	38,411.0	45,730.0	19.1	45,730.0	-



**ՀԱՎԵԼՎԱԾ 4**  
**ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**  
**ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԵՏԱԿԱՆ -**  
**ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**  
**ՀԱՐՑՄԱՆԸ**

**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի**  
**պետական-իրավական հարցերի մշտական**  
**հանձնաժողովի նախագահ**  
**պարոն**

**Դ. Հարությունյանին**

*Հարգելի՛ պարոն Հարությունյան,*

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում շարունակվում է 2008թ. մարտի 1-ին իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու, 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ կազմակերպելու ու դրանց մասնակիցների կողմից բռնություն գործադրելու, ջարդ և հրկիզում իրականացնելու, գույք ոչնչացնելու և վնասելու, հրազեն, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր գործադրելու և իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրելու, 10 անձանց մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը:

Ձեր 2010թ. փետրվարի 2-ի գրությամբ հիշատակված փաստերի բացահայտման ուղղությամբ ձեռնարկվում են ինչպես քննչական, այնպես էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնք դեռևս դրական արդյունք չեն տվել:

*Հարգանքով՝*

***Արդարադատության երկրորդ դասի***  
***պետական խորհրդական՝ Ա. Գ. Սիրզոյան***

**ՀԱՎԵԼՎԱԾ 5**  
**ՔԱՂՎԱԾՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**  
**ԱՐՁԱՆԱԳՈՐԹՅՈՒՆՆԵՐ**

**ՔԱՂՎԱԾՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**  
**ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝**  
**2008թ. ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-2-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂՎԱԾՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ**  
**ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ**  
**ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ**  
**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ)**  
**ՆԻՍՏԻ**

25.03.2010թ.  
Ժ. 11. 00  
334 սենյակ

Քննարկելով ՀՀ կառավարությանն ուղղված 2010 թվականի փետրվարի 2-ի N 188 հարցման 1-12-րդ, 23-րդ և 30-րդ կետերում նշված՝ ՀՀ ոստիկանության բնագավառի առաջարկությունների կատարման ընթացքն Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝

1) Մշակել 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում և սույն արձանագրությունում ընդգրկված առաջարկություններից բխող՝ «Ոստիկանության մասին» և «Ոստիկանական զորքերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծեր (**ժամկետ՝ մինչև 1 ամիս**):

2) Համադրել ՀՀ ոստիկանության պետի «Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի զինծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» 2009թ. հոկտեմբերի 23-ի թիվ 5-Ն հրամանը «Ոստիկանության մասին» և «Ոստիկանական զորքերի մասին» ՀՀ օրենքների հետ, որպեսզի օրենքով կարգավորման ենթակա հարցերն ամրագրվեն նշված օրենքներում (**ժամկետ՝ մինչև 1 ամիս**):

3) Փշալար հատուկ միջոցն ավելացնել «Ոստիկանության մասին» և «Ոստիկանական զորքերի մասին» ՀՀ օրենքներով սահմանված հատուկ միջոցների տեսականիում (**ժամկետ՝ 1 ամիս**):

4) Հատուկ միջոցներին ներկայացվող հիմնական չափորոշիչները սահմանել օրենքով՝ դրանք նախապես ուղարկելով միջազգային փորձաքննության (**ժամկետ՝ մինչև 6 ամիս**):

5) Սույն արձանագրության 1-ին կետով նախատեսված փոփոխություններն ընդունվելուց հետո՝ **1 ամսյա ժամկետում** ՀՀ ոստիկանության և ոստիկանական

զորքերի հատուկ միջոցների ցանկերը սահմանել ՅՅ կառավարության որոշմամբ, իսկ հատուկ միջոցների կիրառման կարգերը՝ ՅՅ ոստիկանության պետի հրամանով:

**6)** ՅՅ ոստիկանության պետի հրամանով սահմանել հատուկ միջոցների պիտանելիության ժամկետները պարբերաբար ստուգելու կարգ **(ժամկետ՝ մինչև 2 ամիս):**

**7)** Սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչել ՅՅ գլխավոր դատախազի և ՅՅ ներքին գործերի նախարարի 1999թ. սեպտեմբերի 1-ի «Հանցագործությունների դեպքերի գրանցման և հաշվառման մասին» 12/354 համատեղ հրամանը՝ հանցագործությունների դեպքերի գրանցման և հաշվառման կարգը սահմանելով ՅՅ կառավարության որոշմամբ **(ժամկետ՝ մինչև 3 ամիս):**

**8)** Քաղաքացիների իրավունքների սահմանափակման հետ առնչվող իրավական ակտերը, այդ թվում՝ հատուկ միջոցների կիրառման կարգը նախապես քննարկել ՅՅ ոստիկանությանը կից գործող հասարակական խորհրդում:

**9)** Քննարկել ԵԱՀԿ «Ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց ձեռնարկում» ուժի և հատուկ միջոցների գործադրման սահմանափակումներին, ինչպես նաև մինչև ուժի գործադրումը բանակացություններ վարելուն վերաբերող դրույթները օրենսդրությամբ սահմանելու հարցի նպատակահարմարությունը և ներկայացնել առաջարկություն **(ժամկետ՝ մինչև 2 ամիս):**

**10)** Համադրել «Ոստիկանության մասին» և «Ոստիկանական զորքերի մասին» ՅՅ օրենքներում սահմանված հատուկ միջոցների տեսակները, դրանց կիրառելու դեպքերը և ներկայացնել առաջարկություն համարժեք կիրառելիության չափանիշներ սահմանելու վերաբերյալ **(ժամկետ՝ մինչև 15 օր):**

**11)** Ներկայացնել տեղեկատվություն էլեկտրահարող սարքեր և կայծային պարպիչներ հատուկ միջոցների առանձնահատկությունների վերաբերյալ **(ժամկետ՝ մինչև 15 օր):**

**12)** Ներկայացնել տեղեկանք ոստիկանության սպառազինությունից հանված հատուկ միջոցների ղնչացման մասին **(ժամկետ՝ մինչև 15 օր):**

**13)** Հատուկ միջոցների գործադրման ուղեցույցի մշակման համար սահմանել նոր ժամկետ՝ **2011 թվականի առաջին կիսամյակ:**

**14)** Ներկայացնել տեղեկատվություն մարտի 1-2-ի իրադարձությունների ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն գործադրելու վերաբերյալ հաղորդումների քվաքանակի և ՅՅ ոստիկանությունում դրանց հիման վրա կատարված ծառայողական քննության ընթացքի վերաբերյալ **(ժամկետ՝ մինչև 15 օր):**

**15)** Ներկայացնել տեղեկատվություն մարտի 1-2-ի իրադարձությունների ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն գործադրելու վերաբերյալ դատական քննության ընթացքում կատարված հայտարարությունների վերաբերյալ ՅՅ ոստիկանություն ուղարկված հաղորդումների թվաքանակի և ՅՅ ոստիկանությունում դրանց հիման վրա կատարված ծառայողական քննության ընթացքի վերաբերյալ **(ժամկետ՝ մինչև 15 օր):**

**16)** Ներկայացնել տեղեկատվություն ՅՅ ոստիկանության անձնակազմի՝ հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության կանոնների վերաբերյալ ուսումնական վարժանքների թեմաների, գրաֆիկի, ինչպես նաև այդ վարժանքներին պետական-իրավական հանձնաժողովի ներկայացուցիչների ներկայության հնարավորության մասին **(ժամկետ՝ մինչև 15 օր):**

**17)** Ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն «Զանգվածային միջոցառումների և ամբոխի կառավարման հրահանգիչների ուսուցում» թեմայով դասընթացի և Դեմսուս կազմակերպության վերաբերյալ **(ժամկետ՝ մինչև 30 օր):**

**18)** Ձանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցություններ վարող ծառայողների համար ուղեցույցների մշակման ու ներդրման համար սահմանել նոր ժամկետ` **2011 թվականի 1-ին կիսամյակ:**

**19)** Ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն զանգվածային միջոցառման կազմակերպիչների ու ոստիկանության միջև բանակցային և երկխոսության եզրեր հաստատող, ինչպես նաև լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման ուղղությամբ ոստիկանության ծառայողների ձեռք բերած փորձի գործնական կիրառման վերաբերյալ **(ժամկետ` մինչև 1 ամիս):**

**20)** Նախապատրաստվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիությունն ապահովելու նպատակով իրականացնել լրացուցիչ հրահանգավորում և ուսուցում:

**21)** ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառել հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության կանոնների, ինչպես նաև զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցությունների և լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման և դրանց ուղեցույցների վերաբերյալ ուսումնական թեմաներ և համապատասխան ժամաքանակներ **(ժամկետ` մինչև 1 ամիս):**

**22)** Ձանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության ծառայողների համազգեստի և անհատական պաշտպանության միջոցների վրա անհատականացման համարների տեղադրման աշխատանքներն իրականացնելիս քննարկել թվերի հետ միաժամանակ տառերի գործադրման, ինչպես նաև հատկապես համազգեստի վրա հեշտ հիշվող համարանիշերի տեղադրման նպատակահարմարության հարցերը **(ժամկետ` ծրագրի շրջանակում):**

**23)** Ներկայացնել մանրամասն տեղեկատվություն ոստիկանության համայնքային ծառայությունների բարեփոխման վերաբերյալ **(ժամկետ` մինչև 1 ամիս):**

**24)** Քննարկել կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում կաշառքի սադրանքի որոշ տեսակների թույլատրման և օրենսդրական կարգավորման հարցը, ինչպես նաև կաշառքի առաջարկների մասին իրավապահ մարմիններին հայտնելու դեպքում հայտարարողի պատասխանատվությունը մեղմացնելու կամ պատասխանատվությունից ազատելու նպատակահարմարության հարցերը և ներկայացնել առաջարկություններ **(ժամկետ` մինչև 2 ամիս):**

**25)** Ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունից բխող բարեփոխումների արդյունքում մշակված ուղեցույցերը տրամադրել հանձնաժողովին:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ` Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՎԵԼՎԱԾ 6**  
**ՔԱՂԱՎԾՔ ԶՅ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԻ**  
**ԱՐՁԱՆԱԳՈՐԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՔԱՂԱՎԾՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**  
**ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**  
**ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ**  
**ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**  
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝**

*2008թ. ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-2-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ*  
*ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ՝ ԶՅ ԱԶԳԱՅԻՆ*  
*ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ*  
*ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ)*

**Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Ն Ի Ս Տ Ի**

13.04.2010թ. ժ. 11. 00

334 սենյակ

Քննարկելով ՌԿ կառավարությանն ուղղված 2010 թվականի փետրվարի 2-ի N 188 հարցման 22-րդ, 24-րդ, 26-րդ, 27-րդ և 30-րդ կետերում նշված առաջարկությունների կատարման ընթացքն Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի, սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովները

**ՈՐՈՇՈՒՄ ԵՆ՝**

Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝

1) Սեղմ ժամկետներում ներկայացնել եզրակացություն Պ-113-04.09.2007 «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Հեղինակներ՝ Սամվել Նիկոյան, Կարեն Ավագյան) և Պ-114-05.09.2007 «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Հեղինակներ՝ Հրայր Կարապետյան, Արծվիկ Մինասյան, Ռուզաննա Առաքելյան, Արտյուշ Շահբազյան, Վահան Հովհաննեսյան, Արա Նռանյան, Արթուր Աղաբեկյան, Լիլիթ Գալստյան, Արմեն Ռուստամյան) ՌԿ օրենքների նախագծերի վերաբերյալ (**ժամկետ՝ մինչև 2 շաբաթ**):

2) Ձևավորել ՌԿ կառավարության մոտեցումը (**ժամկետ՝ մինչև 3 ամիս**) «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի փոփոխված հետևյալ տարբերակի վերաբերյալ՝

**«ՅՈՒՐԱԿԱՆ 5. ԿԵՆՍԱԱՊԱՀՈՒՄՆԱՆ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՉԱՄԲՅՈՒՂԻ**  
**ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Հայաստանի Հանրապետությունում կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը սահմանվում են օրենքով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի հաշվարկում և հաստատում է կենսաապահովման նվազագույն սպառողական

զամբյուղի արժեքը (բյուջեն)՝ հիմք ընդունելով նախորդ տարվա հուլիսի 1-ի դրությամբ կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը:

3. Մինչև սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված օրենքի ընդունումը կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր կողմից հաստատած մեթոդական հանձնարարականների հիման վրա: Նշված մեթոդական հանձնարարականների մշակման աշխատանքներին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կարող է մասնակցել Արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունը:»:

3) կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը, կառուցվածքը և կենսաապահովման նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը (բյուջեն) սահմանվելուց հետո համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելով կենսաապահովման նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի (բյուջեի) հետ փոխկապակցված սահմանել նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների, ինչպես նաև չհարկվող եկամտի չափերը:»:

4) Ընդունել ի գիտություն, որ կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը սահմանելու հարցը նպատակահարմար է չփոխկապակցել պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ներկայացման հետ:

5) Ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն ընտանեկան նպաստի համակարգի բարեփոխման քաղաքականության ուղղությունների վերաբերյալ, մասնավորապես՝ անդրադարձ կատարելով նախորդ տարներին սոցիալական նպաստների համակարգի բարեփոխումների արդյունավետությանը և Յորքի համալսարանի հետազոտություններին (կցվում է) **(ժամկետ՝ 3 ամիս)**:

6) Ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն ընտանեկան նպաստի ծրագրերի հասցեականության բարձրացման, վարչարարության բարելավման և բնակչության իրազեկման բարձրացման ուղղություններով ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ **(ժամկետ՝ մինչև 3 ամիս)**:

7) Ձևավորել ՀՀ կառավարության մոտեցումը ընտանեկան նպաստի համակարգին զուգահեռ՝ աղքատ ընտանիքներին ինքնուրույնաբար աղքատության հաղթահարմանն ուղղված գործողությունները խթանելու ծրագրերի ստեղծման և իրականացման նպատակահարմարության վերաբերյալ **(ժամկետ՝ մինչև 3 ամիս)**:

8) Ներկայացնել տեղեկատվություն գյուղատնտեսության աջակցության ծրագրերի, դրանց ծավալների և արդյունքների վերաբերյալ (ըստ մարզերի) **(ժամկետ՝ մինչև 3 ամիս)**:

9) ՀՀ կառավարությանն ուղղված 2010 թվականի փետրվարի 2-ի N 188 հարցման 24-րդ և 26-րդ կետերում ընդգրկված առաջարկությունների վերաբերյալ ներկայացնել համարժեք պատասխան **(ժամկետ՝ 3 շաբաթ)**:

10) Ներկայացնել տեղեկատվություն մասնավոր ներդրումների խրախուսման ծրագրերի առկայության և արդյունավետության, ինչպես նաև Հայաստանից դեպի այլ երկրներ կապիտալի տեղափոխման ծավալների և պատճառների առկա վերլուծությունների վերաբերյալ **(ժամկետ՝ մինչև 3 ամիս)**

11) Ներկայացնել տեղեկատվություն դատական համակարգի բարեփոխումների (այդ թվում՝ դատավորների աշխատավարձի բարձրացման) դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության վրա ազդեցության վերլուծությունների վերաբերյալ **(ժամկետ՝ մինչև 3 ամիս)**:

12) Ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն ՀՀ կառավարությանն ուղղված 2010 թվականի փետրվարի 2-ի N 188 հարցման 27-րդ կետում նշված սոցիալական

պատասխանատվության կորպորատիվ համակարգի ներդրման վերաբերյալ (ժամկետ՝  
մինչև 3 շաբաթ):

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐ՝

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

Յ. ՀԱԿՈԲՅԱՆ

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի՝ 2008 թվականի մարտի 1-2-ին երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջարկությունների կատարման ընթացքի մշտադիտարկման (մոնիթորինգի) նիստի արձանագրությունից բխող ՀՀ ոստիկանությանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ**

**Արձանագրության 1-ին կետով** նախատեսված առաջարկությանը համապատասխան նախապատրաստվել են «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (կցվում են):

**Արձանագրության 2-րդ կետով** նախատեսված առաջարկության վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի «Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի զինծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 5-Ն հրամանից ոստիկանության զորքերի զինծառայողների անհատական պաշտպանության միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցներ գործադրելու դեպքերի մասին վերադասության կարգով և դատախազին զեկուցելու /տեղեկացնելու/ հետ կապված հարաբերությունները կարգավորող դրույթներն ամրագրվել են «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում՝ զեկուցումների /տեղեկացումների/ նույն ընթացակարգը նախատեսելով նաև ֆիզիկական ուժի, հրազենի, մարտական տեխնիկայի գործադրման դեպքերի համար:

Օրենքով կարգավորման ենթակա այլ հարաբերություններ համադրման արդյունքում չեն պարզվել:

**Արձանագրության 3-րդ կետով** նախատեսված առաջարկության համաձայն «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով նախատեսված հատուկ միջոցների շարքը լրացվել է մարդկանց հարկադիր կանգնեցման (արգելափակման) միջոցներով, ինչն ընդգրկվել է «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում:

**Արձանագրության 4-րդ կետով** հատուկ միջոցներին ներկայացվող հիմնական չափորոշիչները օրենքով սահմանելու առաջարկության վերաբերյալ ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար է գտնում, որպեսզի մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների՝ կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանվեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից, ինչպես դա իրականացվել է էլեկտրահարող սարքերի և կայծային պարպիչների դեպքում: «Ձեռքի մասին» ՀՀ օրենքի համաձայն էլեկտրահարող սարքերի և կայծային պարպիչների ելակետային նորմերը հաստատում է ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման հանրապետական մարմինը, իսկ կիրառման համար թույլատրված չափանիշները սահմանում է առողջապահության հանրապետական մարմինը: Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների՝ կիրառման համար թույլատրելի չափանիշները ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանելու մասին դրույթը նախատեսվել է «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում:

**Արձանագրության 5-րդ և 6-րդ** նախատեսված առաջարկություններից բխող իրավաստեղծ աշխատանքներն իրականացնելու նպատակով ստորագրվել է ՀՀ ոստիկանության պետի «Իրավաստեղծ աշխատանքների հանձնաժողով ստեղծելու մասին» հրաման /կցվում է/, որի համաձայն ստեղծվող հանձնաժողովը նախապատրաստելու է ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների ցանկը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու, հատուկ միջոցների պիտանելիության ժամկետները պարբերաբար ստուգելու կարգերը հաստատող ՀՀ կառավարության

որոշումների և «Հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծերը:

**Արձանագրության 7-րդ կետով** նախատեսված առաջարկությանը համապատասխան նախապատրաստվում է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումները ընդունելու, գրանցելու և հաշվառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը կներկայացվի արձանագրությամբ նախատեսված ժամկետում:

**Արձանագրության 8-րդ կետով** նախատեսված առաջարկությունն ընդունվել է ի գիտություն:

**Արձանագրության 9-րդ կետով** նախատեսված առաջարկությանը համապատասխան ուսումնասիրվել է ԵԱՀԿ «Ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց-ձեռնարկը» (այսուհետ՝ ձեռնարկ), և «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով նախատեսված ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հիմքերը, պայմանները և սահմանները նախատեսող դրույթները համապատասխանեցվել են ուղեցույց-ձեռնարկով նախատեսված ուժի և հատուկ միջոցների գործադրման սահմանափակումներին: Նշված համապատասխանեցումները նախատեսող դրույթները, ինչպես նաև մինչև ուժի գործադրումը բանակցություններ վարելու և համոզելու հմտություններին տիրապետելու վերաբերյալ դրույթը նախատեսվել են «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում:

Մասնավորապես, ձեռնարկի 68-րդ կետի համաձայն՝ չնայած ուժի գործադրումը հաճախ պարտադիր է որոշակի ծառայությունների՝ հանցագործությունների կանխման կամ օրինախախտների կամ կասկածյալների օրինական ձերբակալման աջակցության ժամանակ, այդուհանդերձ ոստիկանության ծառայողները պետք է առաջնորդվեն այն սկզբունքով, որ *ուժի գործադրումը պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց, որը չպետք է կիրառվի կամայականորեն*, այլ պետք է համապատասխանի սպառնացող վտանգին՝ նվազեցնելով վնասն ու վնասվածքները, *և կիրառվի միայն օրինական նպատակին հասնելու պահանջվող չափով*: Նշված դրույթն ամրագրվել է «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում

լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում հետևյալ ձևակերպմամբ. «Ոստիկանության ծառայողները ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն կարող են գործադրել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում և այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իրենց պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել:»:

Ձեռնարկի 69-րդ կետի համաձայն՝ իրավապահ մարմինները չպետք է մարդկանց դեմ գործադրեն հրազեն կամ մահացու ուժ, բացառությամբ հետևյալ դեպքերի. օրինական կերպով «մահվան սպառնացող վտանգից կամ լուրջ վնասվածքից ինքնապաշտպանվելու կամ մյուսներին պաշտպանելու, *կյանքի համար լուրջ սպառնալիք հանդիսացող որոշակի հանցագործությունների կանխման գործողությունների, այսպիսի վտանգ ներկայացնող և ոստիկաններին դիմադրող անձի ձերբակալման կամ նրանց փախուստի կանխման* և նաև այն ժամանակ, երբ պակաս ծայրահեղ միջոցները բավարար չեն վերոնշյալ նպատակներին հասնելու համար: Նշված դրույթի տրամաբանությունից ելնելով «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվել է փոփոխություններ կատարել հրազենի գործադրման հիմքերում, մասնավորապես՝ փոփոխություն է նախատեսվել օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում, համաձայն որի ոստիկանության ծառայողներն իրավունք կունենան հրազեն գործադրել *կյանքի, առողջության, սեփականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության* կատարման կասկածանքով ձերբակալված, կալանքի կամ ազատազրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձերը հետ մղելիս, ի տարբերություն գործող դրույթի, որը ոստիկանության ծառայողին հրազեն գործադրելու իրավունք է տալիս *ցանկացած հանցագործության* կատարման կասկածանքով ձերբակալված, կալանքի կամ ազատազրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձերը հետ մղելիս: Նախագծով նաև ուժը կորցրած է ճանաչվել օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, որը ոստիկանության ծառայողին հնարավորություն է տալիս հրազեն գործադրել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար հետախուզվողի փախուստը խափանելիս:

Ձեռնարկի 71-րդ կետի համաձայն՝ իրավապահ մարմինները պետք է ապահովեն, որ հնարավորինս շուտ աջակցություն և բուժօգնություն տրամադրվեն վիրավոր կամ վնասվածքներ ստացած անձանց և որպեսզի *նրանց ազգականներն ու մտերիմները հնարավորինս շուտ տեղեկացվեն դեպքի մասին*: Նշված դրույթը նախատեսվել է «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 6-րդ կետում:

Ձեռնարկի 73-րդ կետի համաձայն՝ հրազենի կիրառման յուրաքանչյուր դեպքի համար պետք է անհապաղ կազմվի արձանագրություն և ներկայացվի համապատասխան օղակներին, իսկ 89-րդ կետի համաձայն՝ կառավարություններն ու իրավապահ մարմինները պետք է մշակեն հաշվետվությունների և ուսումնասիրության արդյունավետ ընթացակարգեր, այնպես, որ ամեն անգամ դրանք ակամայից գործի դրվեն, երբ ուժի գործադրման արդյունքում վնասվածք կամ մահացու դեպք է տեղի ունենում, կամ, երբ իրավապահ մարմինների կողմից հրազեն է կիրառվում: Վերոգրյալ դրույթներին համապատասխան «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերով նախատեսվել են լրացումներ և փոփոխություններ՝ հստակեցնելով ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման մասին զեկուցման ընթացակարգերը:

Ձեռնարկի 145-րդ կետի համաձայն՝ ոստիկանության բաժիններին պետք է տրամադրվեն հրազենի ոչ մահացու և պաշտպանական այլընտրանքային տարբերակներ, ինչպիսիք են ոչ մահացու, վնասազերծող զենքերը և *պասիվ պաշտպանական սարքերը, այդ թվում վահաններ, սաղավարտներ, փամփշտակայուն բաճկոններ և զրահապատ փոխադրամիջոցներ*: Նշված դրույթը նախատեսվել է «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածում:

**Արձանագրության 10-րդ կետով** նախատեսված առաջարկությանը համապատասխան համադրվել են «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով նախատեսված հատուկ միջոցների տեսակները, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հիմքերը, պայմանները և սահմանները, և «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ

կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով նախատեսվել են համարժեք կիրառելիությունն ապահովող լրացումներ և փոփոխություններ:

**Արձանագրության 11-րդ կետով** նախատեսված առաջարկության համաձայն ներկայացվում է էլեկտրահարող սարքեր և կայծային պարպիչներ հատուկ միջոցների առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկանքը (կցվում է):

**Արձանագրության 12-րդ կետերով** նախատեսված առաջարկության հետ կապված հայտնում ենք, որ իրականացվել է ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների տեխնիկական և որակական հատկանիշների ստուգում, ինչի արդյունքում ժամկետանց և տեխնիկապես օգտագործման համար ոչ պիտանի հատուկ միջոցները սպառազինությունից դուրս են գրվել, իսկ հատուկ միջոցների որոշ տեսակներ (այդ թվում՝ «Չերյոմուխա-7» տեսակի), ընդհանրապես հանվել են ոստիկանության սպառազինության ցանկից (ակտը կցվում է):

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանությունը ներկայումս հնարավորություն չունի ոչնչացնել սպառազինությունից հանված հատուկ միջոցները, քանի որ գազային պարունակությամբ նռնակ-փամփուշտները ոչնչացվում են հատուկ սարքավորումներով հագեցված լաբորատորիաներում: Խնդրին լուծում տալու նպատակով ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ ՊՆ Գլխավոր շտաբի պետին (գրությունը կցվում է):

**Արձանագրության 13-րդ կետերով** նախատեսված առաջարկությունն ընդունվել է: ՀՀ կառավարության 01.04.2010թ. նիստի որոշմամբ հավանության արժանացած ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի միջոցառումների 30.3 կետի (հատուկ միջոցների գործադրման ուղեցույցի մշակում) համար նոր ժամկետ է սահմանվել 2011թ. 1-ին կիսամյակը:

**Արձանագրության 14-րդ կետով** նախատեսված առաջարկության հետ կապված հայտնում ենք, որ 2008թ. մարտի 1-2-ի իրադարձությունների ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժ և բռնություն գործադրելու վերաբերյալ հաղորդումներ ՀՀ ոստիկանությունում չեն ստացվել:

**Արձանագրության 15-րդ կետով** նախատեսված առաջարկության հետ կապված հայտնում ենք, որ 2008թ. մարտի 1-2-ի իրադարձությունների ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական ուժ և

բռնություն գործադրելու վերաբերյալ դատական քննության ընթացքում կատարված հայտարարություններով ՀՀ ոստիկանություն հաղորդումներ չեն ներկայացվել:

**Արձանագրության 16-րդ կետով** նախատեսված առաջարկության հետ կապված ներկայացվում են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի ծառայողական պատրաստականության պարապմունքների ուսումնական պլանները, ինչպես նաև դրանց ընթացքում ուսումնասիրվող թեմաների ժողովածուն (կցվում է): Հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների և դրա հետ կապված մի շարք դրույթներ ներկայացված պլաններում կներառվեն նորմատիվ-իրավական բազայի ներկայումս իրականացվող կատարելագործումից հետո:

Միաժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանության նշված ստորաբաժանումում ուսումնական վարժանքները անցկացվում են յուրաքանչյուր երեքշաբթի օր, որոնց կարող են մասնակցել ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչները՝ հստակ ժամկետը նախապես համաձայնեցնելով ոստիկանության ղեկավարության հետ:

**Արձանագրության 17-րդ կետով** նախատեսված առաջարկության հետ կապված տեղեկատվությունը կից ներկայացվում է:

**Արձանագրության 18-րդ կետով** նախատեսված առաջարկությունն ընդունվել է: ՀՀ կառավարության 01.04.2010թ. նիստի որոշմամբ հավանության արժանացած ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի միջոցառումների 30.4 կետի (Ջանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի պահպանման ընթացքում բանակցություններ վարող ծառայողների համար ուղեցույցերի մշակում և ներդրում) համար նոր ժամկետ է սահմանվել 2011թ. 1-ին կիսամյակը:

**Արձանագրության 19-րդ կետով** նախատեսված առաջարկության հետ կապված հայտնում ենք, որ լրագրողների հետ շփվելու ուղղությամբ վերջին ժամանակահատվածում իրականացված աշխատանքները տվել են դրական արդյունք. չի արձանագրվել ոստիկանության ծառայողների կողմից լրագրողական գործունեությանը խոչընդոտելու ոչ մի դեպք, ինչ բերաբերում է զանգվածային միջոցառումների ընթացքում բանակցային և երկխոսության եզրեր հաստատող ծառայողների կողմից ձեռք բերված փորձի կիրառմանը, ապա չնայած նրան, որ գրեթե յուրաքանչյուր զանգվածային միջոցառման, և հատկապես երթի ընթացքում առաջացող խնդիրների շուրջ երկխոսության եզրեր են հաստատվում ոստիկանության

համապատասխան ծառայողների և միջոցառման կազմակերպիչների միջև, երկխոսության փորձի արդյունքները դեռևս բավարար չեն և կատարելագործման կարիք ունեն:

**Արձանագրության 20-րդ կետով** նախատեսված առաջարկության հետ կապված հայտնում ենք, որ ստորագրվել է ՀՀ ոստիկանության պետի «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիության պահպանումն ամրապնդելու ուղղությամբ լրացուցիչ ուսուցում կազմակերպելու մասին» ցուցում (կցվում է):

**Արձանագրության 21-րդ կետով** նախատեսված առաջարկության հետ կապված հայտնում ենք, որ ստորագրվել է ՀՀ ոստիկանության պետի «ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում լրացուցիչ թեմաներ ներառելու մասին» ցուցում (կցվում է):

**Արձանագրության 22-րդ կետով** նախատեսված առաջարկության հետ կապված հայտնում ենք, որ ստորագրման է ներկայացվել ՀՀ ոստիկանության պետի «Ձանգվածային միջոցառումների ընթացքում հասարակական կարգի պաշտպանության և հասարակական անվտանգության ապահովման խնդիրներ իրականացնող ոստիկանության ծառայողների և զինծառայողների անձի նույնականացումը կարգավորելու մասին» հրամանի նախագիծ (կցվում է):

**Արձանագրության 23-րդ կետով** նախատեսված առաջարկության հետ կապված հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնում իրականացվել է թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի փորձնական պիլոտային ծրագիրը, ինչի նպատակով բաժնի կառուցվածքում ստեղծվել է 2 հենակետ (նյութերը կցվում են): ՀՀ կառավարության 01.04.2010թ. նիստի որոշմամբ հավանության արժանացած ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի 5-րդ կետի (Թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրում) միջոցառումներով նախատեսվել է Երևան քաղաքի վարչության բոլոր տարածքային բաժինների կառուցվածքում ստեղծել ոստիկանության հենակետեր:

**Արձանագրության 24-րդ կետով** նախատեսված կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում կաշառքի սադրանքի որոշ տեսակների թույլատրմանը և օրենսդրական կարգավորմանը վերաբերող առաջարկությունը քննարկման փուլում է և առաջարկություններ կներկայացվեն արձանագրությամբ նախատեսված ժամկետում:

## **ՀՀ ՈՍՏԻ ԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

#### ***Էլեկտրահարող սարքեր և կայծային պարպիչներ հատուկ միջոցների առանձնահատկությունների վերաբերյալ***

«Ձեռքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն էլեկտրահարող սարքերը և կայծային պարպիչները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման հանրապետական գործադիր մարմնի պահանջներին և առողջապահության հանրապետական մարմնի սահմանած նորմերին համապատասխանող քաղաքացիական ինքնապաշտպանական զենք:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է որպես քաղաքացիական և ծառայողական զենք շրջանառության մեջ մտցնել ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման հանրապետական մարմնի պահանջներին չհամապատասխանող (հաստատված էլակետային նորմերը գերազանցող) չափանիշներով և առողջապահության հանրապետական մարմնի կողմից կիրառման համար թույլատրված չափանիշները գերազանցող էլեկտրահարող սարքեր և կայծային պարպիչներ:

«Ձեռքի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրահարող սարքերը, կայծային պարպիչները գրանցման ենթակա չեն, և Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում իրավունք ունեն ձեռք բերել առանց թույլտվության:

ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի թիվ 605-Ն որոշմամբ հաստատված քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 4-րդ կետի համաձայն՝ էլեկտրահարող սարքը քաղաքացիական զենք (պաշտպանական միջոց) է, որն օգտագործվում է որպես ինքնապաշտպանության ու անկանխատեսելի էլեկտրական հպումային միջոցների ներգործությունից պաշտպանման նպատակներով և որի գործողությունը հիմնված է էլեկտրական իմպուլսների առաջացման վրա:

Որպես էլեկտրահարող սարք կարող են կիրառվել համանման գործառույթներ ունեցող կայծային պարպիչները:

Կանոնակարգի 12-րդ կետի համաձայն՝ էլեկտրահարող սարքերի (կայծային պարպիչների) և պաշտպանական միջոցների անվտանգությունը բնութագրող էլեկտրական չափանիշների՝ ազդեցության միջին հզորության, էլեկտրոդների վրա

կայծային պարպման լարման, արդյունավետ ազդեցության ժամանակ պարամետրերի ամբողջության, նորմերը, ինչպես նաև մակնշմանը, փոխադրմանը, պահմանը ներկայացվող պահանջները և շահագործման պայմանները պետք է համապատասխանեն ԳՕՍՏ Ռ 50940 ստանդարտով սահմանված պահանջներին:

Կանոնակարգի 9-րդ գլխով սահմանված «Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկ»-ը նախատեսում է միայն էլեկտրահարող սարքերի ընդհանուր տեխնիկական պայմանները:

Այսինքն, վերոնշյալ իրավական ակտերով էլեկտրահարող սարքեր և կայծային պարպչներ հատուկ միջոցների առանձնահատկություններ /տարբերություններ/ նախատեսված չեն:

Գործնականում էլեկտրահարող սարքերը և կայծային պարպչները տարբերվում են իրենց չափերով, էներգետիկ պարամետրերով և սնուցման աղբյուրներով: Ներկայումս գործածության մեջ են ինչպես անմիջական /կոնտակտային/, այնպես էլ հեռահար ազդեցության էլեկտրահարող սարքերը: Հեռահար կամ տարածության վրա գործող էլեկտրահարող սարքերն իրենց հերթին լինում են լարային, որտեղ խոցող էլեկտրական լիցքը փոխանցվում է նշանակետին լարերի միջոցով, և գնդակային, որտեղ էլեկտրահարող տարր է հանդիսանում էլեկտրական փամփուշտը:

Էլեկտրահարող սարքերի (բացառությամբ՝ հեռահար գնդակային սարքերի) կառուցվածքի մեջ մտնում են էլեկտրական սնուցման աղբյուրը (մարտկոց), հոսանքի վերակազմավորման էլեկտրոնային բլոկը և բարձր լարման իմպուլսային սարքը:

Էլեկտրահարող սարքերի առանձնահատկություններն են՝

1. բարձր հուսալիությունը,
2. օպտիմալ էներգետիկայի ապահովումը,
3. քողարկման հնարավորությունը,
4. հարվածադիմացկուն իրանի առկայությունը,
5. որոշ սարքերում ուլտրաձայնային գեներատորի առկայությունը, որն ապահովում է շների և այլ կենդանիների վրա ազդեցությունը մինչև 10 մետր հեռավորության վրա:

Էլեկտրահարող սարքերը կարելի է օգտագործել ցանկացած եղանակային պայմաններում, այդ թվում նաև անձրևի ժամանակ:

Ի տարբերություն գազային զենքերի, էլեկտրահարող սարքերը կարելի է օգտագործել նաև փակ տարածքներում, օրինակ՝ վերելակում:

Էլեկտրահարող սարքերը օգտագործելու համար անհրաժեշտ է այն սեղմել հարձակվողի մարմնին և սեղմել կոճակը: Այն խոցում է նաև հագուստը (այդ թվում՝ բաճկոն, թիկնոց, վերարկու):

Էլեկտրահարող սարքերը թույլատրվում է օգտագործել միայն մարդու մարմնի մկանոտ հատվածների վրա /առավել արդյունավետ է ազդեցությունը ուսերի, ազդրերի և իրանի մկանոտ հատվածների վրա/: Արգելվում է օգտագործումը մարդու գլխի, պարանոցի և սրտի շրջանում:

Էլեկտրահարող սարքերը և կայծային պարպիչները դասվում են «մահ չպատճառող» զինատեսակների շարքին: Դրանց գործողությունը հիմնվում է էլեկտրականության լիցքը կենդանի նշանակետին անմիջականորեն հաղորդելու սկզբունքի վրա:

Էլեկտրահարող սարքերի և կայծային պարպիչների գործադրման առանձնահատկություններն են.

1. էլեկտրականության լիցքի ցավային ազդեցությունը,

2. հատուկ հաշվարկված հոսանքի հաճախականությունը, որը հանգեցնում է կիրառման հատվածի մկանային հյուսվածքների անոմալ կծկումների: Արդյունքում, մկանները կարծես ծախսում են իրենց սնուցող էներգիան և ժամանակավորապես կորցնում են շարժում կատարելու հնարավորությունը,

3. նյարդային համակարգի արգելակում, որի արդյունքում մկանները չեն կառավարվում ուղեղի կողմից և 1-3 վրկ. հետո էլեկտրահարման ենթարկված անձը չի կարողանում շարժել վերջույթները կամ կարող է կորցնել գիտակցությունը:

## **ՀՀ ՈՍՏԻ ԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ**

***2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած  
իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության` ՀՀ ԱԺ  
Ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջարկությունների  
կատարման ընթացքի վերաբերյալ***

1. Ստվերային տնտեսության կրճատման և եվրոպական երկրների միջինացված ցուցանիշներին համադրելի հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցության ապահովման առումով ՀՀ կառավարության 24.12.2009թ. N1523-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2010 թ. գերակա խնդիրների ծրագրով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համար 2010 թ. ընթացքում գերակա խնդիրներ են հանդիսանում մասնավորապես.

- հարկային եկամուտների հավաքագրման վրա ճգնաժամի բացասական ազդեցության նվազեցումը, որի լուծմանն ուղղված հիմնական քայլերից են խոշոր հարկ վճարողների մոտ հսկողության ուժեղացումը` ապահովելով հարկերի համարժեք հավաքագրելիությունը, ՓՄՁ-ների համար ,փափուկե հարկային վարչարարության կիրառումը, որի արդյունքում կբարձրանա հարկերի կամավոր վճարման մակարդակը, չկատարված հարկային պարտավորությունների աճի սահմանափակումը` կանխարգելելով նոր ապառքների կուտակման ռիսկերը,
- ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը (առաջին փուլ), այդ թվում` ստվերային շրջանառության նվազեցման նպատակով, որի լուծմանն ուղղված հիմնական քայլերից են ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի գործարկումը, հարկերից խուսափելու ռիսկերի բացահայտման նոր հսկողական գործիքների ներդրումը:

Ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված միջոցառումները ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից իրականացվում են ՀՀ կառավարության 07.08.2008թ. N941-Ն որոշմամբ հաստատված ,Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների (հարկային և մաքսային) վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագրի

շրջանակներում: Այդ միջոցառումների արդյունքներն ակնառու են 2010թ. առաջին չորս ամիսների տվյալներով: Այսպես, ՀՀ պետական բյուջեի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հավաքագրվող եկամուտների մակարդակը գերազանցել է ընթացիկ տարվա չորս ամիսների ծրագրային ցուցանիշը 22 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը՝ 37.5 մլրդ դրամով կամ 20.8 տոկոսով: Հարկ է նշել, որ 2010թ. առաջին չորս ամիսների հավաքագրվող եկամուտների մակարդակը գերազանցել է նույնիսկ 2008 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշները: Սա այն պարագայում, երբ ՀՀ օրենսդրությամբ հարկերի կամ պարտադիր վճարների դրույքաչափերի բարձրացում չի կատարվել:

Հարկային եկամուտների աճը պայմանավորված է ինչպես 2010 թ. առաջին եռամսյակի արդյունքներով գրանցված 5.5 տոկոս տնտեսական աճով, այնպես էլ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 2009-2010 թթ. իրականացված՝ ստվերային տնտեսության բացահայտմանն ուղղված վարչարարական միջոցառումներով: 2009-2010 թթ. ընթացքում հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողության քաղաքականության մեջ տեղի են ունեցել լուրջ տեղաշարժեր՝ իրագործելով հարկային վարչարարության բարեփոխումների 2008-2011 թթ. ծրագիրը: Հարկային մարմինը հսկողական աշխատանքներում առանձնահատուկ ուշադրություն է դարձնում կանխարգելիչ միջոցառումների և գործողությունների իրականացմանը, որոնք առաջին հերթին միտված են ստվերային տնտեսության կրճատմանը, հարկերի կամավոր վճարման սկզբունքի արմատավորմանն ու հարկային կարգապահության բարձրացմանը:

Այդուհանդերձ, գործող հարկային օրենսդրության պայմաններում տնտեսության 2009 թվականի համար հաշվարկված հարկային պոտենցիալը ՀՆԱ-ի մեջ գնահատվել է 28,9 տոկոս, մինչդեռ եվրոպական երկրների հարկային եկամուտներ/ՀՆԱ միջինացված ցուցանիշը կազմում է 39 տոկոս (եվրոպական երկրների հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշները կցվում են):

Ինչ վերաբերում է այս ցուցանիշի աստիճանական բարելավմանը, ապա այդ կապակցությամբ պետք է նշել, որ կառավարությունն իր բյուջետային ծրագրերում առաջնորդվում է վերջինիս բարելավման նպատակադրմամբ:

Միաժամանակ հայտնում են, որ համատեղ նիստում բարձրացված խնդիրները մշտապես գտնվում են նաև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի /Հանձնաժողով/ ուշադրության կենտրոնում: Ապրանքային շուկաների վերլուծության արդյունքում ի հայտ եկած ստվերի հնարավոր փաստերի վերաբերյալ (մեկ շնչին բաժին ընկնող ծավալների անարժանահավատությունը,

նախորդ շրջանի համեմատությամբ ապրանքային շուկայի ծավալների զգալի փոփոխություն և այլն) տվյալները տրամադրվել են ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտե և ՀՀ գլխավոր դատախազություն: Մասնավորապես, 2008-2010 թվականների ընթացքում ուսումնասիրված 75 ապրանքային շուկաներից 7 շուկաների ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև 3 վարչական վարույթների վերաբերյալ տեղեկանքները, տրամադրվել են Պետական եկամուտների կոմիտեին: Նշված վարույթներից մեկի արդյունքները տրամադրվել են նաև ՀՀ գլխավոր դատախազությանը, որի արդյունքում <Բրինձ> ապրանքային շուկայում Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա ձեռնարկված միջոցառումների արդյունքում վերականգնվել է պետական բյուջեից թաքցված 40.5 միլիոն դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի <Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին> թիվ 40-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 251-րդ կետի և գերակա խնդիրների ցանկի 86-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը 2009 թվականի դեկտեմբերին մշակել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծերը մշակելիս հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի <Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին> թիվ 1272-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի 78.2-րդ կետը, ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի նիստի թիվ 49 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Ազգային ժողովում ՀՀ վարչապետի ելույթից բխող միջոցառումների ցանկի 3.4.1 կետը, ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի 2009-2011թթ. 4.4.5 կետի <Մրցակցային քաղաքականություն> պարբերությամբ նախատեսված միջոցառումները: Նախագծերը ներկայումս համաձայնեցվում են շահագրգիռ մարմինների հետ:

Հայաստանի Հանրապետության մի շարք պետական մարմինների հետ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հանձնաժողովը կնքել է

համագործակցության հուշագրեր: Մասնավորապես, ելնելով էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի արդյունավետ կարգավորման, ոլորտում ազատ մրցակցության երաշխավորման, տնտեսվարող սուբյեկտների ու սպառողների շահերի պաշտպանության նկատառումներից, 2009 թվականի դեկտեմբերի 26-ին Հանձնաժողովի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև ստորագրվել է փոխհամագործակցության հուշագիր:

Պետական գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման, հնարավոր ու փաստացի հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման ու բացահայտման, վարչական վարույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև գնումների ընթացքում մրցակցությանն առնչվող այլ խնդիրների լուծման նպատակով Հանձնաժողովը և ՀՀ ֆինանսների նախարարությունը 2009 թվականի դեկտեմբերին համաձայնություն են կայացրել նշված ուղղություններով համագործակցելու վերաբերյալ:

2009 թվականի դեկտեմբերի 29-ին համագործակցության համաձայնագիր է կնքվել նաև Հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական բանկի միջև՝ երկկողմանի համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործնական առաջարկություններ նախապատրաստելու ու ներկայացնելու, ինչպես նաև մրցակցության պաշտպանության բնագավառում առկա խնդիրների կապակցությամբ համատեղ քննարկումներ ու խորհրդակցություններ կազմակերպելու և իրականացնելու նպատակով:

ՀՀ տարածքում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու, փոքր և միջին բիզնեսի համար տնտեսական մրցակցության պաշտպանության առավել բարենպաստ միջավայր ապահովելու, եվրոպական լավագույն փորձի հիման վրա ՀՀ դատարանների կողմից փոքր և միջին բիզնեսի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում տրամադրվող ծառայությունների որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Հանձնաժողովի, ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի և <BRAVE> իրավաբանական ընկերության միջև ստորագրվել է եռակողմ հուշագիր:

Միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումների ներդրման և կիրառման անհրաժեշտությունը կարևորելով՝ Հանձնաժողովն իր գործունեության մեջ առանձնակի տեղ է հատկացնում միջազգային կապերի ամրապնդմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության սերտացմանը: Այս

շրջանակներում աշխատանքները, մասնավորապես, ուղղվելու են ՀՀ հակամրցակցային համաձայնությունների իրավախախտումների բացահայտման գործընթացում հանդուրժողականության սկզբունքի (պատժամիջոցների մեղմման ծրագիր) ներդրմանն ու միջազգային փորձի կիրառմանը, Հանձնաժողովի կողմից ստուգումների իրականացման իրավասության ընդլայնմանը, պետական օժանդակության հետ կապված հարցերի կարգավորմանը, ոլորտին առնչվող իրավասու կարգավորող մարմինների և Հանձնաժողովի գործառույթների իրականացման հստակ մեխանիզմների սահմանմանը, ԵՄ մրցակցային օրենսդրական նորմերի ներդաշնակեցմանը, ինչպես նաև հանրության շրջանում մրցակցային հարցերով իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

2. Տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի աջակցության շրջանակներում Կառավարությունն առաջարկում է աննախադեպ գործիքներ: Մասնավորապես՝ զարգացման հեռանկար ունեցող և զբաղվածությանը նպաստող սահմանված չափորոշիչներին բավարարող ձեռնարկությունները հնարավորություն ունեն օգտվել մի շարք գործիքներից /բյուջետային վարկեր, երաշխիքներ, սուբսիդիաներ, կապիտալում մասնակցություն, տեխնիկական աջակցություն և այլն/: Ձեռնարկությունների և ծրագրերի ընտրության համար կիրառվում են մի շարք չափորոշիչներ, որոնցում գլխավոր դեր են կատարում արտահանման ուղղվածությունը, նորամուծական մոտեցումների կիրառումը, ինչպես նաև նոր ստեղծվող աշխատատեղերի քանակը: Մասնավոր հատվածի ներկայացրած բիզնես ծրագրերի քննարկման և աջակցության ձևաչափի որոշման համար ՀՀ վարչապետի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1016-Ա որոշմամբ ստեղծվել է Օպերատիվ շտաբ և աշխատանքային խումբ:

Այս ծրագրերի գերակշիռ մասն իրականացվել է <ՓՄՁ ներդրումներ> ունիվերսալ վարկային կազմակերպության և ՓՄՁ ՋԱԿ-ի միջոցով, որն իր որոշումները կայացնում է անկախ խորհրդատվական ընկերությունների և բանկերի հետ համագործակցելով: <ՓՄՁ ներդրումներ> ունիվերսալ վարկային կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ կառավարությանը կից գործող օպերատիվ շտաբի որոշմամբ՝ պայմանավորված ՓՄՁ-ների կողմից օպերատիվ շտաբին ֆինանսավորելու նպատակով ներկայացվող բիզնես ծրագրերի հոսքի աճով և դրանց հավակնոտ մասին մասնագիտական վերլուծության ենթարկելու և աջակցելու անհրաժեշտությամբ: Օպերատիվ շտաբը հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում քննարկում է փոքր ու միջին բիզնեսի աջակցության հարցեր: Շտաբի կողմից հավանության արժանացած բիզնես-նախագծերը փոխանցվում են ՈՒՎԿ-ին, ինչից հետո վերջինս մասնագիտական որոշում է կայացնում դրանց ֆինան-

սավորման վերաբերյալ (Մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ ՀՀ կառավարության ինտերնետային պաշտոնական կայք էջի <ժրագրեր> բաժնի <օպերատիվ շտաբ> ենթաբաժնում): Վարկային կազմակերպությունը ներկայումս կիրառում է ֆինանսավորման 2 գործիք՝ ուղղակի վարկավորում, որն իրականացվում է ռուսաստանյան կայունացման վարկի միջոցների հաշվին և կապիտալի ֆինանսավորում, որը վարկային կազմակերպությունն իրականացնում է իր սեփական ռեսուրսների հաշվին:

Կառավարությունը նախաձեռնել է նաև մի շարք խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացում, որոնք վերաբերում են ճանապարհային, հեռահաղորդակցման, էներգետիկ, արդյունաբերական, սոցիալական և այլ ենթակառույցների: Այս ծրագրերը, մեծամասամբ ուղղված են հետճգնաժամային փուլում աճի և զարգացման ապահովմանը և կարող են էապես նպաստել զբաղվածության պահպանմանը: Զարգացման այս երկարաժամկետ ծրագրերը նախատեսվում է իրականացնել միջազգային կառույցների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ՝ կիրառելով պետական-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) սկզբունքները: ՀՀ կառավարության կողմից 2009 թվականի հունվարի 29-ի թիվ 4 արձանագրային որոշման 20-րդ կետով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր հատվածների համագործակցության հայեցակարգը:

**Եվրոպական երկրների հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը<sup>130</sup>**

	<b>2008</b>	<b>2009</b>
Բելգիա	45.9	45.3
Գերմանիա	40.3	40.7
Հունաստան	33.5	32.1
Իսպանիա	34.2	32.1
Ֆրանսիա	44.7	43.2

<sup>130</sup> Eurostat, Government Finance Statistics, Summary Tables – 1/2010, 05/05/2010

Իտալիա	42.9	43.2
Կիպրոս	39	35.6
Լյուքսեմբուրգ	36.2	38.1
Հունգարիա	40.1	39.1
Նիդերլանդներ	39.3	38.8
Ավստրիա	44.1	43.8
Լեհաստան	34.2	31.6
Պորտուգալիա	37.4	35.9
Ֆինլանդիա	43.1	42.9
Շվեդիա	47.6	47.8
Միացյալ Թագավորություն	38.7	36.3
Իսլանդիա	36.7	34.2
Նորվեգիա	42.6	40.8